

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ  
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՁԵՒՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ)  
2022Թ. ԶԵԿՈՒՅՑ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>2</b>
<b>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ</b> .....	<b>5</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>7</b>
<b>1. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՉՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ</b> .....	<b>11</b>
1.1. ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող ընկերությունները և պետական մարմինները .....	11
1.2. ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող հարկերը և վճարները .....	13
1.3. Պետական մարմիններում և ընկերություններում հավաստիացման գործընթացը .....	15
<b>2. ԱՃԹՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ (ԲՇԽ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>19</b>
2.1. Կառավարության հանձնառությունը, ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, հակակոռուպցիոն քաղաքականությունը (պահանջ 1.1, 1.2, 1.3).....	19
2.2. Բազմաշահառու խումբ (պահանջ 1.4).....	20
2.3. Աշխատանքային ծրագիր (պահանջ 1.5) .....	21
<b>3. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՅ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ</b> .....	<b>24</b>
3.1. Իրավական դաշտը և ֆիսկալ ռեժիմը (պահանջ 2.1).....	24
3.1.1. Իրավական դաշտը և իրավական ակտերի նկարագրությունը.....	24
3.1.2. Հարկային համակարգ, հարկային և ոչ հարկային եկամուտների հոսքեր, հարկային դրույթաչափեր .....	27
3.1.3. Էական օրենսդրական փոփոխությունները հանքարդյունաբերության ոլորտում հաշվետու տարվա ընթացքում.....	32
3.1.4. Ընդերքօգտագործման ոլորտում իրավասություն ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և նրանց լիազորությունները .....	41
3.1.5 Պետության կողմից հանքարդյունաբերական ընկերություններին տրամադրվող արտոնություններ.....	42
<b>3.2. Թույլտվությունների տրամադրման, պայմանագրերի կնքման, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցմանն առնչվող կարգավորումները (պահանջ 2.2, 2.3, 2.4).....</b>	<b>42</b>
3.2.1. Պետական քաղաքականությունն ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակման ոլորտում .....	46
3.2.2. Ընդերքօգտագործման պայմանագրերում կատարված փոփոխություններ հաշվետու տարվա ընթացքում.....	49
3.2.3. Հետախուզման պայմանագրերի բացահայտում ըստ Էականության և գործնականության նկատառումների .....	51

<b>3.3. Իրական շահառուների բացահայտում և պետական մասնակցություն (պահանջ 2.5, 2.6, 4.2, 4.5).....</b>	<b>52</b>
3.3.1. Իրական շահառուների բացահայտմանը վերաբերվող իրավական կանոնակարգեր.....	52
3.3.2. Հանքարդյունաբերական ընկերություններում պետական մասնակցությունը .....	55
<b>3.4. Արդյունահանող արդյունաբերությանն առնչվող ազգային Էներգետիկ անցումային պարտավորությունների, քաղաքականության և պլանների վերաբերյալ ամփոփ ակնարկ (ԱՃԹՆ 2023 Ստանդարտի պահանջ 2.1).....</b>	<b>56</b>
<b>4. ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ .....</b>	<b>61</b>
<b>4.1. Հանքարդյունաբերության ոլորտի օգտակար հանածոների պաշարների հետախուզումը (պահանջ 3.1) .....</b>	<b>61</b>
<b>4.2. Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում արդյունահանումը և արտադրությունը (պահանջ 3.2).....</b>	<b>64</b>
<b>4.3. Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրացման ծավալները և արտահանումը (պահանջ 3.3 և 6.3) .....</b>	<b>74</b>
4.3.1. Արտահանումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում .....	74
4.3.2. Ներքին իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում .....	88
<b>4.4. Միջազգային գները հանքարդյունաբերության ոլորտում .....</b>	<b>90</b>
<b>5. ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻՑ ՍՍԱՑԱԾ ԵՎ ԱՍՈՒՏՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ.....</b>	<b>95</b>
<b>5.1. Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը պետական բյուջե (պահանջ 4.1 և 6.3).....</b>	<b>95</b>
<b>5.2. Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ (պահանջ 4.6) .....</b>	<b>99</b>
<b>5.3 Եկամուտների բաշխումը և ծախսերի կառավարումը (պահանջներ 5.1, 5.2, 5.3)</b>	<b>102</b>
<b>6. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱԿԱՄԱՆԱԿԱՆ ԲՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>110</b>
<b>6.1. Հանքարդյունաբերական ոլորտի դերը ՀՀ տնտեսության մեջ (պահանջ 6.3) ....</b>	<b>110</b>
<b>6.2. Ընկերությունների կողմից կատարվող սոցիալական և բնապահպանական ծախսումները (պահանջ 6.1) .....</b>	<b>124</b>
6.2.1. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված սոցիալ-տնտեսական զարգացման պարտավորություններ .....	129
6.2.2. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքներին կատարած նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումներ .....	130
6.2.3. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ .....	135
<b>6.3. Մետաղական արդյունահանման գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա(պահանջ 6.4).....</b>	<b>145</b>
<b>7. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ .....</b>	<b>155</b>
<b>7.1. Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և շրջանակները (պահանջ 4.1, 4.8)</b>	<b>155</b>
7.1.1. Համադրվող ընկերությունների ցանկի որոշում .....	156
7.1.2. Համադրվող եկամտային հոսքերի որոշում .....	160
7.1.3. Այլ ոչ հարկային վճարներ .....	165
7.1.4. Տվյալների հավաքագրում .....	166

7.1.5. Տվյալների ապաստանագրության մակարդակը (պահանջ 4.7).....	167
7.2. Տվյալների որակը և որակի ապահովումը (պահանջ 4.9).....	167
7.3. Համադրման գործընթացի նկարագրությունը և արդյունքները (պահանջ 4.1). 169	
<b>8. ԱՃԹՆ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>182</b>
8.1. ԱՃԹՆ նախորդ գեկույցներում ներկայացված առաջարկությունների ընթացիկ կարգավիճակ (պահանջ 7.4) .....	182
8.2. Առաջարկներ՝ տվյալների հավաքագրման առցանց համակարգի հետ կապված խնդիրների շտկման համար (պահանջ 7.2) .....	187
8.3. Առաջարկներ՝ հրապարակային հաշվետվությունների ձևաչափերի վերաբերյալ .....	188
8.4. Առաջարկներ Հայաստանում ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդրման վերաբերյալ (պահանջ 7.3) .....	191
8.5. Առաջարկներ՝ տվյալների համադրման այլընտրանքային մոտեցման վերաբերյալ (պահանջ 7.3) .....	191
8.6. Առաջընթացը պատասխանատու հանքարդյունաբերության ուղղությամբ.....	192
8.7. Պետական մասնակցություն .....	193
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....</b>	<b>194</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՇՎԵՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԶԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>195</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱՆ ԱՂՄԻՆԻՍՏՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>196</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՃԹՆ ՁԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ .....</b>	<b>197</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԱՃԹՆ ԲՇԽ ԿԱԶՄ .....</b>	<b>200</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՇՎԵՏՈՒ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ 2022թ. ՀԱՄԱՐ (ՀԱՇՎԱՐԿՎԱԾ) .....</b>	<b>203</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՇԳՐՏՈՒՄՆԵՐ 2022թ. ՀԱՄԱՐ .....</b>	<b>210</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՁԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՖԻԿԱՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ .....</b>	<b>218</b>

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱԱՀ</b>	Ավելացված արժեքի հարկ
<b>ԱՆ</b>	Արդարադատության նախարարություն
<b>ԱՃԹՆ</b>	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
<b>ԲԲԸ</b>	Բաց բաժնետիրական ընկերություն
<b>ԲԿԳ</b>	Բաց կառավարման գործընկերություն
<b>ԲՇԽ</b>	Բազմաշահառու խումբ
<b>ԵԱՏՄ</b>	Եվրասիական տնտեսական միություն
<b>ԵՏՄ</b>	Եվրոպական տնտեսական միություն
<b>ՇՄՆ</b>	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
<b>թմտ</b>	թաց մետրիկ տոննա
<b>չմտ</b>	չոր մետրիկ տոննա
<b>ՊԵԿ</b>	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
<b>ՀՆԱ</b>	Համախառն ներքին արդյունք
<b>ՀՎՀՀ</b>	Հարկ վճարողի հաշվառման համար
<b>ՇՄԱԳ</b>	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
<b>ՊՄԿ</b>	Պղնձամոլիբդենային կոմբինատ
<b>ՍՊԸ</b>	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
<b>ՏԻՄ</b>	Տեղական ինքնակառավարման մարմիններ
<b>ՏԿԵՆ</b>	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
<b>ՓԲԸ</b>	Փակ բաժնետիրական ընկերություն
<b>ՖՀՄՍ</b>	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ
<b>ԱՃԹՆ 2019 ՍՏԱՆԴԱՐՏ</b>	Ստանդարտ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) համաշխարհային Ստանդարտ է, որն ուղղված է արդյունահանման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը՝ ներառյալ նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների արդյունահանման ոլորտները: Ստանդարտի առաքելությունն է խթանել բնական ռեսուրսների բաց և հաշվետու կառավարումը՝ պահանջելով ընկերություններից և կառավարություններից բացահայտել բնական ռեսուրսների արդյունահանման գործունեությունից կատարված և ստացված վճարումները: ԱՃԹՆ-ի նպատակն է ստեղծել ավելի թափանցիկ և հաշվետու պետական և գործարար համակարգեր, ինչպես նաև խթանել հանրային երկխոսությունը՝ երաշխավորելով կողմերի միջև փոխըմբռնումը:

ԱՃԹՆ Ստանդարտն ընկերություններից պահանջում է բացահայտել կառավարություններին կատարված վճարումները, իսկ կառավարություններից՝ բացահայտել այդ վճարումներից ստացված մուտքերը: Այն նաև պարտավորեցնում է բացահայտել պայմանագրի պայմանները և իրական սեփականության մասին տեղեկությունները: Բացի այդ, ընկերությունները և կառավարությունները պետք է բացահայտեն արտադրության և արտահանման տվյալները, համադրեն ֆինանսական հոսքերը և մանրամասնեն, թե ինչպես են արդյունահանող ընկերություններից ստացված եկամուտները բաշխվում պետական բյուջեներում: Այս համապարփակ թափանցիկությունը նպատակ ունի խթանելու հաշվետվողականությունը և նվազեցնելու կոռուպցիան արդյունահանող ոլորտում: ԱՃԹՆ անդամ կարող են հանդիսանալ պետությունները: Անդամ երկրների քանակը 55 է:

Սույն զեկույցը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ 5-րդ ազգային զեկույցը, որի համար հաշվետու տարի է համարվում 2022 թվականը: Այն պատրաստվել է՝ առաջնորդվելով ԱՃԹՆ 2019թ. Ստանդարտով, հնարավորության դեպքում նաև՝ հաշվի առնելով 2023թ. հունիսին հրապարակված ԱՃԹՆ-ի Ստանդարտի<sup>1</sup> նոր պահանջները:

Զեկույցը նպատակ ունի ներկայացնելու հաշվետու տարում ոլորտում իրականացված աշխատանքների ամփոփ պատկերը և ընթացիկ տվյալները՝ ապահովելով դրանց համապատասխանությունն ԱՃԹՆ Ստանդարտին:

### ԱՃԹՆ-ի գործընթացը Հայաստանում

Հայաստանում ԱՃԹՆ-ին անդամակցելու գործընթացը մեկնարկել է 2015թ. հուլիսին, իսկ 2017թ. մարտի 9-ին, Բոգոտայում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի նիստի ընթացքում, պաշտոնապես հաստատվել է երկրի անդամակցությունը:<sup>2</sup>

Համաձայն ԱՃԹՆ-ի կանոնների՝ անդամակցող յուրաքանչյուր երկիր, ԱՃԹՆ-ի թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում և երեք տարին մեկ անգամ, պետք է անցնի վավերացման գործընթաց: Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման արդյունքներն ամրագրվել են երկրի՝ ԱՃԹՆ-ի ներդրման առաջընթացը գնահատող արդեն երկու վավերացման գնահատականներով:

Այսպես, Հայաստանի 1-ին վավերացման գործընթացը մեկնարկել է 2019թ. սեպտեմբերին, որի ավարտական եզրակացություններն ամրագրվել են ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի կողմից 2020թ. հուլիսի 9-ին ընդունված որոշման մեջ, համաձայն որի՝ Հայաստանի առաջին վավերացման արդյունքում Հայաստանն ամենաբարձր՝ «բավարարող» առաջընթաց է գրանցել ԱՃԹՆ-ի 2016թ. Ստանդարտի իրականացման գործում: Այդպիսով, Հայաստանը դարձել էր ԱՃԹՆ-ի անդամ 53

<sup>1</sup> <https://eiti.org/eiti-standard>

<sup>2</sup> <https://eiti.org/document/36th-board-meeting-agenda-minutes>

երկրներից 9-րդը, որին շնորհվել էր «բավարարող» առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ: Ընդ որում, 1-ին վավերացման գնահատականով՝ Հայաստանը Ստանդարտի 21 պահանջների գծով գրանցել էր բարձր՝ «բավարարող» առաջընթաց, իսկ 4-ի մասով՝ «գերազանցող» գնահատական<sup>3</sup>:

Բացի դրանից, ԱՃԹՆ-ի 2019թ. Ստանդարտի 2.5-րդ՝ «Իրական շահառուների բացահայտման» պահանջի առանձին վավերացման մասով ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը 2021թ. հունիսի 10-ին ընդունել է որոշում<sup>4</sup> առ այն, որ Հայաստանը «բավարարող» առաջընթաց է արձանագրել նաև ԱՃԹՆ Ստանդարտի այդ պահանջի առումով:

Հայաստանի ԱՃԹՆ-ի երկրորդ վավերացումը գնահատման նոր մոդելով մեկնարկել է 2023թ. հուլիսի 1-ին, որի արդյունքներով ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդի որոշմամբ<sup>5</sup> 2024թ. ապրիլի 4-ին Հայաստանին տրվել է բարձր՝ 89.5 միավոր, որն առայժմ ԱՃԹՆ-ի միջազգային համայքում ստացված ամենաբարձր գնահատականն է: Համաձայն այս գնահատականի՝ Հայաստանը «լիովին բավարարել» էր ԱՃԹՆ Ստանդարտի պահանջներից 24-ը, «գերազանցել» էր մեկը՝ «Իրական սեփականությանը» վերաբերվող 2.5-րդ պահանջը, «գրեթե բավարարել» էր երկու պահանջ՝ «Տվյալների որակին» վերաբերվող պահանջ 4.9-ը և «Սոցիալական և բնապահպանական ծախսերին» վերաբերվող պահանջ 6.1-ը:

Որպես հիմնական ձեռքբերումներ երկրորդ վավերացման զեկույցում<sup>6</sup> նշվել է հետևյալը.

1. «Չնայած աշխարհաքաղաքական լայն մարտահրավերներին և ԿՈՎԻԴ-19 համաճարակի ունեցած ազդեցությանը՝ Հայաստանը հավատարիմ է մնացել ԱՃԹՆ-ի նկատմամբ իր հանձնառությանը և ակտիվ աշխատանք է տարել՝ ապահովելու Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի հիմնական գործողությունների իրականացումը: Պլանավորված գործողությունների մեծ մասն իրականացվել է, իսկ շահառուների հանձնառությունը՝ պահպանվել:
2. Հայաստանը շարունակել է հետևողական առաջընթաց գրանցել մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալների բացահայտման հարցում և շարունակական ջանքեր գործադրել՝ ամրապնդելու համապատասխան տվյալների համակարգված բացահայտումը: Որոշ տեղեկություններ, ինչպիսիք են հանքարդյունաբերության թույլտվությունները և իրական սեփականության տվյալները, արդեն իսկ համակարգված բացահայտվում են պետական պորտալների միջոցով: Ավելին, Հայաստանի ԱՃԹՆ-ի հաշվետվությունների պորտալը (<https://reports.eiti.am>) տրամադրում է ֆինանսական տվյալներ և ոլորտային հիմնական ցուցանիշները:
3. Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդման նպատակով համապատասխան օրենսդրության փոփոխման ուղղությամբ շարունակական առաջընթաց է արձանագրվել: Հասանելի փաստաթղթերում և շահառուների հետ խորհրդատվությունների արդյունքում վերհանվել է նման բարեփոխումների մի քանի օրինակ, մասնավորապես՝ կապված իրական շահառուների թափանցիկության, բնապահպանական հարկերի և ոռոգիչների բաշխման հետ:»

<sup>3</sup> <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/07/16/eiti-validation-armenia-arm/88/>

<sup>4</sup> <https://eiti.org/board-decision/2021-32>

<sup>5</sup> <https://eiti.org/board-decision/2024-25>

<sup>6</sup> <https://eiti.org/sites/default/files/2024-03/EN%20-%20Armenia%20-%20final%20Validation%20report%20%282023%29.pdf>



Ձեկույցում<sup>7</sup> ներկայացված Ստանդարտի պահանջների բավարարմանն ուղղված ուղղիչ գործողությունները հետևյալն են.

1. Ստանդարտի 4.9 պահանջի գծով. Հայաստանը պետք է ներկայացնի հաշվետվություն, որում կբացահայտվի, որ տվյալների հավաքագրման գործընթացում չեն հայտնաբերվել տարրեր, որոնք կվիճարկեն ֆինանսական տվյալների համապարփակությունն ու հավաստիությունը:
2. Ստանդարտի 6.1 պահանջի գծով. Պետք է մատնանշվեն պարտադիր սոցիալական ծախսերը՝ կառավարման օղակ չհանդիսացող բոլոր շահառուների համար: Այդ նպատակով Հայաստանի իշխանությունները պետք է համագործակցեն պետական մարմինների և արդյունահանող ընկերությունների հետ՝ ապահովելով սոցիալական ծախսերի և բնապահպանական վճարների հրապարակումը:

---

<sup>7</sup> <https://eiti.org/sites/default/files/2024-03/EN%20-%20Armenia%20-%20final%20Validation%20report%20%282023%29.pdf>

1. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ  
ԿԱԶՄՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

# 1. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՁՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

ՀՀ ԱՃԹՆ-ի հինգերորդ զեկույցի շրջանակը սահմանվել է 2024թ մարտի 28-ին կայացած ԲՇԽ-ի որոշմամբ<sup>8</sup>, որը վերահաստատել է նախաձեռնության շրջանակում մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողների հաշվետվություն ներկայացնելու պահանջը 2022թ. ֆինանսական տարվա ընթացքում՝ բացառությամբ սնանկ ճանաչվածների:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն «Գրանթ Թորնթոն Քնսայթինգ» ՓԲԸ-ի հետ համատեղ («Անկախ ադմինիստրատորը») պատրաստել է այս զեկույցն Անկախ ադմինիստրատորի համար կազմված տեխնիկական առաջադրանքի հիման վրա: Մասնավորապես՝ առաջադրանքի համաձայն Անկախ ադմինիստրատորը համադրել է պետության և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հրապարակված էական եկամտային հոսքերը:

Կառավարության և ընկերությունների կողմից հաշվետվություններում հրապարակված եկամտային հոսքերը ներկայացված են հաշվեգրման սկզբունքով, բացառությամբ վարձավճարների, սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող պարտավորությունների վճարների, ինչպես նաև պղնձի, մոլիբդենի խտահանքերի և մոլիբդենի արտահանման յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ (թույլտվություններ) կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի, որոնք ներկայացվել են դրամարկղային սկզբունքով:

Ըստ հաշվեգրման սկզբունքի՝ եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են այն պահին, երբ դրանք ծագում են՝ անկախ այն բանից, թե երբ են դրամական միջոցները ֆիզիկապես ստացվում կամ վճարվում, այնինչ դրամարկղային մեթոդը ենթադրում է, որ ճանաչումը տեղի է ունենում կանխիկ միջոցների ստացման կամ վճարման պահին:

## 1.1. ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող ընկերությունները և պետական մարմինները

Համաձայն ԲՇԽ-ի որոշման՝ 2023թ. օգոստոսի 1-ի դրությամբ դադարեցված ընդերքօգտագործման թույլտվությամբ ընկերությունների համար հրապարակային հաշվետվությունները կներկայացվեն միակողմանի՝ միայն հաշվետու պետական մարմինների կողմից, քանի որ օրենքի համաձայն այդ ընկերություններն այլևս չեն համարվել ընդերքօգտագործող, հետևաբար հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն չեն ունեցել:

Համաձայն ՀՀ կառավարության 08.06.2018թ. N 666-Ն որոշման<sup>9</sup>՝ մինչև 2023թ. թվականի օգոստոսի 1-ը պետական մարմինները՝ Պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը և համայնքները (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով), և 2023թ. օգոստոսի 1-ի դրությամբ մետաղական օգտակար հանածոյի

<sup>8</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

<sup>9</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=132674>

արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները, բացառությամբ սնանկ ճանաչվածների, պարտավոր են ներկայացնել հրապարակային հաշվետվություններ հաշվետու՝ 2022 տարվա համար<sup>10</sup>:

### Աղյուսակ 1.1.1

2022թ. զեկույցի համար հաշվետու համարված 24 ընդերքօգտագործող ընկերություններն են.

Հ/Հ	Ընդերքօգտագործող ընկերության անվանում	Գրանցման համար	ՀՎՀՀ	Պայմանագրի համար և կնքման ամսաթիվ
1	«Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ	286.110.07682	02709666	ՊՎ-057 (22.08.2012)
2	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	286.120.58034	04219371	089 (12.06.2012)
3	«Սագամար» ՓԲԸ	278.120.03167	00410036	ՊՎ-093 (20.10.2012)
4	«Լեո-Էքս» ՍՊԸ	27.110.00893	09412188	ՊՎ-094 (16.08.2012)
5	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	96.120.00632	06602309	ՊՎ-103 (20.10.2012)
6	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	39.110.01312	02806526	ՊՎ-169 (20.10.2012)
7	Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)	27.120.01216	09416902	ՊՎ-183 (27.11.2012)
8	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	77.110.00610	04213127	ՊՎ-184 (28.12.2012)
9	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	273.110.02424	01530525	ՊՎ-189 (20.10.2012)
10	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	42.110.01460	03516447	ՊՎ-213 (20.10.2012)
11	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	27.140.00009	09400818	ՊՎ-232 (27.11.2012)
12	«Վարդանի Ջարթոնքը» ՍՊԸ	79.110.00234	09414399	ՊՎ-239 (27.09.2012)
13	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	264.120.07314	00091919	ՊՎ-245 (26.09.2012)
14	«Լիճքվազ» ՓԲԸ	286.120.07744	02710054	ՊՎ-293 (22.11.2012)
15	«Ագարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	79.140.00036	09700039	ՊՎ-311 05.04.2013
16	«Ասսաթ» ՍՊԸ	77.110.00569	03807664	ՊՎ-366 (06.06.2013)
17	«Վայք Գոլդ» ՍՊԸ	264.110.111245	00114369	Պ-371 (30.11.2012)
18	«Թեղուտ» ՓԲԸ	286.120.06078	02700773	ՊՎ-376 (20.02.2013)
19	«Մարջան Մայնինգ Քոմբինի» ՍՊԸ	273.110.05412	01569837	ՊՎ-398 (07.03.2013)

<sup>10</sup> Երկու ընկերություն՝ «Մարջան Մայնինգ Քոմբինի» և «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ, 2023թ. հաղթել են դատական գործերը և այդ հիմքով՝ վերկանգնվել ՏԿԵՆ-ի կողմից վարվող գործող լիցենզիաների (թույլտվությունների) ռեգիստրում:

20	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	273.110.03365	01544838	ՊՎ-425 (28.12.2012)
21	«Ատ-Մետալս» ՍՊԸ	271.110.738775	00118721	Պ-514 (16.01.2015)
22	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	282.110.06759	00870494	Պ-515 (22.08.2014)
23	«Գեղի Գօլդ» ՍՊԸ	72.110.121815	09423012	Պ-544 (22.07.2016)
24	«Ուրագույաններ» ՓԲԸ	286.120.929505	02583292	Պ-547(25.10.2016)

Աղբյուրը. ԲՇԽ 2024թ մարտի 28-ին որոշում<sup>11</sup>

ԲՇԽ-ի որոշմամբ վերահաստատվել են նաև հրապարակային հաշվետվություն ներկայացնող պետական մարմինները, որոնք են.

- Պետական եկամուտների կոմիտեն,
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը,
- Համայնքները, որոնց հաշվետվություններն ԱՃԹՆ առցանց հաշվետվությունների համակարգում (<https://reports.eiti.am/>) մուտքագրվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով:

Բազմաշահառու խմբի որոշմամբ՝ 2022 ֆինանսական տարում համադրվող ընկերություններ են համարվում այն ընկերությունները, որոնք ՀՀ պետական բյուջե են վճարել 150 միլիոն դրամին համարժեք կամ գերազանցող գումար՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար հարկերի և վճարների տեսքով: Սույն սկզբունքը կիրառվել է նաև նախորդ բոլոր զեկույցների՝ 2016-2021թթ. ֆինանսական հոսքերի տվյալները համադրելիս:

## 1.2. ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող հարկերը և վճարները

Համաձայն ԲՇԽ-ի որոշման՝ ԱՃԹՆ 2022թ. զեկույցում ներառվել են ընդերքօգտագործող ընկերությունների և պետական մարմինների կողմից հրապարակային հաշվետվություններում ներկայացված հետևյալ հարկերն ու վճարումները.

### Ընկերություններ և Պետական եկամուտների կոմիտե

- Շահութահարկ,
- Եկամտային հարկ,
- Ավելացված արժեքի հարկ,
- Ակցիզային հարկ,
- Ռոյալթի,
- Բնօգտագործման վճարներ,
- Բնապահպանական հարկեր,
- Մաքսային տուրքեր և վճարներ,
- Ազնիվ, սև, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք,
- Զրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք,

<sup>11</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

- ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրք<sup>12</sup>,
- ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրք,
- ԱՏԳ ԱԱ դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրք:

### Ընկերություններ և Շրջակա միջավայրի նախարարություն

- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում,
- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը,
- Մշտադիտարկումների իրականացման վճարներ,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման տուրք,
- Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից նշանակված տույժեր և տուգանքներ:

### Ընկերություններ և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (համայնքներ)

- Անշարժ գույքի հարկ,
- Փոխադրամիջոցների գույքահարկ,
- Հողի ձեռքբերում,
- Հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարում,
- ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար,
- Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները:

### Միակողմանի՝ միայն ընկերությունները, տրամադրում են տվյալներ հետևյալ ֆինանսական հոսքերի համար.

- Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարված բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները,
- Ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ըստ կազմակերպությունների),
- Ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ընդհանուր գումարը և ֆիզիկական անձանց թիվը):

Համաձայն ԲՇԽ-ի որոշման՝ պայմանավորված տվյալների տարբերությունների նվազման դրական դինամիկայով և դրանց ոչ էական բնույթով, ինչն արդյունք է պետական մարմինների և ընկերությունների հաշվետվությունների պատշաճ լրացման հմտությունների բարելավման և մեխանիկական սխալների նվազման, ինչպես նաև հաշվի առնելով զեկույցների կազմման

<sup>12</sup> Նշված 3 տուրքերը վերաբերելի են միայն 2022 հաշվետու տարվան, սակայն ընկերությունների և պետական մարմինների՝ մասնավորապես ՊԵԿ-ի կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի մեջ տուրքերի վերաբերյալ առկա չէ համապատասխան դաշտ: Անկապ ադմինիստրատորի կողմից նշված 3 տուրքերի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է լրացուցիչ գրավոր հարցման միջոցով:

Ֆինանսական արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից առաջարկված «ճկուն հաշվետվողականության» սկզբունքները, 2022թ. Ֆինանսական տարվա համար համադրման ենթակա կլինեն արդյունահանման ոլորտի հետ ուղղակիորեն կապված և մեխանիկական սխալների ռիսկի առումով առավել ռիսկային հետևյալ 5 եկամտային հոսքերը:

#### Վճարումներ Պետական եկամուտների կոմիտե

- Ռոյալթի,
- Եկամտային հարկ,
- Ավելացված արժեքի հարկ,
- Մաքսատուրք, մաքսավճար:

#### Վճարումներ ՀՀ համայնքներին

- ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար:

ԲՇԽ որոշման համաձայն՝ անկախ ադմինիստրատորը կքննի ֆինանսական հոսքերի վերաբերյալ տվյալների տարբերությունը, եթե երկուստեք ներկայացված հաշվետվություններում անհամապատասխանությունը կազմում է տվյալ ցուցանիշի 4%-ը կամ ավելին, բայց ոչ պակաս, քան 1 միլիոն ՀՀ դրամ: Նշված հաշվարկի համար հիմք է հանդիսանում այն կողմի ներկայացրած տվյալը, որն ավելի փոքր է: Սույն սկզբունքը կիրառվել է նաև նախորդ զեկույցի՝ 2020-2021թթ. ֆինանսական հոսքերի տվյալները համադրելիս:

### 1.3. Պետական մարմիններում և ընկերություններում հավաստիացման գործընթացը

Ընդերքօգտագործող ընկերությունների և պետական մարմինների կողմից տրամադրվող տվյալների հավաստիությունը երաշխավորվում է տվյալ ընկերությունների և պետական մարմինների ղեկավարների, ինչպես նաև ընկերությունների տնօրենների կամ գլխավոր հաշվապահների էլեկտրոնային ստորագրությամբ՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ սահմանված կարգի<sup>13</sup>: Այս մոտեցումը, նախորդ տարիների պես, ամրագրված է Հայաստանի ԲՇԽ-ի կողմից 2022թ.-ի ԱՃԹՆ-ի 5-րդ Զեկույցը կազմելու համար ընդունված որոշման<sup>14</sup> մեջ՝ «Հաշվետվություններում ներկայացվող տվյալների հուսալիությունն ու ճշգրտությունն հավաստիացնելու նպատակով հրապարակային հաշվետվությունները պետք է վավերացվեն ընկերության ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի և պետական ղեկավարի կամ իր տեղակալի էլեկտրոնային ստորագրությամբ: Հաշվետվությունները ստորագրողներ են հանդիսանում՝

1. պետական կառավարման մարմնի ղեկավարը և (կամ) տեղակալը
2. մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող ընկերության ղեկավարը կամ գլխավոր հաշվապահը:

Նման մոտեցման համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ համաձայն ՀՀ օրենսդրության՝ վերը նշված անձինք համապատասխան պատասխանատվություն են կրում նաև հարկային վերահսկողության գործընթացի նպատակով Պետական եկամուտների կոմիտեին հարկային հաշվետվություններ ներկայացնելու համար, ինչը նույնպես երաշխավորում է Անկախ

<sup>13</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132674>

<sup>14</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

ադմինիստրատորին տրամադրած տվյալների ճշտությունը և իրավական հենքին համապատասխանությունը:

Ուստի, Անկախ Ադմինիստրատորը իրականացվում է միայն երկկողմանի բացահայտվող ֆինանսական հոսքերի համադրման գործընթաց, որն իրենից ներկայացնում է անհամապատասխանությունների քննում և դրանց վերացմանն ուղղված աշխատանքներ: Անհամապատասխանությունների քննումն իր հերթին ենթադրում է տրամադրված եկամտային հոսքի համաձայնեցում ընկերության և պետական մարմնի միջև:

Ստուգման այս գործընթացն իրենից չի ենթադրում աուդիտ կամ աուդիտորական եզրակացության տրամադրում միջազգային Ստանդարտներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում Անկախ Ադմինիստրատորը հաշվետու ընկերություններից և պետական մարմիններից կատարել է հարցումներ, ձեռք է բերել հիմնավորող տեղեկատվություն և փաստաթղթեր՝ հավաստելու, որ տրամադրված տեղեկությունը ճշգրիտ է և ամբողջական: Կատարված հարցումների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Հավելված 2-ում:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ չի պահանջվում ընդերքօգտագործող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտ: 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել 2019թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Սույն օրենքներով սահմանվել են ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների չափանիշները: Չափանիշներից են, ի թիվս այլոց, ընկերությունների ֆինանսական ցուցանիշները, մասնավորապես ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը, գործունեությունից հասույթը և աշխատողների միջին տարեկան թիվը: Եթե այս ցուցանիշներից երկուսին ընկերությունը բավարարում է, ապա վերջինիս ֆինանսական հաշվետվությունները ենթակա են աուդիտի:

Ընկերությունների կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվությունների առկա ձևաչափը՝ լրացման ենթակա դաշտերը, ամբողջական տեղեղեկատվություն չեն տրամադրում՝ եզրակացնելու արդյոք տվյալ ընկերության ֆինանսական հաշվետվությունները ենթակա են արտաքին աուդիտի հաշվետու տարվա համար: Այսպիսով՝ որոշ ընդերքօգտագործող ընկերությունների 2023թ. և հետագա տարիների ֆինանսական հաշվետվությունները ենթակա կլինեն պարտադիր աուդիտի անկախ աուդիտորի կողմից, այնուամենայնիվ այն չի ապահովի ոլորտի բոլոր ընկերությունների արտաքին աուդիտ անցնելու պահանջը:

ԱՃԹՆ 5-րդ զեկույցում ներառված 24 հաշվետու ընդերքօգտագործող ընկերություններից 6 ընկերությունների 2022թ. ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են արտաքին աուդիտի: «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ի ներկայացված հաշվետվությունները համախմբված են և ներառում են «Լեռ-Էքս» ՍՊԸ ֆինանսական տվյալները, սակայն վերջինիս հաշվետվություններն առանձին աուդիտի չեն ենթարկվել: Ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների հրապարակման, ինչպես նաև արտաքին աուդիտի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են Հավելված 1-ում:





2. ԱՃԹՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ  
ԽՄԲԻ (ԲՇԽ) ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## 2. ԱՃԹՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ (ԲՇԽ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԱՃԹՆ Ստանդարտը յուրաքանչյուր անդամ-պետությունից պահանջում է արդյունավետ բազմակողմանի վերահսկողություն, որն իրականացվում է ԲՇԽ-ի միջոցով:

### 2.1. Կառավարության հանձնառությունը, ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, հակակոռուպցիոն քաղաքականությունը (պահանջ 1.1, 1.2, 1.3)

#### Կառավարության հանձնառությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավատարիմ է մնացել ԱՃԹՆ-ին իր հանձնառությանն անդամակցությունից ի վեր:

Կառավարության խմբակցությունն ընդգրկում է համապատասխան պետական գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներին (նախարարի տեղակալ կամ գլխավոր քարտուղար), իսկ ԱՃԹՆ ԲՇԽ նախագահն է ՀՀ փոխվարչապետը:

ԲՇԽ-ի հանդիպման արձանագրությունները վկայում են, որ կառավարության ներկայացուցիչներն ակտիվ դերակատարում ունեն ԲՇԽ-ի քննարկումներում: ԱՃԹՆ էլեկտրոնային

հաշվետվողականության հարթակում 2022թ. համար առկա տվյալները հավաստում են, որ հաշվետու պետական գերատեսչությունները ժամանակին և ամբողջական մուտքագրել են այն հաշվետվությունները, որոնք պահանջվում են նրանցից ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի «Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ օգտակար հանաժոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու կարգը, ժամկետները և ձևերը, մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգը, ժամկետները և ձևերը, ինչպես նաև պետական մարմինների ցանկը սահմանելու մասին» թիվ 666-Ն որոշմամբ<sup>15</sup>:

#### Ընկերությունների ներգրավվածությունը

Ընկերությունների խմբակցությունը ԲՇԽ կազմում բաղկացած է 7 ընկերություններից, որոնցից 3-ը հանդես են գալիս որպես այլընտրանքային անդամ: ԲՇԽ նիստի արձանագրությունները փաստում են ԲՇԽ քննարկումներին ընկերությունների խմբակցության անդամների կանոնավոր մասնակցության մասին: ԱՃԹՆ հաշվետվողականության հարթակի ստուգումը հաստատում է, որ ընդերքօգտագործող ընկերությունները ժամանակին են ներկայացրել 2022թ. համար այն հաշվետվությունները, որոնք պահանջվում են մետաղական ընդերքօգտագործող ընկերություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 08.06.2018թ. թիվ 666-Ն որոշման<sup>16</sup>:

Համաձայն ԱՃԹՆ 2023թ. ստանդարտի 1.2 պահանջի՝ հաշվետու ընկերություններից ակնկալվում է, որ կիրառարակեն հակակոռուպցիոն քաղաքականություն, որը կստեղծի հստակ ուղեցույցներ՝ կոռուպցիոն ռիսկի կառավարման համար: Այս քաղաքականությունը պետք է ներառի իրական

<sup>15</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132674>

<sup>16</sup> տես նախորդ հղումը

շահառուների տվյալների օգտագործման մեթոդները և բոլոր ենթակա գործառույթները, որոնք կապվում են կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված գործողությունների հետ: Բացի այդ, բազմաշահառու խմբում ներգրավված ընկերություններից ակնկալվում է, որ կմասնակցեն պատշաճ ուսումնասիրության (due diligence) խիստ գործընթացներին՝ ապահովելով, որ բոլոր շահառուները և դրսևորումները համապատասխանեն էթիկական և իրավական նորմերին: Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերող ընկերություններից «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն է ներդրել հակակոռուպցիոն քաղաքականություն<sup>17</sup>, որն ընդունվել է 2018թ. օգոստոսի 14-ին: Այս քաղաքականությունը նպատակ ունի նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը և ապահովելու գործառնությունների թափանցիկությունը: «Լիդիան Արմենիա»-ն պարտավորվում է խստորեն պահպանել էթիկական չափանիշները և ապահովել, որ բոլոր շահառուները տեղյակ լինեն իրենց պարտականություններից:

Հանքարդյունաբերող մյուս ընկերությունները կարող են ուսումնասիրել լավագույն միջազգային փորձը և կազմել առանձին քաղաքականություն, կամ ներառել հակակոռուպցիոն քաղաքականություն ընկերության ռազմավարության մեջ:

Լիդիանը խոշոր խմբի մաս կազմող ընկերություն է, որի տվյալ քաղաքականությունն ըստ ամենայնի ներառում է կամ կազմվել է խմբի փորձի հիման վրա:

### **Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը**

Քաղաքացիական հասարակության խմբակցությունը ԲՇԽ կազմում բաղկացած է 6 ներկայացուցիչ, որոնցից 5-ը հասարակական կազմակերպություններ են, այդ թվում՝ մեկը գիտական համայնքի ներկայացուցիչ: ԲՇԽ նիստի արձանագրությունները փաստում են ԲՇԽ քննարկումներին խմբակցության անդամների կանոնավոր մասնակցության մասին: Քաղաքացիական հասարակության խմբակցությունն ԱՃԹՆ-ի գործընթացի և ԱՃԹՆ-ի հիմնական փաստաթղթերի վերաբերյալ հանրային որոշումների կայացմանը մասնակցում են լիարժեք և ակտիվ կերպով:

## **2.2. Բազմաշահառու խումբ (պահանջ 1.4)**

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն բաղկացած է Հայաստանի Հանրապետության կառավարության, հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի և քաղաքացիական հասարակության տասնհինգ անդամներից՝ հետևյալ կառուցվածքով.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության վեց ներկայացուցիչ,
2. հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի չորս ներկայացուցիչ,
3. քաղաքացիական հասարակության չորս ներկայացուցիչ:

ԲՇԽ-ի կազմի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հավելված 4-ում:

Ըստ ԲՇԽ-ի աշխատակարգի<sup>18</sup> ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցություն ունենում է առնվազն մեկ այլընտրանքային անդամ, որը պետք է լինի նույն ոլորտի ներկայացուցիչ, սակայն ոչ ավելի, քան խմբակցության անդամների թիվը: ԲՇԽ-ի անդամները և այլընտրանքային անդամները նշանակվում են

<sup>17</sup> <https://www.lydianarmenia.am/img/uploadFiles/b0d0ef8d62b4e35a7f4bAntiCorruptionPolicyARM.pdf>

<sup>18</sup> <https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3>

3 տարի ժամկետով: ԲՇԽ-ի նախագահը ՀՀ փոխվարչապետն է: ԲՇԽ-ի գործունեության վարչարարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո գործող ԱՃԹՆ հայաստանյան քարտուղարության կողմից: ԲՇԽ-ի ընթացիկ կազմը և դրանց անդամների մասնակցությունը ԲՇԽ-ի նիստերին հանրության համար հասանելի են ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում<sup>19</sup>: Բազմաշահառու խմբի նիստերի արձանագրությունները, դրանցում ընդունված որոշումները կամ էլեկտրոնային եղանակով հաստատված այլ կարևոր փաստաթղթերը հրապարակվում և հասանելի են ԱՃԹՆ կայքում<sup>20</sup>:

### 2.3. Աշխատանքային ծրագիր (պահանջ 1.5)

2022թ.ի ապրիլի 27-ին կայացած նիստում ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի կողմից հաստատվել է 2022թ. աշխատանքային ծրագիրը<sup>21</sup>: Այդ աշխատանքային ծրագրով ամրագրվել են նաև ԱՃԹՆ-ի հետևյալ ազգային առաջնահերթությունները.

- 1 • Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ թափանցիկության և հաշվետվողականության ԱՃԹՆ Ստանդարտի կիրառման խորացում, վերհանված հարցերի հասցեագրում
- 2 • Ոլորտի շահառուների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, համակարգված բացահայտումների գործելակերպի ներդրում, ոլորտի բացահայտված տվյալների օգտագործման և վերլուծության կարողությունների զարգացում
- 3 • Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ իրազեկվածության ապահովում
- 4 • Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի կատարելագործում՝ միջազգային լավագույն փորձի կիրառման, իրավական կարգավորումների բարելավման միջոցով
- 5 • Պատասխանատու ներդրողների համար մրցակցային ներդրումային միջավայրի բարելավում

Հայաստանի ԱՃԹՆ-ի 2022թ. աշխատանքային ծրագրով սահմանվել են հետևյալ նպատակները.

1. Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում,
2. Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում.
  - 2.1 Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում,
  - 2.2 ԱՃԹՆ-ի Ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում,
  - 2.3 Իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված միջոցառումներ,

<sup>19</sup> <https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4>

<sup>20</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

<sup>21</sup> <https://www.eiti.am/hy/%D4%B1%D5%83%D4%B9%D5%86-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/>

- 2.4 Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի Ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման վերաբերյալ ԲՇԽ-ի որոշման դեպքում՝ ՀՀ իրավական դաշտի համապատասխանեցում,
3. ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում,
4. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում:

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը 2022թ. համար կազմել և հրապարակել է 2 կիսամյակային հաշվետվություն<sup>22</sup> ԱՃԹՆ-ի ներդրման ընթացիկ առաջընթացի վերաբերյալ: Այդ հաշվետվություններն ընդունվել և հաստատվել են Հայաստանի ԲՇԽ-ի կողմից:

2022թ., ինչպես նաև հետագա տարիների աշխատանքային ծրագրերի<sup>23</sup> նպատակները կապված են ԱՃԹՆ-ի սկզբունքների հետ և նպաստում են արդյունահանող ոլորտի ազգային առաջնահերթությունների իրականացմանը: Այսպես, ԱՃԹՆ-ի իրականացումը կապված է և ինտեգրված կառավարության կողմից 2023թ. ընդունված Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության<sup>24</sup> հետ, իսկ աշխատանքային ծրագրով նախատեսված գործողությունները ներառվել են կառավարության Հնգամյա միջոցառումների ծրագրերում<sup>25</sup>:

Աշխատանքային ծրագրերի մշակումն իրականացվել է ԲՇԽ բոլոր անդամների ներգրավմամբ:

Աշխատանքային բոլոր ծրագրերը, վերանայված տարբերակները և իրականացման հաշվետվությունները հանրությանը հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: Աշխատանքային ծրագրերը ներառում են նպատակներ, չափելի և ժամանակային գործողություններ, պլանավորված ծախսեր, ֆինանսավորման աղբյուրներ և ռիսկի գնահատում յուրաքանչյուր գործողության համար: Գործողություններն ուղղված են կարողությունների և համակարգված բացահայտումների ամրապնդմանը, մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրավական խոչընդոտների վերացմանը, նախորդ վավերացման առաջարկությունների և ԱՃԹՆ-ի իրականացմանը, ինչպես նաև իրական սեփականության բացահայտմանը, և այլն:

<sup>22</sup> <https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

<sup>23</sup> ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիր - Eiti.am

<sup>24</sup> ՀՀ ՏԿԵՆ | Ընդերքի ծրագրեր (mtad.am)

<sup>25</sup> Ծրագրեր - Հնգամյա միջոցառումների ծրագիր - Հայաստանի Հանրապետության Կառավարություն (gov.am)

3. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԵՐԸ

### 3. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

#### 3.1. Իրավական դաշտը և ֆիսկալ ռեժիմը (պահանջ 2.1)

##### 3.1.1. Իրավական դաշտը և իրավական ակտերի նկարագրությունը

ԱՃԹՆ Ստանդարտ 2.1-ի պահանջներին համապատասխան՝ տարեկան հաշվետվության այս բաժինը ներկայացնում է ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող իրավական դաշտը, դրա կարգավորման շրջանակը և հաշվետու տարվա ընթացքում կատարված հիմնական օրենսդրական փոփոխությունները: Նշենք, որ ոլորտի հիմնական իրավական նորմերը ներկայացված են նախորդ զեկույցներում, որոնք տրամադրում են համապարփակ ակնարկ ընդերքօգտագործման իրավական դաշտի վերաբերյալ: Այս զեկույցում ընդգրկված են հաշվետու տարվա ընթացքում ոլորտը կարգավորող իրավական փոփոխությունները, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրները, ինչպես նաև ընդերքօգտագործման պայմանագրերի կնքման և լիցենզավորման ընթացակարգի ընթացիկ գործընթացները:

Ստորև ներկայացնում ենք ընդերքօգտագործման ոլորտին առնչվող օրենսդրությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում ընդունված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունները, ներառյալ, բայց չսահմանափակվելով.

##### Աղյուսակ 3.1.1.1

###### Ընդերքօգտագործման ոլորտին առնչվող օրենսդրությունը

1.	ՀՀ Սահմանադրություն	15.	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք
2.	ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք	16.	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք
3.	ՀՀ աշխատանքային օրենսգիրք	17.	«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք
4.	ՀՀ ջրային օրենսգիրք	18.	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք
5.	ՀՀ հողային օրենսգիրք	19.	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք
6.	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք	20.	«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք



7.	«Հ հարկային օրենսգիրք»	21.	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք
8.	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք	22.	«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք
9.	«Թափոնների մասին» ՀՀ օրենք	23.	«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք
10.	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք	24.	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք
11.	«Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք	25.	«Սևանա լճի մասին» ՀՀ օրենք
12.	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք	26.	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք
13.	ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք	27.	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք
14.	«Սնանկության մասին» ՀՀ օրենք	28.	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք

Ստորև ներկայացվում են ընդերքօգտագործման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի կիրառումն ապահովելու նպատակով ընդունված հիմնական ենթաօրենսդրական իրավական ակտերը.

1. «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 22.03.2012թ. N 437-Ն որոշում (փոփոխվել է ՀՀ կառավարության թիվ 994-Ն առ 27.06.2024թ. որոշմամբ),
2. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշում (28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ N 1325-Ն որոշումը շարադրվել է նոր խմբագրությամբ),
3. «Բազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 2294-Ն որոշում,
4. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024թ. հուլիսի 25-ի թիվ 1143-Ն որոշում,
5. «Փորձաքննության, պետական փորձաքննական եզրակացության մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու, պետական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024թ. մայիսի 2-ի թիվ 643-Ն որոշում (սույն որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 9-ի «Հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 399-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 22-ի «Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանելու մասին» N 428-Ն որոշումները),
6. «Նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ ընդլայնման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ դադարեցման կամ փակման կամ քանդման կամ

նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության անհրաժեշտությունը որոշելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024թ. հունվարի 11-ի թիվ 43-Ն որոշում,

7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի թիվ 2343-Ն որոշում,

8. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կամ ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության մշակման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024թ. հունվարի 11-ի թիվ 43-Ն որոշում,

9. «Պետական փորձաքննական դրական եզրակացություն ստացած հիմնադրույթային փաստաթղթերում չներառված՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ բնակավայրերի կանաչ գոտիներում կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ բնապահպանական հողերում գնահատման և փորձաքննության ենթակա գործունեության տեսակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024թ. մայիսի 2-ի N 638-Ն որոշում,

10. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի 2022թ. հոկտեմբերի 22-ի թիվ N 369-Ն հրաման,

11. «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 18-ի N 347-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» շրջակա միջավայրի նախարարի 2023թ. դեկտեմբերի 20-ի թիվ N 468-Ն հրաման,

12. ՀՀ կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի «Բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1421-Ն որոշում,

13. Շրջակա միջավայրի նախարարի 2023թ. սեպտեմբերի 4-ի «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին» N 310-Ն հրաման,

14. ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 1-ի «Համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» N 1358-Ն որոշում,

15. ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 1-ի «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» N 1370-Ն որոշում,

16. ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 4-ի «Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձևաչափը հաստատելու մասին» N 1198-Ն որոշում,

17. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022թ. սեպտեմբերի 26-ի «Ազդակիր բնակավայրերի ցանկը սահմանելու մասին» 16-Ն հրաման (13-16-րդ կետերում նշված ենթաօրենսդրական ակտերն ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 1-ից),

18. ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 11-ի «Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացման կարգը, հաշվետվությունների ձևերը և լրացման ուղեցույցները սահմանելու մասին» թիվ 1268-Ն որոշում,

19. ՀՀ ՏԿԵ նախարարի 2022թ. օգոստոսի 8-ի «Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները սահմանելու մասին» N 12-Ն հրաման,
20. ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022թ. հոկտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» N 369-Ն հրաման,
21. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022թ. ապրիլի 13-ի «Երկրաբանական ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» N 9-Ն հրաման,
22. 2022թ. սեպտեմբերի 9-ի «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» N 15-Ն հրաման:
23. «Պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի N 1784-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 3-ի N 1446-Ն որոշում,
24. «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի N 06-Ն հրաման,
25. «Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի (ՀՀ ՊՊՀ) 2000թ. դեկտեմբերի 12-ի N 86 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 03.05.2021թ. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի թիվ 04-Ն հրաման,
26. Հանրապետության կառավարության 1998թ. փետրվարի 9-ի «Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու մասին» N 80 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 274-Ն որոշում
27. «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների եվ կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի N 94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 1480-Ն որոշում:

### 3.1.2. Հարկային համակարգ, հարկային և ոչ հարկային եկամուտների հոսքեր, հարկային դրույթաչափեր

#### Հարկային համակարգ, հարկային և ոչ հարկային եկամուտներ

Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերության ոլորտից պետության ստացվող եկամտային հոսքերը կարգավորվում են հետևյալ իրավական ակտերով.

1. ՀՀ Հարկային օրենսգիրք<sup>26</sup>,
2. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք<sup>27</sup>,

<sup>26</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=196879>

<sup>27</sup> [arlis.am/DocumentView.aspx?docid=178678](https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=178678)

3. ՀՀ Մաքսային օրենսգիրք<sup>28</sup>,
4. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք<sup>29</sup>,
5. ՀՀ օրենքը պետական տուրքի մասին<sup>30</sup>:

Հանքարդյունաբերության ոլորտի ընկերություններին վերաբերող հարկերը և վճարները հետևյալն են.

#### ՀՀ Հարկային օրենսգիրք

- Շահութահարկ
- Ռոյալթի
- Ավելացված արժեքի հարկ
- Եկամտային հարկ
- Բնապահպանական հարկ
- Բնօգտագործման վճարներ
- Անշարժ գույքի հարկ

#### ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք

- Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար
- Մշտադիտարկումների իրականացման վճար
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման տուրք
- Բնապահպանական տուրքեր և տուգանքներ

#### ՀՀ Մաքսային օրենսգիրք

- Ներմուծման և արտահանման ԱԱՀ
- Մաքսատուրք
- Մաքսավճար

#### ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

- Վարձակալության վճար
- Հողի ձեռքբերում
- Հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարում
- Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրով

#### ՀՀ օրենքը պետական տուրքի մասին

- Պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի և մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանման յուրաքանչյուր մեկ տոննայի համար լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրք
- Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք
- Ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք

#### Հարկային համակարգ

<sup>28</sup> [arlis.am/DocumentView.aspx?DocID=95226](http://arlis.am/DocumentView.aspx?DocID=95226)

<sup>29</sup> [arlis.am/DocumentView.aspx?docID=74658](http://arlis.am/DocumentView.aspx?docID=74658)

<sup>30</sup> [arlis.am/DocumentView.aspx?docid=196890](http://arlis.am/DocumentView.aspx?docid=196890)

**Աղյուսակ 3.1.2.1**

Եկամտային հոսքերի դրույքաչափը և իրավասու պետական մարմինները

Իրավասու պետական մարմին	Եկամտային հոսք	Դրույքաչափ կամ հաշվարկման բազա	Բյուջե
ՀՀ Պետական եկամուտների կոմիտե	Ռոյալթի	Բ1, Բ2, Բ3 բազաներ <sup>31</sup>	Պետական
	Ավելացված արժեքի հարկ	20%	Պետական
	Մաքսատուրք, մաքսավճար	-	Պետական
	Շահութահարկ	18%	Պետական
	Եկամտային հարկ	20%	Պետական
	Ակցիզային հարկ	ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 88	Պետական
	Պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի և մոլիբդենի արտահանման յուրաքանչյուր մեկ տոննայի համար պետական տուրք	բազային տուրքի 160,800 և 1000-ապատիկի չափով	Պետական
	Բնապահպանական հարկ	ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 165	Պետական
	Բնօգտագործման վճարներ	ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 201	Պետական
	Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք	10,000 ՀՀ դրամ	Պետական
ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն	Ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք	բազային տուրքի 10000-ապատիկի չափով	Պետական
	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	ՏՀ = ՀԲ-ՆՀ/Ժ <sup>32</sup>	Համայնքային

<sup>31</sup> [arlis.am/DocumentView.aspx?docid=196879](https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=196879) Հոդված 202

<sup>32</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157091>

Իրավասու պետական մարմին	Եկամտային հոսք	Դրույքաչափ կամ հաշվարկման բազա	Բյուջե
ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Բնապահպանական տույժեր ու տուգանքներ	-	Պետական
	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման վճար	բազային տուրքի 15, 300 կամ 1000-ապատիկի չափով	Պետական
	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը	Հավելվածի գլուխ 4 <sup>33</sup>	Պետական
	Մշտադիտարկումներ ի իրականացման վճար	-	Պետական
	Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ	Պայմանագրի Հավելված 3	Համայնքային
	Վարձակալության վճարներ	Վարձակալության օբյեկտ	Համայնքային
	Անշարժ գույքի հարկ	0.25%	Համայնքային
	Փոխադրամիջոցների գույքահարկ	ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 244	Համայնքային
	Հողի ձեռքբերում	Վաճառքի գին	Համայնքային

Աղբյուրը. Համապատասխան օրենքներ և իրավական ակտեր

### Հաշվետու ժամանակահատվածում հարկային ռեժիմում տեղի ունեցած փոփոխություններ

#### Ռոյալթի

2022թ. հունիսի 15-ին ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխության համաձայն<sup>34</sup> 2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ռոյալթիի հաշվարկման նոր կարգ, համաձայն որի կիրառվում է հետևյալ հաշվարկի բազաները և դրույքաչափերը.

1) Բ<sub>1</sub>- հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի,

<sup>33</sup> [arlis.am/DocumentView.aspx?docid=157091](https://arlis.am/DocumentView.aspx?docid=157091)

<sup>34</sup> [arlis.am/DocumentView.aspx?docid=164753](https://arlis.am/DocumentView.aspx?docid=164753)

խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառություն:

2)  $F_2$  - շահույթ նախքան հարկումը, որը հաշվարկվում է որպես  $F_1$ -ի և ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված՝  $F_1$ -ի հետ անմիջականորեն կապված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն:

3)  $F_3$  - շահույթ նախքան հարկումը, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով, ընդ որում,  $F_3$ -ի հիման վրա ռոյալթիի գումարը հաշվարկվում է միայն այն դեպքում, երբ ռոյալթի վճարողի մոտ  $F_3$ -ը մեծ է 0-ից:

$$F_3 = F_2 - \text{ՖԾ} - (F_1 \times R_1) - (F_2 \times R_2) - (F_1 \times 0.15)$$

որտեղ՝ ՖԾ-ն ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ֆինանսական ծախսերն են, որոնք  $F_3$ -ի հաշվարկման նպատակով հաշվի են առնվում Կառավարության սահմանած կարգով, դեպքերով և չափերով, իսկ  $R_1$ -ը և  $R_2$ -ը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված ռոյալթիի դրույքաչափերը:

Նշվածի կիրառության իմաստով՝  $F_2$ -ի հաշվարկման ժամանակ՝

1) իրացման շրջանառությունից ֆինանսական ծախսերի, օրենսգրքի 10-րդ բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների նվազեցում չի կատարվում՝ անկախ այդ ծախսերը և հարկային վնասները հանքավայրերի շահագործման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված լինելու հանգամանքից:

2) բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ռոյալթիի իրացման շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:

Ընդ որում վերը նշված ռոյալթիի բազաների նկատմամբ կիրառվելու են հետևյալ դրույքաչափերը:

1.  $F_1$ -ի համար՝  $R_1$ , որը հավասար է 4 տոկոսի,
2.  $F_2$ -ի համար՝  $R_2$ , որը հավասար է 12.5 տոկոսի,
3.  $F_3$ -ի համար՝  $R_3$ , որը հավասար է 15 տոկոսի:

Խտանյութի իրացման շրջանառության հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում Կառավարության սահմանած ցանկում ներառված լաբորատորիաների<sup>35</sup> տված եզրակացությունների հիման վրա որոշված՝ մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությունը: Խտանյութի մատակարարման պայմանագրում գնորոշման համար խտանյութի մատակարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամիսը ներառյալ ժամանակահատվածից ավելի երկար ժամանակահատված նախատեսված լինելու դեպքում մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գինը հաշվարկելու համար հիմք են ընդունվում խտանյութի մատակարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա համար ձևավորված՝ մետաղների միջազգային միջին գները:

### Պետական տուրք

2021թ. հուլիսի 15-ին ընդունված «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ որոշվել էր սահմանել պետական տուրք պղնձի և մոլիբդենի արտահանման լիցենզիաներ

<sup>35</sup> [arlis.am/DocumentView.aspx?docid=173326](http://arlis.am/DocumentView.aspx?docid=173326)

կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար: Օրենքի ընդունման դրդապատճառը միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների աճն էր, որը հնարավորություն էր ստեղծում Հայաստանի մետաղական արդյունաբերության եկամուտների աճի և զարգացման համար: Սույն փոփոխությամբ փորձ էր արվում կարգավորել ՀՀ համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (պղնձի և մոլիբդենի խտանյութ, ֆեռոմոլիբդեն) արտաքին առևտուրը:

Սկզբնապես նախատեսվում էր, որ օրենքի գործողությունը կդադարեցվի 2023թ. հունվարի 1-ին: Սակայն հաշվի առնելով գունավոր մետաղների միջազգային գների անկումը, կառավարությունը որոշում կայացրեց դադարեցնել տուրքի գանձումը 2022թ. սեպտեմբերի 10-ից:

### Աղյուսակ 3.1.2.2

2021-2022թթ. ընթացքում պղնձի խտանյութի, մոլիբդենի խտանյութի և մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանման յուրաքանչյուր մեկ տոննայի համար լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար կատարված վճարումներ

Հ/Հ	Ընկերության անվանումը	Վճարված գումար մլն ՀՀ դրամ		Ընդամենը
		2021թ.	2022թ.	
1	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	13,116	34,600	47,716
2	«Ագարակի Պղնձա-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	5,008	5,688	10,696
3	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	2,995	1,640	4,635
4	«Թեղուտ» ՓԲԸ	484	1,280	1,764
5	Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)	320		320
<b>Ընդամենը</b>		<b>21,924</b>	<b>43,208</b>	<b>65,132</b>

Աղբյուրը. ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն

Սույն տուրքի վերաբերյալ տեղեկություններն ավելի մանրամասն նկարագրված են ԱՃԹՆ 2020-2021 Ջեկույցում<sup>36</sup>:

### 3.1.3. Էական օրենսդրական փոփոխությունները հանքարդյունաբերության ոլորտում հաշվետու տարվա ընթացքում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանի համաձայն՝ Սահմանադրության հիմքում դրված է Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որի 7-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով»: Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման իրավահարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտի՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) համաձայն՝ ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթներից է

<sup>36</sup> <https://www.eiti.am/hy/2022/>



ընդերքի ճանաչումը՝ որպես պետության բացառիկ սեփականություն: Ընդերքում պարփակված օգտակար հանածոները տնօրինելու հարցում Հայաստանի Ժողովրդի անունից հանդես է գալիս և որոշումներ է ընդունում Հայաստանի Հանրապետության կառավարությունը<sup>37</sup>:

### « Ընդերքի մասին օրենսգիրք

#### **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցների հաստատում**

Օրենսգրքում 2022թ. հունիսի 30-ին ուժի մեջ մտած (ընդունված 25.05.2022թ., համարը՝ ՀՕ-143-Ն) փոփոխությամբ<sup>38</sup> ընդերքօգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունների շարքում ավելացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցների հաստատման իրավասությունը:

Սույն փոփոխության նախագծի հիմնավորման մեջ, որպես նպատակ նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի N 37 արձանագրության 10-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 29-Ց արձանագրային որոշումը՝ շրջակա միջավայրի նախարարության հրամանի ձևաչափով վերաձևակերպումն ու օգտագործումը: Այնուամենայնիվ, նշված փոփոխությունը հնարավորություն է տալիս խուսափելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման տարաբանույթ մեկնաբանություններից և ձևակերպումներից: Ընդերքօգտագործման ոլորտում հստակության ապահովման և տարակարծություններից խուսափելու նպատակով Օրենսգրքի 2022թ. հունիսի 30-ին (ընդունված 25.05.2022թ., համարը՝ ՀՕ-143-Ն) օրինական ուժի մեջ մտած փոփոխությամբ տրվել է օգտակար հանածոյի կանխատեսումային ռեսուրսների սահմանումը, այն է՝ օգտակար հանածոյի ենթադրվող կուտակումներ, որոնց քանակը, որակը և տարածքային դիրքը գնահատված են ընդհանուր երկրաբանական նախադրյալների հիման վրա<sup>39</sup>:

#### **Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման արգելք**

« քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է անձի կողմից իր սեփականության իրավունքի իրացման տարբերակները: Համադրելով սույն ընդհանուր կանոնն Օրենսգրքի 22-րդ հոդվածով սահմանված կարգավորման հետ, կարելի է եզրակացնել, որ անձը կարող է տնօրինել իր ընդերքօգտագործման իրավունքը՝ այդպիսով որոշելով իր ընդերքօգտագործման իրավունքի ճակատագիրը:

2022թ. հունիսի 30-ին օրինական ուժի մեջ մտած (ընդունված 25.05.2022թ., համարը՝ ՀՕ-143-Ն) փոփոխության համաձայն կարգավորվել է անձի կողմից ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման արգելքի ընդհանուր կանոնը, դրանից բացառությունները (իրավունքի գրավի դեպքում գրավի առարկա հանդիսացող ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարումը), ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը թույլատրվեց ոչ միայն իրավաբանական անձի առանձնացման կամ բաժանման ձևով վերակազմակերպման դեպքում, այլև իրավաբանական անձի միաձուլման, միացման, վերակազմավորման դեպքերում:

Սույն կարգավորման մասով պրակտիկայում կարող են առաջանալ որոշակի խնդիրներ:

<sup>37</sup> Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույց, էջեր 19-20, <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

<sup>38</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=164453>

<sup>39</sup> <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=66149>

Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համար լիազոր մարմնի (ՏԿԵՆ) համաձայնությունը ստանալուց հետո՝ 20-օրյա ժամկետում, ներկայացվում են նաև ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերող իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նշում՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին, ներկայացնում կանոնադրությունը: Պրակտիկայում վերակազմակերպումը բավականին երկարատև գործընթաց է: Շատ հաճախ վերակազմակերպվող ընկերությունների ընդհանուր ժողովի կամ ժողովի՝ առանձնացման, բաժանման մասին որոշման կայացման և բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռի հաստատման գործընթացի և վերակազմակերպման պետական գրանցման միջև ընկած ժամանակահատվածը կարող է երկար տևել, և արդյունքում դիմումատուն իրենից անկախ հանգամանքների պատճառով բաց է թողնում վերը հիշատակված ժամկետը, ինչն էլ լիազոր մարմնի տված համաձայնությունը չեղարկելու հիմք կարող է հանդիսանալ:

Երկրում արտակարգ իրավիճակների պայմաններում ոլորտի ամբողջական կարգավորման նպատակով Օրենսգիրքը լրացվել է 55.1-ին հոդվածով՝ անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում այդ հիմքով ընդերքօգտագործման գործող իրավունքի ժամկետները երկարաձգվում են առավելագույնն այդ հանգամանքների և ընդերքօգտագործողի բնականոն գործունեության համար խոչընդոտ հանդիսացող հետևանքների վերացման գործողության ժամկետով: Սույն փոփոխությամբ հստակ սահմանվում է ամբողջ գործընթացը. նման դեպքերում լիազոր մարմին դիմում ներկայացնելու կարգն ու պայմանները, ժամկետները, դիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջները, լիազոր մարմնի կողմից դիմումի բավարարման կամ մերժման համար անհրաժեշտ պայմանները, ժամկետները:

Օրենսդիրը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածով, Օրենսգրքի՝ անհաղթահարելի ուժի հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգմանը վերաբերող իրավակարգավորումներին տվել է հետադարձ ուժ, և դրանք տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելն ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտագործողների վրա, եթե անհաղթահարելի ուժը ծագել է փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող չորս տարվա ընթացքում<sup>40</sup>:

### **Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացում**

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը խմբագրվել է՝ սահմանելով օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացման կարգի, հաշվետվությունների ձևերի և լրացման ուղեցույցների սահմանման պահանջը՝ հիմք ընդունելով այն, որ բացի պինդ օգտակար հանածոներից (մետաղական և ոչ մետաղական), անհրաժեշտ է նաև ստորերկրյա ջրերի պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևի սահմանում: Բացի այդ, ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի N 1348-Ն որոշմամբ<sup>41</sup> հաստատված ձևը միայն աղյուսակային հաշվետվություն էր՝ օգտակար հանածոյի արդյունահանման մասով ամփոփ տեղեկությունների ներկայացմամբ, առկա չէին պաշարների հաշվեկշռի վարման համար ամփոփ ցուցանիշների առավել մանրամասն բացատրագրերի և այլ հավելվածների ու հիմնավորումների ներկայացման հստակ պահանջներ:

Հաշվի առնելով այս փոփոխությունը՝ ՀՀ Կառավարության կողմից 2022թ. օգոստոսի 11-ին ընդունվել է թիվ 1268-Ն որոշումը<sup>42</sup>, որով կանոնակարգվում են օգտակար հանածոների պաշարների շարժի

<sup>40</sup> <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=13248&Reading=0>

<sup>41</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=79015>

<sup>42</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=167333>

վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացման և ընդունման հարաբերություններն ու ժամկետները, հստակեցվում է հաշվետվությունների ձևը և համապատասխանեցվում ժամանակակից պահանջներին, սահմանվում են հաշվետվությունների լրացման ուղեցույցները, լրացվում է ստորերկրյա ջրերի պաշարների շարժի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման պահանջի առկա բացը, ստորերկրյա հանքային ջրերի պետական հաշվառման ամբողջական և լիարժեք վարման իրականացումը: Հաշվետվությունների էլեկտրոնային ձևաչափերի ներկայացումը կնպաստի տեղեկությունների հետագա մշակման և տվյալների փոխանցման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կհանդիսանա պաշարների պետական հաշվեկշռի վարման ավտոմատ կառավարման համակարգերի ներդրման աշխատանքների համար նախապատրաստական քայլ և բարենպաստ միջավայրի ստեղծում: Ոլորտի թափանցիկության ապահովման նպատակից ելնելով՝ սույն որոշմամբ հանձնարարվել է ՀՀ ՏԿԵՆ նախարարին, որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունների աղյուսակային մասի ձևաթղթերը «էքսելէսէքս» («xlsx») ձևաչափով տեղադրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում <https://mtad.am/pages/sample-reports>: Այս որոշման ընդունմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի հանրապետության կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի «Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ձևերը սահմանելու մասին» N 1348-Ն որոշումը:

Վերոգրյալ որոշմամբ սահմանված պահանջներն ուժի մեջ են մտել 2023թ. հունվարի 1-ից, հետևաբար սույն Ձեկույցում ընդգրկված հաշվետու տարվա ընթացքում չեն կիրառվել:

### **Օգտակար հանածոների պաշարների դասակարգում**

Օրենսգրքի 17-րդ հոդվածի փոփոխությամբ (ընդունված 11.08.2021թ., N 06-Ն Հրաման) ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնի (ՏԿԵՆ) իրավասություններում տարանջատվել են «օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների սահմանումը» և «օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների սահմանումը» (նախկինում՝ «օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և մեթոդական ցուցումների սահմանումը»): Կատարված փոփոխության հիման վրա ՏԿԵ նախարարի հրամանով հաստատվել են մի շարք հրահանգներ, այդ թվում՝ ոսկու և պղնձի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգները, ինչպես նաև ՏԿԵ նախարարի 2022թ. օգոստոսի 8-ի թիվ 12-Ն հրամանով<sup>43</sup> սահմանվել են օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները:

ՏԿԵ նախարարի 2022թ. ապրիլի 13-ի N 9-Ն հրամանի<sup>44</sup> համաձայն՝ սահմանվել են երկրաբանական ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջները, իսկ ՏԿԵ նախարարի 2022թ. սեպտեմբերի 9-ի N 15-Ն հրամանի<sup>45</sup> համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները:

Միաժամանակ, Օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.4-րդ մասով սահմանվել է (ընդունված 16.07.2020թ., ՀՕ-397-Ն օրենք), որ եթե ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերը չեն

<sup>43</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167147>

<sup>44</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168479>

<sup>45</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162087>

համապատասխանում օգտակար հանաժոնների պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգմանը կամ օգտակար հանաժոնների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և օգտակար հանաժոնների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների պահանջներին, կամ պաշարների գնահատման հաշվարկներում առկա են բացթողումներ,

1) ապա լիազոր մարմինը դիտարկված բացթողումների մասին տեղեկացնում է դիմումատուին նյութերի լրամշակման նպատակով՝ սահմանելով լրամշակման համար հետևյալ ժամկետային սահմանափակումները.

- ոչ մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 30 օր,
- մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 120 օր.

2) և նշված բացթողումները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը և եռօրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:

### **«Քաղաքացիական անհնազանդություն» հասկացության սահմանում**

2022թ. հունիսի 30-ին (ընդունված 25.05.2022թ., համարը՝ ՀՕ-143-Ն) օրենսգրքում կատարված փոփոխությամբ ավելացվել է «քաղաքացիական անհնազանդություն» հասկացությունը՝ որպես անհաղթահարելի ուժ ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման համար: Օրենսգրքում «քաղաքացիական անհնազանդություն» տերմինը սահմանվել է որպես հասարակության կողմից հավաքների կազմակերպման միջոցով իրականացվող բողոքի ակցիաներ, որոնք ուղղված են իշխանության կամ կառավարության վարած քաղաքականության կամ ծրագրի դեմ:

Սույն փոփոխությունը ԲՇԽ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները համարել են խնդրահարույց, քանի որ նշված հասկացությունը կարող է մեկնաբանվել կամայական և կարող սահմանափակել հանրային մասնակցությունը և արտահայտման ազատությունը:

### **«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք**

Կոռուպցիայի դեմ պայքարի, ինչպես նաև մասնավոր ընկերությունների հաշվետվողականության բարձրացման նպատակով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածը 2022թ. լրացվել է նոր պահանջով (ընդունված 07.12.2022թ., ՀՕ-560-Ն օրենք), որի համաձայն 2024թ. հունվարի 1-ից միանձնյա գործադիր մարմինը, կոլեգիալ գործադիր մարմնի անդամները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում ներկայացնում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր: ԱՃԹՆ ստանդարտների լույսի ներքո սա ևս մեկ քայլ է տնտեսվարողների հաշվետվողականության բարձրացման և ոլորտում թափանցիկության ապահովման համար<sup>46</sup>:

### **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենք**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքը շատ կարևոր դեր ունի ընդերքօգտագործման ոլորտում (այսուհետ՝ սույն գլխի շրջանակում Օրենք): Օրենքը նախատեսում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ), որը պարտադիր է բոլոր այն նախագծերի համար, որոնք կարող են ազդել շրջակա միջավայրի վրա, այդ թվում՝ մետաղական, ոչ մետաղական հանքավայրերի շահագործման, հանքարդյունաբերության և ընդերքօգտագործման այլ գործունեությունների համար: Նշված ոլորտում Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է համապատասխանել իր կողմից վավերացված միջազգային պայմանագրերին և սկզբունքներին, որոնք

<sup>46</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=172206>

վերաբերում են շրջակա միջավայրի պահպանությանը, այդ թվում՝ ընդերքօգտագործման ոլորտում: Այս պարտավորություններն արտահայտվում են մի շարք միջազգային կոնվենցիաների, համաձայնագրերի և նախաձեռնությունների միջոցով: Դրանց շրջանակում ընդունված իրավական ակտերից է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքը:

Սույն Ձեկույցի շրջանակում հաշվետու տարվա ընթացքում նշված օրենքը փոփոխությունների չի ենթարկվել: ՀՀ կողմից վավերացված, Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ-պետությունների՝ մյուս կողմից, միջեւ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 3-րդ հավելվածի և կառավարության 2021թ. նոյեմբերի 14-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ի 13.1 կետի պահանջներից ելնելով՝ 2023թ. մայիսի 3-ին այն ընդունվել է նոր խմբագրությամբ<sup>47</sup>, որով պարզեցվել են շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություն ունեցող հիմնադրույթային փաստաթղթի մշակման եւ նախատեսվող գործունեություն իրականացման նպատակով փորձաքննական եզրակացության տրամադրման հետ կապված գործընթացները:

Օրենքում կատարված փոփոխությունները ցույց են տալիս մի քանի հիմնական ուղղություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ հանքարդյունաբերության ոլորտի վրա:

#### 1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) կատեգորիաների փոփոխություն:

Նախկինում սահմանված երեք՝ Ա, Բ և Գ կատեգորիաներն այժմ միաձուլվել են, դառնալով երկու՝ Ա և Բ: Սա նշանակում է, որ Գ կատեգորիայի որոշ բնագավառների գործունեության տեսակներ միացել են Բ կատեգորիայի գործունեության տեսակներին, իսկ Բ կատեգորիայի որոշ բնագավառների գործունեության տեսակներ էլ՝ Ա կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակներին և փոփոխվել են դրանց սահմանափակումները՝ պահանջելով ավելի խիստ փորձաքննություն:

2. **Սահմանաչափերի փոփոխություն:** Ա և Բ կատեգորիաների համար սահմանված որոշ գործունեությունների սահմանաչափերը վերանայվել են, ինչը կարող է հանգեցնել հանքարդյունաբերական որոշ նախագծերի տեղափոխման ավելի բարձր ռիսկային կատեգորիա՝ պահանջելով խիստ գնահատում և երկարատև գործընթաց:

3. **Հասկացությունների ճշգրտումներ:** Օրենքի նոր խմբագրությամբ մի շարք հասկացություններ, մասնավորապես՝ «հայտ», «փորձագետ», «ձեռնարկող», «հանրություն», «շահագրգիռ հանրություն», «շրջակա միջավայր» և «նախատեսվող գործունեություն», հստակեցվել և ընդլայնվել են: Հանքարդյունաբերության համար կարևոր է, որ «շրջակա միջավայր» հասկացությունում ներառված են «կլիմա» և «բնապահպանական հողեր» եզրույթները, ինչը կարող է լրացուցիչ պահանջներ առաջացնել հաշվետվողականության տեսանկյունից: Հասկացություններում տրվել է նաև «բնապահպանական կառավարման պլան»-ի սահմանումը, խմբագրվել է «նախագծային փաստաթուղթ» հասկացությունը:

4. **Ռազմավարական էկոլոգիական գնահատում (ՌԷԳ):** Այս նոր կարգավորումը ներդրում է որպես ընդերքօգտագործման և այլ բնագավառների պլանավորման ու քաղաքականության փորձաքննության գործիք, ինչը բարձրացնում է հիմնադրույթային փաստաթղթի նախագծի դրույթների գործողության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների որոշման և գնահատման մակարդակը: Հանքարդյունաբերական ընկերությունները պետք է ներգրավվեն ՌԷԳ գործընթացում ավելի վաղ փուլում՝ զերծ մնալու համար հնարավոր ռիսկերից:

<sup>47</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=178443>

ՌԷԳ գործիքակազմը գործում է դեռևս 2014թ.-ից, սակայն դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ընդունումից հետո միայն: Լիազոր մարմնի ներկայացուցիչները բազմիցս նշել են, որ տվյալ ռազմավարությունը ՌԷԳ-ի ենթակա չէ իր բովանդակությամբ: Հետագայում նշված ռազմավարության հիման վրա ընդունված իրավական ակտերն անհրաժեշտության (օրենքով սահմանված լինելու) դեպքում կենթարկվեն ՌԷԳ-ի: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ, թեև, օրենսդրական կարգավորումն առկա էր, բայց պրակտիկայում որևէ ոլորտի ռազմավարության ընդունման ժամանակ չի կիրառվել:

**5. Հանրային լուսման փուլի կրճատում:** Նախկինում պահանջվող 4 հանրային լուսման փուլերը կրճատվել են մինչև 2, ինչը նվազեցնում է փորձաքննական գործընթացի տևողությունը, սակայն պահանջում է, որ լուսման փուլերը լինեն ավելի արդյունավետ և հստակ:

Օրենքի այս փոփոխության վերաբերյալ բավականին երկարատև (շուրջ չորս տարի) և լայնածավալ քննարկումներ են եղել, որոնց ժամանակ իրենց դիտարկումները և կարծիքներն արտահայտելու հնարավորություն են ունեցել ոչ միայն պետական և համայնքային մարմինները, այլև տնտեսվարողները և ոլորտում գործող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ուսումնասիրվել է գործող միջազգային պրակտիկան: Սույն փոփոխության նպատակն է առավել հստակեցնելու շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման գործընթացը: Նախկին գործող 4 փուլերից առաջին՝ նախնական գնահատման փուլը գործնականում ձևական բնույթ էր կրում, որի պատճառով պարզապես գործընթացն անհարկի ձգձգվում էր: Բովանդակային առումով հանրային լուսման փուլերի երկու փուլերի գործընթացն առավել կանոնակարգվել է, հստակեցվել են ժամկետները: Քննարկվող օրենսդրական փոփոխությամբ հանրության քննարկման ժամկետը երկարաձգվել է, և, եթե որևէ անձ չի կարող մասնակցել հանրային քննարկմանը, ապա վերջինս հնարավորություն ունի էլեկտրոնային փոստով հնչեցնել իր կարծիքը, ինչին պարտադիր պետք է արձագանքվի: Ավելին, նշված հանրային լուսման փուլի բացասական արդյունքի դեպքում գործընթացն այլևս չի շարունակվում:

**6. Նախատեսվող գործունեություն չիրականացնելու դեպքում փորձաքննության եզրակացության ուժը կորցնելու ժամկետի փոփոխություն:** Նախկինում փորձաքննական եզրակացությունն ուժը կորցնում էր մեկ տարվա ընթացքում, սակայն այժմ այդ ժամկետը երկարաձգվել է մինչև երկու տարի: Սա նշանակում է, որ եթե ընդերքօգտագործման իրավունք ստանալուց հետո նախատեսվող գործունեության իրականացումն սկսելու համար առկա են որոշակի խոչընդոտներ, օրինակ՝ հողային հարցերի կարգավորում, ապա ընդերքօգտագործողն ունի ժամանակ դրանք կարգավորելու համար:

**7. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում՝ փորձաքննական դրական եզրակացություն ն ուժը կորցնելու դեպքում:** Սույն փոփոխությունների շրջանակներում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարվել է համապատասխան փոփոխություն, որի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրել է կամ ուժը կորցրած է ճանաչվել: Նախկինում նման իրավակարգավորում չկար, և երբ փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած էր համարվում, իսկ ընդերքօգտագործման իրավունքը գործում էր, առաջանում էր իրավական անհամապատասխանություն:

Այս փոփոխությունները միասին կարող են էական ազդեցություն ունենալ հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների վրա՝ պահանջելով ավելի բարդ և

երկարատև գործընթացներ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և գնահատման շրջանակում:

**8. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքում փոփոխություն՝ սահմանված կարգով փորձաքննության չներկայացնելու հետ կապված պատասխանատվության դեպքերի ու տուգանքի չափերի վերաբերյալ:** Միաժամանակ փոփոխվել է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը՝ նոր խմբագրությամբ է շարադրվել օրենսգրքի 94.1-ին հոդվածը (ընդունվել է 03.05.2023թ., ՀՕ-152-Ն օրենք), որի շրջանակներում հստակ սահմանվել են փորձաքննության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չներկայացնելու հետ կապված պատասխանատվության բոլոր դեպքերն ու տուգանքի չափերը:

Հարկ է նշել, որ տուգանքի չափերն անհամեմատ տարբեր են նախկինում 94.1-ին հոդվածով սահմանված տուգանքի չափերից: Սահմանված բարձր տուգանքի չափերը նպատակ ունեն պարտավորեցնելու ձեռնարկողներին այսուհետ շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող գործունեությունը սկսելուց առաջ դիմել լիազոր մարմին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ փորձաքննական դրական եզրակացությունը, այնուհետև սկսել գործունեությունը:

Մյուս կողմից իրավախախտման դեպքերի համար 94.1-ին հոդվածի պատժամիջոցներում սահմանվել է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացակարգերը խախտելն առաջացնում է նախազգուշացում, այնուհետև նախազգուշացումից հետո մեկամսյա ժամկետում այդ գործողությունները չիրականացնելու դեպքերում տուգանք է նշանակված:

Օրենքի 5-րդ գլխում ՌԷԳ-ին վերաբերվող նոր կարգավորում է սահմանվել, որի շրջանակներում կարգավորվում են ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության գործընթացները, դրանց ներկայացվող պահանջները, ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի տեսակները<sup>48</sup>:

Սույն փոփոխություններին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի ԱՃԹ-ի հաջորդ տարվա զեկույցում:

#### **«ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-52-Ն<sup>49</sup>**

2022թ. մարտի 4-ին ընդունված (ուժի մեջ է մտել 01.01.2023թ., ՀՕ-52-Ն օրենք) «ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-52-Ն օրենքը նպատակ ուներ խթանելու համայնքների, ինչպես նաև ազդակիր բնակավայրերի կայուն և շարունակական զարգացումը՝ մեծացնելով նրանց բյուջետային հնարավորությունները:

Ըստ այդ օրենքի՝ պետական բյուջեի ծախսերում նախատեսվել է ազդակիր համայնքների բյուջեներին հատկացնել ռոյալթիից ստացված մասհանումներ: Ռոյալթի վճարողների կողմից պետական բյուջե վճարված ռոյալթիի չափի 2%-ը տրվելու է ազդակիր համայնքների բյուջեներին՝ անվերադարձ: Հարկ է նշել, որ այս գումարների բաշխումը կատարվում է երկաստիճան համակարգով.

- Համայնքային մասհանման 50%-ը բաշխվում է համայնքի ազդակիր բնակավայրերի միջև,

<sup>48</sup> <https://www.e-draft.am/projects/4014/justification>

<sup>49</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75497>

- Մյուս 50%-ը՝ Հայաստանի այն համայնքների միջև, որոնք ունեն ազդակիր բնակավայրեր՝ անկախ ոռոգիչի վճարողից:

### **Ազդակիր բնակավայրի սահմանումը**

Օրենքի իմաստով, «ազդակիր բնակավայր» է համարվում այն համայնքի բնակավայրը, որը հարակից է ոռոգիչի վճարող կազմակերպության լեռնահատկացման ակտով հատկացված տարածքին: Համայնքային մասհանումները պետք է ուղղվեն սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայրերի զարգացման ծրագրերին:

### **Համայնքային մասհանումների ծախսման ծրագրեր**

Ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից՝ հաշվի առնելով տվյալ մարզի կամ համայնքի զարգացման ծրագրային փաստաթղթերը: Ծրագրերի կամ դրանց փոփոխությունների համաձայնեցումը կատարվում է տարածքային կառավարման լիազոր մարմնի հետ, և դրանք պետք է արտացոլեն ՀՀ կառավարության սահմանած առաջնահերթությունները:

### **Մասհանումների չափի որոշման հիմքը**

Մասհանումների չափերը որոշելիս՝ հիմք են ընդունվում առաջիկա բյուջետային տարվան նախորդող երրորդ տարվա փաստացի վճարված ոռոգիչի գումարների առկա տվյալները: Այսպիսով, համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը (այսուհետ՝ Ծրագրեր) կիրականացվեն 2024թ. թվականի բյուջեով: 2024թ. իրականացվելիք Ծրագրերի համար մասհանումների չափերը որոշելիս՝ հիմք են ընդունվում 2021թ. ընթացքում փաստացի վճարված ոռոգիչի գումարների առկա տվյալները: Ըստ ՏԿԵՆ-ի տվյալների՝ 2021թ. վճարվել է 52.56 միլիարդ ՀՀ դրամ ոռոգիչի, որից 2%-ը՝ 1.05 միլիարդ ՀՀ դրամ, բաշխվելու է համայնքներին: 2022թ. վճարվել է 81.73 միլիարդ ՀՀ դրամ, որի 2%-ը բաշխվելու է 2025թ. ծրագրերի համար:

### **«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-53-Ն օրենք<sup>50</sup>**

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը նախատեսում է ոռոգիչների բաշխման գործընթացի թափանցիկության ապահովում: Համայնքների ղեկավարները պարտավորվում են ներկայացնել հաշվետվություն համայնքային մասհանումների ծախսման մասին: Հաշվետվությունը պետք է հրապարակվի առանձին՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ: Համայնքների ղեկավարներն ունեն պատասխանատվություն՝ կազմելու և ավագանու հաստատմանը ներկայացնելու համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը:

### **2024թ. ծրագրերի իրականացում**

Համայնքային մասհանումներով ծրագրերը 2024թ. կիրականացվեն Հայաստանի 6 համայնքներում՝ Քաջարան, Կապան, Մեղրի, Ալավերդի, Վարդենիս և Ծաղկաձոր:

### **Ենթաօրենսդրական ակտերի ընդունումը**

2022թ. մարտի 11-ի ՀՕ-52-Ն օրենքի կիրառման համար ընդունվել են մի շարք ենթաօրենսդրական ակտեր՝

<sup>50</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271>



1. ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշումը՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը համաձայնեցնելու կարգը սահմանելու մասին:
2. ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշումը՝ մասհանումների ծախսման միջոցառումների ուղղությունները և առաջնահերթությունները հաստատելու մասին:
3. ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշումը՝ հաշվետվության ձևաչափը հաստատելու մասին:
4. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022թ. սեպտեմբերի 26-ի 16-Ն հրամանը՝ ազդակիր բնակավայրերի ցանկը սահմանելու մասին:

Այս բոլոր ենթաօրենսդրական ակտերն ուժի մեջ են մտել 2023թ. հունվարի 1-ից:

Հայաստանը մինչև 2023թ. չի ունեցել ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող հստակ քաղաքականություն և ռազմավարություն, որը թույլ կտար ունենալ տեսլական և իրականացնել կոնկրետ գործողություններ առկա խնդիրների լուծման և ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար: Այս պատճառով մեծ նշանակություն ունի 2023թ. մայիսի 11-ին ՀՀ կառավարության 730-Լ որոշմամբ հաստատված «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035թ.)»: Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության հիմնական նպատակն է ոլորտի կարգավորմանն ու առաջընթացին օժանդակելը, ինչպես նաև այն կօգնի ապահովել, որ հանքարդյունաբերությունն ունենա դրական և օրինաչափ դերակատարում Հայաստանի կայուն զարգացման և տնտեսական աճին նպաստելու հարցում: Այն միտված է տնտեսության երկարաժամկետ զարգացմանը, բնական ռեսուրսների արդյունավետ շահագործմանը, բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարմանն ու նվազեցմանը: Ռազմավարությամբ նախատեսված հիմնական նպատակներին և թիրախային ուղղություններին անդրադարձ կկատարվի 2023թ. ԱՃԹՆ տարեկան զեկույցում:

### **3.1.4. Ընդերքօգտագործման ոլորտում իրավասություն ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և նրանց լիազորությունները**

Հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործման ոլորտում իրավասություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են՝

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ),
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ),
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն (2023թ. հունիսի 30-ից գործառույթները փոխանցվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը),
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտե,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
- «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ,
- «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ,
- «Հիդրոոգերնութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ,
- Տեղական ինքնակառավարման մարմիններ:

Հայաստանի Հանրապետության ընդերքօգտագործման ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները մեծ դեր են կատարում, որոնց պարտականությունները և լիազորությունները հիմնականում կենտրոնացած են ընդերքի բնական ռեսուրսների արդյունավետ ու կայուն օգտագործման և կառավարման, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման վրա:

Հայաստանի Հանրապետության ընդերքօգտագործման ոլորտում պետական և մունիցիպալ մարմինների գործառույթները և լիազորությունները համախմբում են մի շարք կարևոր գործոններ՝ ներդնելով քաղաքականություն, կատարելով վերահսկողություն և ապահովելով որակի ու կայունության չափանիշները, որպեսզի երկրի բնական ռեսուրսների օգտագործման ոլորտում ապահովվի արդյունավետությունը, պատասխանատվությունը և թափանցիկությունը:

Թվարկված պետական և մունիցիպալ մարմինների իրավասությունների շրջանակը մանրամասն ներկայացված է ԱՃԹՆ նախորդ զեկույցներում<sup>51</sup>: Հարկ ենք համարում նշել միայն, որ հաշվետու՝ 2022թ. դեկտեմբերի 16-ին Ազգային ժողովի կողմից ընդունված օրենսդրական փոփոխություններով<sup>52</sup> ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթները՝ 2023թ. հունիսի 30-ից փոխանցվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը:

### 3.1.5 Պետության կողմից հանքարդյունաբերական ընկերություններին տրամադրվող արտոնություններ

Հաշվետու ժամանակաշրջանում հանքարդյունաբերական ընկերություններին հարկային արձակուրդներ կամ այլ արտոնություններ տրամադրելու դեպքեր չեն արձանագրվել: Ինչ վերաբերում է վճարումներին, որոնք չեն գրանցվում ազգային կամ համայնքային բյուջեներում (օրինակ՝ արտաբյուջետային միջոցներ), պետք է առանձնացնել բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարները՝ ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար և մշտադիտարկումների իրականացման վճարները՝ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար:

## 3.2. Թույլտվությունների տրամադրման, պայմանագրերի կնքման, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցմանն առնչվող կարգավորումները (պահանջ 2.2, 2.3, 2.4)

ԱՃԹՆ նախորդ զեկույցներում մանրամասն ներկայացվել է տնտեսվարողներին թույլտվությունների տրամադրման, պայմանագրերի կնքման գործընթացները և առաջացող խնդիրները<sup>53</sup>:

Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման գործընթացում հաշվետու տարվա ընթացքում կատարվել է միայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 22-րդ հոդվածի փոփոխությունը, այն է՝ փոփոխություն կատարվել է միայն ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման ընթացակարգում, որը ներկայացված է 3.1.3 ենթազվխում:

Ստորև ամփոփ ներկայացված են թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման և ընդերքօգտագործման իրավունքից հրաժարման հավաստագրերի տրամադրման գործընթացներն ԱՃԹՆ ստանդարտների լույսի ներքո:

<sup>51</sup> Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույց (2019թ.), <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

<sup>52</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=171927>

<sup>53</sup> Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույց, <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման թույլտվությունների ստացման գործընթացը կարգավորվում է Օրենսգրքով: Օրենսգրքի հիման վրա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Լիազոր մարմին) իրականացնում է թույլտվությունների տրամադրման գործընթացը:

### **Ընդերքօգտագործման թույլտվությունների ստացում<sup>54</sup>.**

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) պետք է ներկայացնի դիմում՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումատուի պետական գրանցման համարը, նշում դիմումատուի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին.

2) հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետը՝ հաշվարկված առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա.

3) հաստատված օգտակար հանածոների ցանկը.

4) օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը՝ Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին և Լիազոր մարմնի սահմանած՝ արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան.

5) հանքի փակման ծրագիրը, որը պետք է ներառի՝

ա. հանքի ֆիզիկական փակման ծրագիրը, որում ներառվում է ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,

բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի, ներառյալ՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը հանքի գոյության ընթացքում (ելնելով հանքավայրի շահագործման եղանակից),

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը,

ե. հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հավաստումը,

զ. հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները.

6) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

7) դիմումը ներկայացնելուց հետո, մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումն ընկած ժամանակահատվածում իրական շահառուի փոփոխության դեպքում, փոփոխության պետական գրանցումից հետո իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք.

<sup>54</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=72865>

8) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.

9) ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ.

10) ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները.

11) շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար սահմանված պետական տուրքի անդորրագիրը.

12) սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման դեպքում սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությունը:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունք ստանալու համար 2022թ. ընթացքում Լիազոր մարմին է ներկայացվել 10 դիմում, որոնցից մերժվել է 6-ը, հիմնականում՝ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ Լիազոր մարմնի կողմից նշված թերություններն օրենսգրքով սահմանված ժամկետում չվերացնելու հիմքով, 1-ը՝ ընդերքի հայցվող տեղամասն այլ ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնված լինելու հիմքով: 2022թ. ընթացքում Լիազոր մարմնի կողմից տրամադրվել է երկրաբանական ուսումնասիրության նպատակով 4 ընդերքօգտագործման իրավունք:

### **Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ստացում**

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ստացման համար պետք է Լիազոր մարմին ներկայացվի դիմում, հետևյալ կից փաստաթղթերով՝

1) դիմումատուի պետական գրանցման համարը.

2) աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը.

3) երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածոն(ները).

4) երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը՝ Օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասին և լիազոր մարմնի սահմանած՝ ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան.

5) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

6) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ դիմումը ներկայացնելուց հետո մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումն ընկած ժամանակահատվածում իրական շահառուի փոփոխության դեպքում, փոփոխության պետական գրանցումից հետո իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք.

7) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.

8) ներկայացված փաստաթղթերի ցանկը.

9) սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող հանքերակույմներից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների ուսումնասիրության դեպքում՝ սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությունը:

**Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն** հայցելու համար Լիազոր մարմին է ներկայացվում դիմում, հետևյալ կից փաստաթղթերով.

1) դիմումատուի անվանումը, հասցեն (գտնվելու վայրը).

2) դիմումատուի պետական գրանցման համարը.

3) աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը.

4) երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը՝ Օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասին և Լիազոր մարմնի սահմանած՝ ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան.

5) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը.

6) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

7) դիմումը ներկայացնելուց հետո, մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումն ընկած ժամանակահատվածում իրական շահառուի փոփոխության դեպքում, փոփոխության պետական գրանցումից հետո իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք.

8) ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Ներկայացված դիմումի հիման վրա Լիազոր մարմինը կատարում է անհրաժեշտ ուսումնասիրություններ և կայացնում համապատասխան որոշում: Դիմումների մերժման հիմքերն Օրենսգրքով սահմանված են սպառիչ: Առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված և դրական եզրակացություն ստացած օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի կամ առանց Լիազոր մարմնի հետ համաձայնեցված կամ առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն ստացած՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ծրագրի՝ ընդերքօգտագործման արգելվում է:

Այսպես, գործող կարգավորումների համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքի հիմքում ընկած են չորս հիմնական փաստաթղթեր՝

- 1) փորձաքննություններ անցած նախագիծը (օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում) կամ ծրագիրը (օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների դեպքում),
- 2) ընդերքօգտագործման թույլտվությունը,
- 3) լեռնահատկացման ակտը,
- 4) ընդերքօգտագործման պայմանագիրը:

**Ընդերքօգտագործման պայմանագրի կնքում**

Ընդերքօգտագործման թույլտվությունն ու լեռնահատկացման ակտն իրավական բնույթով վարչական ակտեր են: Դրանք ընդերքօգտագործողին տրամադրվում են Լիազոր մարմնի կողմից, մինչդեռ ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվում է իրավունքի երկու սուբյեկտների՝ պետական կառավարման մարմնի և մասնավոր ընկերության միջև և քաղաքացիաիրավական պայմանագիր է:

Կողմերը կնքում են ընդերքօգտագործման պայմանագիրը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքերով: Պայմանագիրը մանրամասնորեն նախատեսում է բոլոր պայմանները՝ ներառյալ, գործառնությունների ժամկետները, ընդերքօգտագործողի իրավունքներն ու պարտականությունները և այլ կարևոր կետեր: Մասնավորապես՝ երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը ներառում է նաև ընդերքօգտագործողի կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամազվիսին հատկացումների և դրանց վճարման ժամանակացույցի մասին տվյալներ, իսկ օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը՝ դրոյթներ ընդերքն օգտագործելիս կատարվող վճարների հաշվարկման և վճարումների վերաբերյալ, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանության դրամազվիսին և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման հատկացումների վճարումների ժամանակացույցի վերաբերյալ, ինչպես նաև դրոյթներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ:

Ընդերքօգտագործման իրավունքից հրաժարման հավաստագիրը տրամադրվում է Օրենսգրքի 45-րդ (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարում) և 58-րդ (օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտի համարվող ընդերքի տեղամասից հրաժարում) հոդվածներով սահմանված կանոններով:

Հաշվետու տարվա ընթացքում Լիազոր մարմնի կողմից հրաժարման հավաստագիր չի տրամադրվել:

Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է միայն Օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով: *Ձգուշացման և ընդերքօգտագործման իրավունքի կասեցման, դադարեցման հիմքերը սպառիչ թվարկված են Օրենսգրքի 30-րդ հոդվածում, որոնց մանրամասն անդրադարձ կատարված է ԱՃԹՆ 2019 թվականի զեկույցի 86-89 էջերում*<sup>55</sup>:

### **3.2.1. Պետական քաղաքականությունն ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակման ոլորտում**

Օրենսգրքի 9-րդ հոդվածը սահմանում է ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը: Այստեղ ամրագրված են Լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակման ենթակա տեղեկությունները: Նույն հոդվածով սահմանված է նաև, որ Լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև ընդերքօգտագործողների հետ կնքված օգտակար հանածոների արդյունահանման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները:

ԱՃԹՆ պահանջ 2.3-ը սահմանում է, որ ԱՃԹՆ իրականացնող պետությունները պարտավոր են վարել հանրությանը հասանելի գրանցամատյան կամ կադաստրի համակարգ (համակարգեր), որը (որոնք) կպարունակի (կպարունակեն) ստանդարտով սահմանված արդիական և համակողմանի

<sup>55</sup> Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույց, <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

տեղեկություններ՝ ԱՃԹՆ իրականացման համաձայնեցված շրջանակում ընկերություններին տրամադրված լիցենզիաներից յուրաքանչյուրի վերաբերյալ: ՏԿԵՆ-ի կայքում հասանելի են տրամադրված թույլտվությունների մասին տեղեկությունները (մետաղական օգտակար հանածոների արդյունահանման գործունեության մասին տեղեկությունները<sup>56</sup>, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համար գործունեության վերաբերյալ գրանցամատյանը)<sup>57</sup>:

Հրապարակված տեղեկատվությունը ներառում է՝

- թույլտվություն ստացած իրավաբանական անձի անվանումը,
- թույլտվությունը ստանալու համար ներկայացված դիմումի ամսաթիվը,
- թույլտվության համարը, տրամադրման ամսաթիվը և ժամկետը,
- թույլտվությունների երկարաձգման համարները, տարեթիվը, երկարաձգման ժամկետը,
- ընդերքօգտագործման պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը,
- ընդերքօգտագործման պայմանագրերում փոփոխությունների համարը և կնքման ամսաթիվը,
- հանքավայրի (տեղամասի) անվանումը,
- ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները,
- տեղամասի ընդհանուր մակերեսը,
- օգտակար հանածոյի անվանումը,
- տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը, հիմնական և ուղեկից բաղադրիչները և դրանց քանակը,
- հանքի տարեկան արտադրողականությունը:

Լիազոր մարմնի կայքում հրապարակված տեղեկություններն ամբողջությամբ ծածկում են ԱՃԹՆ Ստանդարտի 2.3 պահանջով նախատեսված պարտավորությունները:

Համաձայն Ստանդարտի 2.4 պահանջի՝ Լիազոր մարմնի՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում հանրային հասանելիությամբ հրապարակված են մետաղական<sup>58</sup> օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերը, դրանց հավելվածները, ինչպես նաև փոփոխությունները: Ավելին, Հայաստանի Լիազոր մարմինը նույն սկզբունքով հրապարակում է նաև ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ընդերքօգտագործողների հետ կնքված պայմանագրերը: ՏԿԵՆ-ի կողմից ապահովված է նաև մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի դադարեցման կամ հրաժարման վերաբերյալ տեղեկատվությունը<sup>59</sup>:

Որպես նկատառում, սակայն, պետք է նշել, որ նախարարության կայքում հրապարակված տեղեկությունները դեռ ամբողջությամբ չեն համապատասխանում ԱՃԹՆ-ի կողմից որդեգրված <բաց տվյալների> սկզբունքին, քանի որ դրանց մի մասը համապատասխան ֆորմատով չի հրապարակված:

<sup>56</sup> <https://www.mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=1>

<sup>57</sup> <https://www.mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=2>

<sup>58</sup> <https://www.mtad.am/pages/copies-of-entrails-use-right-agreements>

<sup>59</sup> <https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=3>

Այս նկատառումը, սակայն չի խաթարում բոլոր հետաքրքրված կողմերին՝ տեղեկանալ պայմանագրերի կամ տրամադրված թույլտվությունների առկա ընթացիկ վիճակին և փոփոխություններին:

*Իրավունքների փոխանցում:* Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն այլ սուբյեկտի կարող է իրականացվել միայն ՏԿԵՆ-ի համաձայնությամբ: Առանց լիազոր մարմնի համաձայնության իրականացված գործողությունները չեն ունենա իրավական ուժ: 2022թ. ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման դեպքեր չեն գրանցվել:

*Հաշվետվությունների ներկայացում:* Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողները, բացառությամբ սնանկ ճանաչվածների, ներկայացնում են տարեկան հրապարակային հաշվետվություն՝ էլեկտրոնային եղանակով: Պետական մարմինները՝ Պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, համայնքները (տվյալները ներկայացվում են ՏԿԵՆ-ի միջոցով) հրապարակային հաշվետվությունները ներկայացնում են ԱՃԹՆ [reports.eiti.am](http://reports.eiti.am) առցանց հաշվետվությունների համակարգի միջոցով: Անկախ ադմինիստրատորի կողմից տվյալ հաշվետու տարվա համար այդ հաշվետվություններով ներկայացվող տվյալների ստուգումից և համադրումից հետո՝ դրանք դառնում են հանրայնորեն հասանելի:

Ընդերքօգտագործողներին տրվող հատուկ արտոնություններ սահմանված չեն: Այդպիսի արտոնությունները, որպես կանոն, տրամադրվում են ՀՀ կառավարության կողմից և կրում են անհատական բնույթ:

Համաձայն ԱՃԹՆ 2023 թ. Ստանդարտի 2.4 պահանջի՝ իրականացնող երկրների ԲՇԽ-ներից պահանջվում է հստակեցնել ընդերքի հետախուզման պայմանագրերի բացահայտումը՝ ելնելով դրանց էականությունից և գործնականության նկատառումից: Այս հարցը քննարկվել է Հայաստանի ԲՇԽ-ի՝ դեռ 2022թ. ապրիլի 27-ի նիստում<sup>60</sup>, և այդ ժամանակ, ընդհանուր առմամբ, արձանագրվել է, որ հետախուզման պայմանագրերը էական ֆինանսական հոսքեր չեն ենթադրում, ուստի և կարող են չհրապարակվել, առավել ևս, որ հետախուզման թույլտվությունները հրապարակվում են՝ տրամադրելով լայն տեղեկություններ այդ հետախուզման մասին (2018 թվականի մարտին ընդունված «Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-191-Ն օրենքը<sup>61</sup> սահմանված է, որ ՏԿԵՆ-ը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը<sup>62</sup>, որով բացահայտվում են ընդերքի մասով բոլոր ուսումնասիրությունների գծով թույլտվությունները):

Այդ քննարկման ժամանակ քաղաքացիական հասարակության խմբակցությունը կողմ է արտահայտվել պայմանագրերը հրապարակելուն: Ուստի, քանի որ 2023թ. Ստանդարտով արդեն պահանջվում է հստակեցնել հրապարակվող պայմանագրերի շրջանակը, Հայաստանի ԲՇԽ-ին առաջարկվում է մեկ անգամ ևս անրադառնալ այս հարցին և ընդունել համապատասխան որոշում:

<sup>60</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

<sup>61</sup> [arlis.am/DocumentView.aspx?docid=120753](http://arlis.am/DocumentView.aspx?docid=120753)

<sup>62</sup> <https://mtad.am/pages/right-of-entrails-use>



### 3.2.2. Ընդերքօգտագործման պայմանագրերում կատարված փոփոխություններ հաշվետու տարվա ընթացքում

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել փոփոխություններ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրված ընդերքօգտագործման 3 պայմանագրերում, որոնք հիմնականում վերաբերվում են ժամկետների, պաշարների կամ ընդերքօգտագործողների պարտավորությունների շրջանակների, ինչպես նաև այլ տվյալների փոփոխությանը<sup>63</sup>.

Խնդրո առարկա պայմանագրերում արված փոփոխությունների նկարագիրը ներկայացվում է ստորև.

**1. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության** (այսուհետ սույն կետում՝ Ընկերություն) հետ.2012թ. սեպտեմբերի 26-ին կնքված թիվ ՊՎ – 245 վերաձևակերպված պայմանագրում կատարված փոփոխությանն անդրադարձ է կատարվել նաև նախորդ՝ 2020-2021թթ. ԱՃԹՆ զեկույցում: Կատարված փոփոխությունն առնչվում է անհաղթահարելի ուժի ազդեցության հիմքով պայմանավորված՝ 2022թ. սեպտեմբերի 19-ին Ընկերության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամկետն անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների գործողության ժամկետով երկարաձգելուն. հանքավայրի նկատմամբ ընդերքօգտագործողի տիրապետման և օգտագործման իրավունքի տրամադրման ժամկետը սահմանվել է մինչև 2039թ. մարտի 25-ը, իսկ շինարարական շրջանի վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2024թ. օգոստոսի 28-ը: Նշված նույն հիմքով, ինչ Ընկերության թույլտվության փոփոխությունն է կատարվել, այլ ընկերությունների կողմից Լիազոր մարմին դիմումներ չեն ստացվել:

**2. «Լիճքվազ» ՓԲ ընկերության** հետ 2012թ. նոյեմբերի 22-ին կնքված ՊՎ-293 վերաձևակերպված պայմանագրում տեղի ունեցած փոփոխություններին ևս անդրադարձ կատարվել է նախորդ՝ 2020-2021թթ. ԱՃԹՆ զեկույցում: Կատարված փոփոխություններն առավել մանրամասն ներկայացվում են ստորև.

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-293 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի հիման վրա.2022թ. հուլիսի 18-ին ՊՎ-293 պայմանագրում Ընդերքօգտագործողի պարտավորությունների բաժնում լրացվել են մի շարք նոր պարտավորություններ.

- Լիճքվազ-Թեյի հանքավայրից արդյունահանված հանքաքարի՝ Կապանի լեռնահարստացման ֆաբրիկայում վերամշակման ցուցանիշների բարելավման, հարստացման պոչերի առանձին տեղակայման հնարավորությունների ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ Լիազոր մարմին հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ պարտավորություն՝ մինչև 2022թ. մայիսի 1-ը,
- Ընդերքօգտագործողին տրամադրված լեռնահատակացման տարածքում հարստացման ֆաբրիկայի (այսուհետ՝ Ֆաբրիկա) կառուցման ընդհանրական պլան մշակելու վերաբերյալ պարտավորություն, որում մասնավորապես ներկայացված կլինեն՝
  - Ֆաբրիկայի տեղադիրքի հնարավոր տարբերակները և ընտրված լավագույն տարբերակը
  - Ֆաբրիկայի ընդհանուր կառուցվածքը՝ գլխավոր մասնաշենքը և օժանդակ միավորները
  - Հարստացման սարքավորանքի ցանկը և հիմնական պարամետրերը
  - Հարստացման տեխնոլոգիայի նկարագիրը

<sup>63</sup> <https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative>

- Հարստացման պոչերի կառավարման ներդրվելիք համակարգի հիմնական սկզբունքները,
- Պարտավորություն՝ ձեռնարկելու մի շարք միջոցառումներ ֆաբրիկայի կառուցումը նախաձեռնելու նպատակով (ազդակիր համայնքի ծանուցում, հանրային լսումներ),
- Ֆաբրիկայի կառուցման նախագծի վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական պետական փորձաքննական եզրակացություն ստանալու դեպքում, դիմելու Լիազոր մարմին՝ Ֆաբրիկայի շինարարության և շահագործման վերաբերյալ պարտավորություններ ամրագրելու նպատակով:

**3. «Ատ-Մետալս» ՍՊ ընկերության** հետ 2015թ. հունվարի 1-ին կնքված ՊՎ-514 պայմանագրում 2022թ. հոկտեմբերի 27-ին կատարված փոփոխությունների համաձայն՝

- ընդլայնվել է ընդերքօգտագործողին տրամադրված ընդերքի տեղամասը, ինչպես նաև 6 տարի 11 ամսով երկարաձգվել է ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը՝ մինչև 2029թ. մայիսի 24-ը:
- փոփոխվել է ընդերքօգտագործողին տրամադրված հանքաքարի քանակն ու տարեկան արտադրողականությունը. տարեկան արտադրողականությունը սահմանվել է՝ 45333 տ, իսկ տրամադրված հանքաքարի քանակը՝ 300011 տ (ոսկի-1368.97 կգ, արծաթ – 3971.55 կգ).
- ընդարձակվել են ընդերքօգտագործողի պարտավորությունների ծավալները, մասնավորապես Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N1, N2, N3 և N4 հավելվածները փոխարինվել են նոր N1, N2, N3, N4 և N5 հավելվածներով:

Աղյուսակը ներկայացվում է ստորև.

### Աղյուսակ 3.2.2.1

«Ատ Մետալս» ՓԲ ընկերության սոցիալ-տնտեսական պարտավորությունների փոփոխությունները

Հ/Հ	Պարտավորությունների անվանումը	Տարեկան ներդրման ծավալները նախկինում ՀՀ դրամով, հազ. դրամ	Տարեկան ներդրման ծավալները 27.10.2022թ.-ից հետո ՀՀ դրամով, հազ. դրամ
1.	Մեղրի համայնքի զարգացման սոցիալտնտեսական ծրագրերին մասնակցություն	1500.0	3000.0 Յուրաքանչյուր տարի
2.	Քաջարան համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	3000.0	3000.0 Յուրաքանչյուր տարի
3.	Սոցիալապես անապահով ընտանիքներին դեղորայքի տրամադրում	800.0	800.0 Յուրաքանչյուր տարի

4.	Դպրոցի 1-ին դասարանցիների կարիքների համար ֆինանսական միջոցների տրամադրում	500.0 Յուրաքանչյուր տարի	500.0 Յուրաքանչյուր տարի
5.	Սոցիալապես անապահով ընտանիքներին անհրաժեշտ բժշկական ծառայությունների ֆինանսական փոխհատուցում	800.0 Յուրաքանչյուր տարի	800.0 Յուրաքանչյուր տարի
6.	Գյուղամիջյան միջհամայնքային նշանակության ավտոճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն	ըստ անհրաժեշտության շինարարական տեխնիկայի տրամադրում	ըստ անհրաժեշտության շինարարական տեխնիկայի տրամադրում

Աղբյուրը. «Ատ-Մետալս» ՍՊ ընկերության պայմանագրեր

2023թ. ընթացքում մի շարք փոփոխություններ են կատարվել ստորև թվարկված ընդերքօգտագործման պայմանագրերում, որոնք կներկայացվեն 2023թ. ԱՃԹՆ զեկույցում:

- 2023թ. փետրվարի 2՝ «ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի 12թ. հոկտեմբերի 20-ի ՊՎ-189 պայմանագրում,
- 2023թ. օգոստոսի 14՝ «Թեդուտ» ՓԲԸ-ի 2013թ. փետրվարի 20-ի ՊՎ-376 պայմանագրում,
- 2023թ. օգոստոսի 23՝ «Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ-ի 2թ. օգոստոսի 22-ի ՊՎ-057 պայմանագրում,
- 2023թ. նոյեմբերի 16՝ «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի (նախկին՝ «Չաարատ Կապան» ՓԲԸ) 12թ. նոյեմբերի 27-ի+ ՊՎ-183 պայմանագրում:

### 3.2.3. Հետախուզման պայմանագրերի բացահայում ըստ էականության և գործնականության նկատառումների

2022թ. ընթացքում տրամադրվել է մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 4 ընդերքօգտագործման իրավունք.

1. «ԳԵՈ ՍԵՐՎԵՅ» ՍՊ ընկերությանը 2022թ. հունիսի 1-ին տրամադրվել է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/344 թույլտվությունը, 2 տարի 7 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի հանքային շրջանի Տատնայի պղինձ-ոսկի-բազմամետաղային հանքերակման տարածքում (312.8 հա) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:
2. «ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊ ընկերությանը 2022թ. օգոստոսի 17-ին տրամադրվել է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/355 թույլտվությունը 2 տարի 4 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքային դաշտի Հարավարևելյան «Վլադ» տեղամասի տարածքում (67.5 հա) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:
3. «ԷՆ ԷՌ ԷՄ (Նեյչրլ Ռիսորս Մենեջմենթ)» ՓԲ ընկերությանը ոչ ավել քան 3 տարի ժամկետով 2022թ. հոկտեմբերի 7-ին տրամադրվել է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/342 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածքում

(49.0 հա) պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

4. «Սաուդ Մայն» ՍՊ ընկերությանը 2022թ. հոկտեմբերի 21-ին տրամադրվել է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/361 թույլտվությունը 3 տարի ժամկետով ՀՀ Սյունիքի մարզի Այգեճորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի «Թխկուտ» տեղամասում (68.005 հա) օգտակար հանածոների պաշարների վերագնահատման աշխատանքներ կատարելու համար:

Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տվյալները տեղադրված են ՏԿԵ նախարարության պաշտոնական կայքում<sup>64</sup>: Այսինքն, այս թույլտվությունների մասով նույնպես ՏԿԵ նախարարությունը վարում է հանրային հասանելիություն ունեցող գրանցամատյան: Կայքում ներկայացված տեղեկության համաձայն՝ 2024թ. օգոստոսի 9-ի դրությամբ հանրապետությունում տրամադրված է մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության 8 թույլտվություն: Հաշվի առնելով, որ 2019 և 2020թթ. ընթացքում որևէ թույլտվություն չի տրամադրվել, 2021թ. տրամադրվել է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության 3 թույլտվություն, 2022թ.՝ 4 թույլտվություն, իսկ 2023 թ.՝ 3 թույլտվություն: Կարելի է արձանագրել, որ երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման գործընթացը հանրապետությունում որոշակիորեն կայունացել է, սակայն ուսումնասիրությունները սահմանափակվում են երկրաբանական ուսումնասիրությունների վերջին փուլով՝ երկրաբանահետախուզական աշխատանքներով, որոնց նպատակն է օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզումը և պաշարների հաշվարկումը: Ներկայումս հանրապետությունում իրականացվում են միայն երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ հիմնականում գոյություն ունեցող մետաղական հանքավայրերի օգտակար հանածոների պաշարների քանակի ավելացման նպատակով, և չի ապահովվում ապագա սերունդների համար համապատասխան հանքահումքային հենքի ստեղծումը:

### 3.3. Իրական շահառուների բացահայտում և պետական մասնակցություն (պահանջ 2.5, 2.6, 4.2, 4.5)

#### 3.3.1. Իրական շահառուների բացահայտմանը վերաբերվող իրավական կանոնակարգեր

ԱՃԹՆ 2019 Ստանդարտի 2.5 պահանջի համաձայն՝ անհրաժեշտ է ստեղծել հանրությանը հասանելի ռեգիստրներ, որոնք կներառեն մետաղական օգտակար հանածոյի լիցենզիաների իրական շահառուների տվյալները: Այս ռեգիստրում պետք է նշվեն իրական շահառուների ինքնությունը, մասնակցության չափը, և մասնակցության տեսակը՝ ուղղակի կամ անուղղակի և տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրական (փաստացի) այլ միջոցներով վերահսկողություն իրականացնելը: Պետությունները պետք է փաստաթղթավորեն իրական սեփականության բացահայտման քաղաքականությունը, ներառելով իրավական դրույթները և ընթացիկ կամ ծրագրված բարեփոխումները՝ ի կատարումն օրենքով պետական ռեգիստրին տրված լիազորության, այն է՝ ընթացիկ վերահսկողության իրականացում իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովման նպատակով: ԱՃԹՆ 2019թ.-ի 2.5

<sup>64</sup> <https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=2>

ստանդարտի պահանջից բխում է, որ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը պետք է լինի մանրամասն, համապարփակ և ամբողջական: Դա նշանակում է, որ բոլոր առնչվող տվյալները պետք է ներառեն չհապաղված, ճշգրիտ և լրիվ տեղեկություններ այն անձանց մասին, ովքեր իրականում շահույթ են ստանում կամ վերահսկում են տվյալ կազմակերպության գործունեությունը: Տեղեկությունը պետք է ընդգրկի յուրաքանչյուր իրական շահառուի մասին մանրամասն տեղեկություն: Այսպիսով, ըստ ստանդարտի պահանջների, անհրաժեշտ է ապահովել, որ իրական շահառուների վերաբերյալ բոլոր տվյալները ներկայացվեն ամբողջականությամբ և ճշգրտությամբ, որպեսզի լիարժեք պատկեր լինի ընդերքօգտագործման ոլորտում գործող բոլոր կազմակերպությունների վերաբերյալ, այդ թվում նաև պետական վերահսկողության պահպանման նպատակով:

Հայաստանի Հանրապետությունը վարում է 2.5 պահանջով նախատեսված Իրական շահառուների ռեգիստր, որի տվյալների բացահայտման գծով իրականացված վավերացման արդյունքներով ԱՃԹՆ միջազգային Խորհուրդը 2021թ. հունիսի 10-ին Հայաստանին շնորհել է<sup>65</sup> ամենաբարձր՝ «բավարարող առաջընթաց» գնահատականը:

Հարկ է նշել, որ գործող իրավակարգավորումներով Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր իրական շահառուների և նրանց՝ իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ: Ավելին՝ նախատեսված տեղեկությունների բացահայտման համար իրավաբանական անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը:

ԱՃԹՆ նախորդ տարիների զեկույցներում մանրամասն ներկայացվել է այս ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը, որտեղ հիմնասյուն են հանդիսանում հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը,
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը,
- «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքը:

Վերոգրյալ իրավական ակտերի կիրարկումն ապահովվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության Նախարարի N 416-Ն առ 30 օգոստոսի 2021թ. հրամանով, որով մանրամասն կարգավորվում է իրական շահառուների հայտարարագրեր ներկայացման ողջ գործընթացը (հաստատվել է հայտարարագրի ձևը, ներկայացման, հաստատման կարգը):

Պահպանելով ԱՃԹՆ Ստանդարտի 2.5 պահանջը՝ կարևոր է ընդգծել, որ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումն իրականացվում է այնպես, որ համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի մյուս օրենքներին և կանոնակարգերին: Այս համատեքստում, տեղեկատվությունը հրապարակվում է՝ հաշվի առնելով այն իրավական նորմերը և կանոնները, որոնք վերաբերում են անձնական տվյալների պաշտպանությանը, գաղտնիությանը: Այսպես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի համաձայն՝ **անձնական տվյալը** ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկությունն է, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության՝ մշակողը կարող է անձնական տվյալները

<sup>65</sup> <https://eiti.org/board-decision/2021-32>

փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե դա նախատեսված է օրենքով և ունի պաշտպանության բավարար մակարդակ:

Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը հրապարակվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կայքում՝ <https://www.e-register.am/am/>, ընդ որում՝ վերոգրյալի համատեքստում որոշակի անձնական տվյալներ, ինչպես օրինակ՝ անձնագրային տվյալները, հանրության համար հասանելի չեն:

Ներկայումս, համաձայն ԱՃԹՆ գործընթացում ներգրավված շահագրգիռ կողմերի հետ ունեցած քննարկումների՝ ԻՇ բացահայտումների հետ կապված հիմնական աշխատանքներն ընթանում են տվյալների վերիֆիկացիայի և դրանց օգտագործման կարողությունները զարգացնելու և մեծացնելու ուղղությամբ: Մասնավորապես, համաձայն ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ քննարկվում են ԻՇ հայտարարագրերի տվյալներն ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում ինտեգրելու հարցերը, որոնց վերաբերյալ անրադարձ կկատարվի ԱՃԹՆ հաջորդ Ձեկույցներում:

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից տրամադրված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը ներկայացված են ստորև.

**Աղյուսակ 3.3.1.1**

*Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից տրամադրված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը*

Հայտարարագրի հղումը	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության անվանումը
<a href="https://www.e-register.am/en/companies/1267440">https://www.e-register.am/en/companies/1267440</a>	«Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267456">https://www.e-register.am/am/companies/1267456</a>	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267708">https://www.e-register.am/am/companies/1267708</a>	«Սազամար» ՓԲԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1272746">https://www.e-register.am/am/companies/1272746</a>	«Լեո-Էքս» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1266888">https://www.e-register.am/am/companies/1266888</a>	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1127476">https://www.e-register.am/am/companies/1127476</a>	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1495478">https://www.e-register.am/am/companies/1495478</a>	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)
<a href="https://www.e-register.am/am/companies/1237707">https://www.e-register.am/am/companies/1237707</a>	«Մեզո Գոլդ» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1266780">https://www.e-register.am/am/companies/1266780</a>	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267169">https://www.e-register.am/am/companies/1267169</a>	«Մոլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1272761">https://www.e-register.am/am/companies/1272761</a>	«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ » ՓԲԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267799">https://www.e-register.am/am/companies/1267799</a>	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1272536">https://www.e-register.am/am/companies/1272536</a>	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1266829">https://www.e-register.am/am/companies/1266829</a>	«Լիճքվազ» ՓԲԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1269083">https://www.e-register.am/am/companies/1269083</a>	«Ագարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267633">https://www.e-register.am/am/companies/1267633</a>	«Ասսաթ» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1232638">https://www.e-register.am/am/companies/1232638</a>	«Վայք Գոլդ» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1272552">https://www.e-register.am/am/companies/1272552</a>	«Թեդուտ» ՓԲԸ

Հայտարարագրի հղումը	Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերության անվանումը
<a href="https://www.e-register.am/am/companies/1237755">https://www.e-register.am/am/companies/1237755</a>	«Մարջան Մայնինգ Քոնփանի» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267399">https://www.e-register.am/am/companies/1267399</a>	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267427">https://www.e-register.am/am/companies/1267427</a>	«Ատ-Մետալս» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1195647">https://www.e-register.am/am/companies/1195647</a>	«Բակտեկ Էկո» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267410">https://www.e-register.am/am/companies/1267410</a>	«Գեղի Գոլդ» ՍՊԸ
<a href="https://www.e-register.am/am/companies/1267820">https://www.e-register.am/am/companies/1267820</a>	«Ղարագույլյաններ» ՓԲԸ

Աղբյուրը. ՀՀ էլեկտրոնային ռեգիստր<sup>66</sup>

### 3.3.2. Հանքարդյունաբերական ընկերություններում պետական մասնակցությունը

Ստանդարտի 2.6 պահանջի կիրառման իմաստով, պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունը պետք է համարվի այն ձեռնարկությունը, որտեղ պետությանն է պատկանում տվյալ ընկերությունն ամբողջությամբ կամ մեծ մասով: Այս իմաստով, Հայաստանում պետական ձեռնարկություն չկա:

Սրա հետ միասին, 2022 թվականից ի վեր պետությունն ընդլայնել է իր մասնակցությունն արդյունահանող ընկերություններում:

#### Պետության մասնակցությունը «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատում» (ԶՊՄԿ)

Համաձայն ՀՀ կառավարության 2021թ. հոկտեմբերի 1-ի հայտարարության՝ «Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերությունը նվիրաբերել է իր 25% բաժնեմասը ՀՀ կառավարությանը: Քանի որ «Արդյունաբերական ընկերությանը» պատկանում է ԶՊՄԿ-ի 60%-ը, այս նվիրաբերումը դարձավ ԶՊՄԿ-ի ընդհանուր կապիտալի 15%-ը: 2022թ. օգոստոսին ՀՀ կառավարությունն արդեն ուներ 21.875% բաժնեմաս, որը մնացել է անփոփոխ 2024թ. դրությամբ:

Կառավարությունը չի ստացել որևէ շահաբաժին «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ » ՓԲԸ -ից<sup>67</sup>: Համաձայն ընկերության՝ 2022թ-ին շահաբաժիններ հայտարարելու մասին 2021թ. մայիսին կայացված որոշումը չեղարկվել է:

#### Պետական մասնակցությունը «Լիդիան Արմենիա» ընկերությունում

2023թ. փետրվարի 22-ին ՀՀ կառավարության, Եվրասիական զարգացման բանկի և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր<sup>68</sup>: Հուշագրի շրջանակում ընկերությունը պարտավորվել է նաև ՀՀ կառավարությանը նվիրատվությամբ տրամադրել «Լիդիան Արմենիա» ընկերության կանոնադրական կապիտալի 12.5% բաժնետոմսերը՝ առանց կառավարության կողմից ընկերության կանոնադրական կապիտալում դրամական ներդրումներ կատարելու մասով որևէ պարտավորության:

<sup>66</sup> <https://www.e-register.am/am/search>

<sup>67</sup> [http://www.zcmc.am/files/ZCMC\\_Consolidated%20FS%202022\\_Armenian.pdf](http://www.zcmc.am/files/ZCMC_Consolidated%20FS%202022_Armenian.pdf)

<sup>68</sup> <https://www.primeminister.am/hy/press-release/item/2024/01/18/Cabinet-meeting/>

2024թ. հունվարի 18-ին ՀՀ կառավարությունը N 81-Ա որոշմամբ<sup>69</sup> ընդունել է «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 12.5%-ը՝ որպես նվիրատվություն, սակայն պետական գրանցում դեռևս չի ստացել<sup>70</sup>: Համաձայն ՀՀ կառավարության 2024թ. օգոստոսի 29-ի N 1364-Ա որոշման<sup>71</sup> բաժնետոմսերի սեփականության պետական գրանցումը երկարաձգվել է մինչև 2024թ. նոյեմբերի 1-ը:

### **Կանոնակարգման բացեր և թափանցիկության ապահովման խնդիրներ**

Հայաստանում մետաղական արդյունահանող ընկերություններում պետության մասնակցությանն առնչվող իրավական կարգավորումները որպես այդպիսին բացակայում են: Պետությունն այստեղ գործում է նույն պայմաններով, ինչ մասնավոր անձինք կամ ընկերությունները:

Պետության մասնակցությամբ ընկերությունների շահաբաժինների բաշխումը կարգավորվում է օրենսդրությամբ, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքով:

### **ԱՃԹՆ-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) պահանջներ**

ԱՃԹՆ պահանջները, ինչպիսիք են 2.6, 4.5 և 6.2 կետերը, որոնք վերաբերում են պետական ձեռնարկություններին և քվադի-ֆիսկալ գործարքներին, այս դեպքում կիրառելի չեն, քանի որ նշված պետական մասնակցությամբ ընկերություններն ԱՃԹՆ-ի իմաստով չեն հանդիսանում պետական ձեռնարկություններ/ՊՁ/, ինչպես նաև այդ ընկերությունների արտադրանքը չի հանդիսանում պետության սեփականությունը:

## **3.4. Արդյունահանող արդյունաբերությանն առնչվող ազգային էներգետիկ անցումային պարտավորությունների, քաղաքականության և պլանների վերաբերյալ ամփոփ ակնարկ (ԱՃԹՆ 2023 Ստանդարտի պահանջ 2.1)**

Համաձայն ԱՃԹՆ 2023թ. Ստանդարտի պահանջների՝ իրականացնող երկրները պարտավորվում են բացահայտել էներգետիկ անցման ազգային պարտավորությունները, քաղաքականությունը և պլանները, որոնք էական են արդյունահանող արդյունաբերության համար: ՀՀ կառավարությունն առաջնահերթություն է տալիս էներգաարդյունավետությանն՝ այն դիտարկելով որպես երկրի էներգետիկ անվտանգության, տնտեսական մրցունակության բարձրացման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կրճատման կարևոր գործոն: ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտային քաղաքականությունը հաստատված է «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքով<sup>72</sup>, ինչպես նաև էներգախնայողության ազգային ծրագրերով<sup>73</sup>:

Այս շրջանակներում, Հայաստանը միջազգային ինտեգրացիոն ընթացակարգերի մաս է կազմում: Դրանցից են Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) «էներգասպառող սարքավորումների

<sup>69</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188751>

<sup>70</sup> <https://www.e-register.am/am/companies/1545039/beneficiary.pdf>

<sup>71</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=196911>

<sup>72</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67719>

<sup>73</sup> [Energy Sector Development Strategic Program to 2040 .pdf \(asiapacificenergy.org\)](https://www.asiapacificenergy.org/Energy_Sector_Development_Strategic_Program_to_2040_.pdf)



Էներգաարդյունավետությանը ներկայացվող պահանջների մասին» տեխնիկական կանոնակարգը, որի պահանջները Հայաստանը պարտավորվել է իրականացնել: Եվրոպական միության և ՀՀ միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) Հայաստանը պետք է առաջիկա տարիներին իր օրենսդրությունը համահունչ դարձնի Եվրոպական Միության 65 կանոնների՝ ուղղված էներգաարդյունավետության բարելավմանը:

Ինչպես նաև երեք պետական ռազմավարություններ նպաստում են էներգետիկ անցմանը: Դրանք են.

1. Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030թթ. Ազգային մակարդակով սահմանված գործողություններ<sup>74</sup>, որն ընդունվել է 2021թ.-ին

Սա համընդհանուր փաստաթուղթ է, որը սահմանում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման հավակնությունները ողջ տնտեսության կտրվածքով: Հայաստանի Հանրապետությունն իր թարմացված NDC-ում ընդունում է NDC-ի իրականացման տասնամյա ժամկետ (2021-2030): Հայաստանը պահպանում է իր 2050 թվականի մեղմման նպատակը՝ նվազեցնելով իր ջերմոցային գազերի արտանետումները մինչև առավելագույնը 2,07 tCO<sub>2</sub>eq/capita: Փաստաթուղթը նշում է, որ պետք է արտացոլվի երկրի Ցածր ածխածնային զարգացման երկարաժամկետ ռազմավարությունում (LT-LEDS): NDC-ներում առաջնահերթություն տրված ոլորտներն են էներգետիկան, գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և հողօգտագործման այլ ոլորտները, արդյունաբերական գործընթացները և արտադրանքի օգտագործումը և ջրի ոլորտը:

2. Երկարաժամկետ ցածր արտանետումների զարգացման ռազմավարություն<sup>75</sup>, որն ընդունվել է 2023թ.-ին

Ռազմավարությունը նպաստում է ցածր արտանետումների զարգացման սցենարներին, դրանց իրականացման առաջնահերթություններին և միջոցառումներին, ինչպես նաև ներդրումների և ֆինանսավորման շրջանակներին՝ ԶԳ ցածր արտանետումներին հասնելու համար: Ռազմավարության մեջ առաջնահերթություն տրված ոլորտները համապատասխանում են NDC փաստաթղթում նշված ոլորտներին:

3. Կլիմայի փոփոխության վերաբերյալ Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրություն<sup>76</sup>, որն ընդունվել է 2020թ.-ին

4-րդ ազգային զեկույցը տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի ջերմոցային գազերի արտանետումների մասին՝ ըստ էներգետիկայի, արդյունաբերական գործընթացների և արտադրանքի օգտագործման, գյուղատնտեսության, թափոնների, անտառային տնտեսության և հողօգտագործման ոլորտների: Այն տեղեկատվություն է տրամադրում ջերմոցային գազերի արտանետումների մեղմման հիմնական քաղաքականության և միջոցառումների, ԶԳ արտանետումների կանխատեսումների և մեղմման քաղաքականության և միջոցառումների ազդեցության գնահատման, կլիմայի փոփոխության կանխատեսումների, խոցելիության գնահատման և հարմարվողականության միջոցառումների մասին: Զեկույցը կարևոր է ջերմոցային գազերի արտանետումների և ՀՆԱ-ի էներգիայի ինտենսիվության կոնկրետ ցուցանիշների տրամադրման առումով:

<sup>74</sup> <https://unfccc.int/sites/default/files/NDC/2022-06/NDC%20of%20Republic%20of%20Armenia%202021-2030.pdf>

<sup>75</sup> [https://unfccc.int/sites/default/files/resource/UNDP%20LT\\_LEDS\\_ARMENIA.pdf](https://unfccc.int/sites/default/files/resource/UNDP%20LT_LEDS_ARMENIA.pdf)

<sup>76</sup> [https://unfccc.int/sites/default/files/resource/NC4\\_Armenia\\_.pdf](https://unfccc.int/sites/default/files/resource/NC4_Armenia_.pdf)

Նշված երեք փաստաթղթերի ոլորտային դասակարգումն առանձին չի ներառում հանքարդյունաբերության ոլորտը: Այնուամենայնիվ, ձեռնարկված էներգետիկ անցումային միջոցառումները, ներառյալ կլիմայի փոփոխության մեղմման կամ հարմարվողականությանն ուղղված քաղաքականություններն ու ռազմավարություններն ունեն անուղղակի փոխազդեցություն հանք արդյունաբերության ոլորտի վրա: Քանի որ հանքարդյունաբերության ոլորտը կարող է իրականացնել էներգատար գործունեություն, ազդեցություն ունենալ հողի և ջրային ռեսուրսների վրա, նպաստել արդյունաբերական արտանետումների վրա և ազդել շրջակա էկոհամակարգերի և գյուղատնտեսության արտադրողականության վրա:

Հանքարդյունաբերությունը պետք է ներդնի կայուն զարգացման սկզբունքներ՝ օգտագործելով վերականգնվող էներգիա, խնայելով ջրային ռեսուրսները և պաշտպանելով կենսաբազմազանությունը: Հանքարդյունաբերության արտադրանքը, մասնավորապես պղինձն ու ցինկը, կարևոր դեր ունեն կանաչ տեխնոլոգիաների, ինչպիսիք են էլեկտրական մեքենաները, արտադրության մեջ: Բայց ոլորտում օգտագործվող էներգիան ինքնին ածխածնի արտանետումների աղբյուր է: Ոլորտը բնապահպանական ազդեցություն ունի, որն արտահայտվում է, օրինակ, հանքերում նավթի և դիզելային տեխնիկայի օգտագործման արդյունքում առաջացող արտանետումներով: Այսպիսով, նոր հանքարդյունաբերական նախագծերի և լիցենզավորման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման հնարավորությունները: Ըստ ՀՀ հանքարդյունաբերության զարգացման ռազմավարական ծրագրի<sup>77</sup> անհրաժեշտ է խրախուսել հանքարդյունաբերական ընկերություններին նվազեցնել ածխաթթու գազի արտանետումները և անցնել վերականգնվող էներգիայի աղբյուրների: Պետք է մշակվի և կիրառվի գազերի արտանետումների գնահատման և մոնիտորինգի ուղեցույց, որը թույլ կտա գնահատել հանքարդյունաբերության գործունեության արտանետած ածխածնի հետքերը: Հանքարդյունաբերության ոլորտում էլեկտրական մեքենաներին և վերականգնվող էներգիայի աղբյուրներին անցումը, ընդհանուր առմամբ, կարելի է դիտարկել որպես Հայաստանում «կանաչ» տնտեսության անցման մաս:

Այս փոփոխությունների և բարեփոխումների իրականացմանն աջակցում են ԱՃԹՆ ստանդարտի պահանջները, որոնք խրախուսում են ներկայացնել ածխածնի գնագոյացման մեխանիզմներ կամ ածխածնի հարկերը՝ որպես արդյունաբերության կարևոր գործոններ:

### Մեծ Բրիտանիայի փորձը

Մեծ Բրիտանիայի փորձն էներգետիկ անցման ոլորտում կարևոր օրինակ է Հայաստանի համար: Մեծ Բրիտանիան հետևողականորեն աշխատում է ածխածնի արտանետումների նվազեցման և վերականգնվող էներգիայի զարգացման ուղղությամբ՝ ներառելով ածխածնի հարկման և գնագոյացման մեխանիզմներ:

Հայաստանում հնարավոր է կիրառել հետևյալ գործողությունները՝ հիմնվելով Մեծ Բրիտանիայի փորձի վրա.

1. **Ածխածնի հարկում** – Հայաստանը կարող է ներդնել ածխածնի հարկման համակարգ, որը կխթանի արդյունաբերական ընկերություններին նվազեցնել ածխածնի արտանետումները:
2. **Վերականգնվող էներգիայի խթանում** – Պետք է ակտիվորեն խթանվի վերականգնվող էներգիայի օգտագործումն արդյունահանող արդյունաբերության մեջ, հատկապես նոր նախագծերի համար:

<sup>77</sup> Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն (մինչև 2035թ.) [arlis.am/DocumentView.aspx?DocID=177824](https://arlis.am/DocumentView.aspx?DocID=177824)

3. **Շրջակա միջավայրի հաշվետվողականություն** – Անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան արդյունաբերության կանոնավոր աուդիտ անցկացնել կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի չափանիշներին համապատասխան:

Մեծ Բրիտանիայի փորձը, որը ներառում է էներգետիկ անցման գործընթացների կառավարման օրինակներ, կարող է ծառայել որպես մոդել, որտեղ կլիմայի փոփոխության դեմ պայքարի ոլորտում կարող են կիրառվել արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլեր նաև ՀՀ հանքարդյունաբերական ոլորտում:

Հայաստանի ԱՃԹՆ-ին խորհուրդ է տրվում որդեգրել նմանատիպ մոտեցում՝ օգտագործելով ԲՇԽ անդամների ներուժը, նոր դրույթները համապատասխանեցնելու համար: Ընկերությունները պետք է խրախուսվեն էկոլոգիապես ավելի մաքուր դառնալու համար, ինչն իր մեջ կարող է ներառել նոր էլեկտրական սարքավորումների ձեռքբերում, էլեկտրական մեքենաների ձեռքբերում կամ արևային պանելների քանակության մեծացում՝ էներգիա խնայելու համար: Ինչպես նաև, ըստ ԱՃԹՆ 2023 Ստանդարտի<sup>78</sup>, իրականացնող երկրներից պահանջվում է բացահայտել արդյունահանող արդյունաբերությանն առնչվող ազգային էներգետիկ անցումային պարտավորությունների, քաղաքականության և պլանների վերաբերյալ ամփոփ ակնարկ:

Որևէ ընթացակարգային և իրավական խոչընդոտ էներգետիկ անցման վերաբերյալ ընդունված գործողությունների մասով առկա չէ:

Առաջարկվում է ԱՃԹՆ կայքում հրապարակել այն փաստաթղթերը, որոնք առընչություն ունեն հանքարդյունաբերության ոլորտի էներգետիկ անցման և նախատեսված գործողությունների հետ:

<sup>78</sup> <https://eiti.org/sites/default/files/2023-06/2023%20EITI%20Standard.pdf>

4. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ,  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԻՐԱՅՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ  
ՀԱՆՔԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱ  
Ն ՈԼՈՐՏՈՒՄ

## 4. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ


### 4.1. Հանքարդյունաբերության ոլորտի օգտակար հանածոների պաշարների հետախուզումը (պահանջ 3.1)

Ստանդարտի սույն պահանջով ԱՃԹՆ անդամ-պետությունները պարտավոր են բացահայտել հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ցանկացած նշանակալի հետախուզական գործունեության տվյալները:

Ըստ ՏԿԵՆ-ից ստացված տեղեկատվության՝ 2022թ. մետաղական օգտակար հանածոների նոր հանքավայրերի պաշարներ չեն հաստատվել: Ուստի 2020-2021թթ. զեկույցում ներկայացված ՀՀ տարածքում հաստատված մետաղական հանքաքարերի պաշարների մասին տվյալները մնացել են անփոփոխ:

#### Գծապատկեր 4.1.1


2010 – 2022թթ. մետաղական հանքաքարի հաստատված քանակն ըստ մարզերի, հազ. տոննա



Աղբյուրը. Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից

**Գծապատկեր 4.1.2**

2010 – 2022թթ. մերաշխական օգտակար հանածոների հաստատված պաշարների քանակն ըստ մարզերի, հազ. տոննա




Աղբյուրը. Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից

**Երկրաբանական ուսումնասիրություններ**

Ընդերքի ուսումնասիրությունները՝ երկրաբանական աշխատանքների միջոցով, շատ կարևոր դեր ունեն նոր հանքեր հայտնաբերելու համար: Այդ ուղղությամբ ամեն տարի կատարվում են ներդրումներ, որի արժեքը 2012-2022թթ. համար ներկայացված է ստորև տեղակայված աղյուսակում:

**Գծապատկեր 4.1.3**

2012 – 2022թթ. երկրաբանական ուսումնասիրությունների ծավալը, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը. ՀՀ Վիճակագրական կոմիտե<sup>79</sup>

<sup>79</sup> [eco\\_book\\_2022\\_3 \(armstat.am\)](http://eco_book_2022_3.armstat.am)

Նշված ժամանակահատվածում երկրաբանական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 5,189 մլն. ՀՀ դրամ: 2010-2021 թվականների ընթացքում տեղի ունեցած երկրաբանական ուսումնասիրությունների ծավալը, ինչպես նաև տարեկան փոփոխությունները և դրանց պատճառները ներկայացված են 2020-2021թթ. ԱՃԹՆ զեկույցում<sup>80</sup>:

2022թ. գրանցվել է կտրուկ աճ, և մոտ 6 անգամ գերազանցվել է նախորդ տարվա արժեքը: 2022թ. կատարված երկրաբանական ուսումնասիրությունների ծավալն ըստ բնագավառների և աշխատափուլերի ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

#### **Աղյուսակ 4.1.1**

*2022թ. երկրաբանական ուսումնասիրությունների ծավալն ըստ բնագավառների և աշխատափուլերի, հազ.ՀՀ դրամ<sup>81</sup>*

Բնագավառը	Ընդամենը	Ըստ փուլերի				
		Որոնողական	Որոնողական-գնահատողական	Նախնական - հետախուզական	Մանրակրկիտ հետախուզական	Այլ աշխատանքներ
Գունավոր մետաղներ	199,372.7	199,373	-	-	-	-
Ազնիվ մետաղներ	201,972.7	199,373	2,600	-	-	-
Ոչ մետաղներ	107,500	3,638	4,657	53,359	45,846	-
Հիդրոերկրաբանական և	450	-	400	50	-	-

<sup>80</sup> [https://www.eiti.am/files/annual\\_reports/main/1/2020-2021\\_EITI\\_Report\\_Armenia\\_arm.pdf](https://www.eiti.am/files/annual_reports/main/1/2020-2021_EITI_Report_Armenia_arm.pdf) գլուխ 3.2, էջ 52

<sup>81</sup> **Որոնողական.** Այս փուլի նպատակը հանքանյութերի կանխատեսման համար բավարար երկրաբանական հիմք ձևավորելն է: Այս փուլի արդյունքում որոշվում են կառույցներ, ձևավորումներ և տարածքներ, որոնք նպաստավոր են հանքանյութերի հայտնաբերման համար, ստեղծվում են 1:1 500,000 – 1:50,000 մասշտաբի երկրաբանական քարտեզներ, գնահատվում են P2 և P3 դասերին պատկանող հանքանյութերը:

**Որոնողագնահատողական.** Այս փուլում իրականացվում է տարածքի երկրաբանական ուսումնասիրություն, հայտնաբերվում են հանքանյութերի դրսևորումները: Այս փուլի արդյունքը տեղանքի երկրաբանական կառուցվածքի, հեռանկարային տարածքների և P1 և P2 դասի ռեսուրսների համապարփակ ուսումնասիրությունն է:

**Նախնական հետախուզական.** Այս փուլում իրականացվում է հանքավայրի արդյունաբերական արժեքի գնահատում: Այս փուլի արդյունքն հանքավայրի արդյունաբերական արժեքի, պահուստների գնահատման և C1, C2 և P1 դասերին պատկանող ռեսուրսների վերաբերյալ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն է:

**Մանրակրկիտ հետախուզական.** Այս փուլում իրականացվում է հանքավայրի երկրաբանական կառուցվածքի, հանքանյութերի որակական և տեխնոլոգիական հատկությունների և տեղանքի հիդրոերկրաբանական ու ճարտարագիտաերկրաբանական պայմանների ուսումնասիրություն: Արդյունքում ստանում ենք հանքավայրի զարգացման և ըստ A, B, C1, C2 կատեգորիաների հանքանյութերի պաշարների պայմաններ և տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:

Բնագավառը	Ընդամենը	Ըստ փուլերի				
		Որոնողական	Որոնողական-գնահատողական	Նախնական - հետախուզական	Մանարակրկիտ հետախուզական	Այլ աշխատանքներ
Ինժեներաերկրաբանական						
Այլ աշխատանքներ	8,238	-	-	8,038	-	200
<b>Ընդամենը</b>	<b>517,533</b>	<b>402,383</b>	<b>7,657</b>	<b>61,447</b>	<b>45,846</b>	<b>200</b>

Աղբյուրը. ՀՀ Վիճակագրական կոմիտե<sup>82</sup>

ՀՀ վիճակագրական կոմիտե ներկայացված հաշվետվությունների համաձայն<sup>83</sup> 2022թ. երկրաբանական աշխատանքների ընդհանուր դրամական արժեքը կազմել է 517.533 հազ. ՀՀ դրամ: Հանքարդյունաբերական ընկերությունները երկրաբանական գործունեությունն իրականացնում են բացառապես իրենց նախաձեռնությամբ և կրում են դրանից բխող բոլոր ծախսերը և ռիսկերը: Այս գումարի 77.55%-ը բաժին է ընկնում գունավոր և ազնիվ մետաղների երկրաբանական ուսումնասիրություններին, որից ավելի քան 99%-ը եղել է որոնողական բնույթի: Ի տարբերություն 2022-ի 2021թ. չեն իրականացվել որոնողական և որոնողական-գնահատողական աշխատանքներ: Ինչպես նաև աճել է մանրակրկիտ հետախուզական ուսումնասիրությունները 55.8%-ով: Այս ամենի պատճառ կարող է հանդիսանալ 4 նոր ընկերությունների ստացված թույլտվությունները երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու համար:

## 4.2. Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում արդյունահանումը և արտադրությունը (պահանջ 3.2)

Հանրապետական երկրաբանական ֆոնդի կողմից վարվող՝ ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերակույմների պետական կադաստրում (ՕՀՊԿ), 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառվել են 963 հանքավայր և հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասր (45 մետաղական, 802 պինդ ոչ մետաղական, 29 պինդ ոչ մետաղական՝ հաստատված գիտատեխնիկական խորհրդով (ԳՏԽ) և 18 պինդ ոչ մետաղական՝ արտահաշվեկշռային պաշարներով, 45 ստորերկրյա քաղցրահամ ջրերի, 24 ստորերկրյա ածխաթթվային հանքային ջրերի հանքավայր) և 578 հանքերակույմ (129 մետաղական, 449 ոչ մետաղական): Ընթացիկ տվյալներով՝ 2024թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, հանքավայրերի քանակն ավելացել է 28-ով՝ կազմելով 991 (պինդ ոչ մետաղականը ավելացել է 25-ով, իսկ պինդ մետաղականը՝ արտահաշվեկշռային պաշարներով 3-ով): Հանքերակույմների քանակը չի փոփոխվել:

Հաստատված 45 մետաղական օգտակար հանածոների հանքավայրերը հետևյալն են՝

- 26 ոսկու և ոսկի-բազմամետաղային,
- 7 պղինձ-մոլիբդենային,
- 4 պղնձի,
- 3 երկաթի,

<sup>82</sup> [eco\\_book\\_2022\\_3.armstat.am](http://eco_book_2022_3.armstat.am)

<sup>83</sup> [https://armstat.am/file/article/eco\\_book\\_2022\\_3.pdf](https://armstat.am/file/article/eco_book_2022_3.pdf)



- 2 բազմամետաղային,
- 1 մոլիբդենի,
- 1 մագնեզիումասիլիկատային ապարների և քրոմիտների,
- 1 նեֆելինային սիենիտների:

2022թ. և դրան հաջորդող ժամանակահատվածում մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի և տեղամասերի ցանկում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

#### Աղյուսակ 4.2.1

2022թ. ընդերքօգտագործողների շահագործած հանքավայրեր

Հ/Հ	Ընկերության անվանումը	Հանքավայրի (տեղամասի) անվանումը	Օգտակար հանածոյի անվանումը
1	«Մեղրածոր գոլդ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրածորի ոսկու հանքավայր	ոսկի
2	«Սագամար» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ոսկի
3	«Լեռ-էքս» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական տեղամաս	մոլիբդեն, պղինձ
4	«Ախթալայի լեռնահարստաց ման կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Շամլուղի պղինձի հանքավայր	պղինձ
5	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Հրազդանի երկաթի հանքավայր	երկաթ
6	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	ՀՀ Սյունիքի մարզ, Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
7	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքու նիքի մարզ, Սոթքի ոսկու հանքավայր	ոսկի
8	«Մոլտի Գրոպ» Կոնցեռն ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, Մղարթի ոսկու հանքավայրի թիվ 8 և 5 հանքային մարմիններ	ոսկի
9	«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայր	մոլիբդեն, պղինձ
10	«Վարդանի Ջարթոնքը» ՍՊԸ	ՀՀ Վայոց ձորի մարզ, Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ոսկի
11	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	ՀՀ Վայոց ձորի մարզ, Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի «Տիգրանես», «Արտավազդես» և «Էրատո» տեղամասեր	ոսկեբեր քվարցիտներ
12	«Լիճքվազ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայր	ոսկի, արծաթ, պղինձ
13	«Ագարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Ագարակի պղնձ-մոլիբդենային հանքավայր	պղինձ, մոլիբդեն

Հ/Հ	Ընկերության անվանումը	Հանքավայրի (տեղամասի) անվանումը	Օգտակար հանածոյի անվանումը
14	«Ասսաթ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս	ոսկի, արծաթ
15	«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայր	պղինձ, մոլիբդեն
16	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Այգեծորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական տեղամաս	պղինձ, մոլիբդեն
17	«Ատ-Մետալս» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրասարի ոսկու հանքավայր	ոսկի
18	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, Արջուտի ոսկու հանքավայր	ոսկի, արծաթ, պղինձ
19	«Գեղի Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Ոսկեծորի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ոսկի
20	«Ղարագույաններ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի Կենտրոնական տեղամաս	ոսկի
21	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս	ոսկի
22	«Վայք Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզ, Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ոսկի
23	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրածորի ոսկու հանքավայրի Լուսաջուր տեղամաս	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
24	«Մարջան Մայնինգ Քոնֆանի» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար

Աղբյուրը. ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկություն

2022թ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտում արդյունահանման գերակշիռ մասը բաժին է ընկնում պղինձ-մոլիբդենային հանքաքարին: Ընդերքօգտագործող ընկերություններից արդյունահանում է իրականացրել 10 կազմակերպություն, որոնք ներկայացված են աղյուսակ 4.2.2: Ի տարբերություն նախորդ տարիների, 2022թ. արդյունահանում չի իրականացրել «Ղարագույաններ» ՓԲԸ-ն, որը 2021թ. արդյունահանել էր չնչին ծավալով: «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ն վերջին 2 տարիներին արդյունահանմամբ չի զբաղվել և վերջին անգամ արդյունահանել է 2020թ. 1,605 տոննա: Հետևաբար, վերջին 3 տարիների ընթացքում արդյունահանող ընկերությունների ցանկն էապես չի փոխվել: Հաշվի առնելով Հայաստանի տարածքում արդյունահանվող պղինձի և պղինձ-մոլիբդենային հանքաքարի զգալի մեծ ծավալները՝ հարկ է նաև նշել տվյալ հանքերում առկա վճարային համարվող ոսկու և արծաթի բարձր կոնցենտրացիան:

#### **Աղյուսակ 4.2.2**

2021 և 2022թթ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում արդյունահանված հիմնական արտադրատեսակները

Հ/Հ	Հանքաքարի տեսակը	Ծավալ		Ընկերությունը
		2021	2022	
1	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	19,186,227 տ	26,127,430 տ	«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
2	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	7,768,331 տ	20,07,113 տ	«Թեղուտ» ՓԲԸ
3	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	4,500,443 տ	4,414,620 տ	«Ազարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
4	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	-	-	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ
5	Պղնձի հանքաքար	361,945 թմտ	357,507 թմտ	«Ախթալայի Լեռնահարստացվման Կոմբինատ» ՓԲԸ
6	Պղնձի և ոսկու հանքաքար	177,679 չմտ	162,410 չմտ	«Լիճքվազ» ՓԲԸ
7	Ոսկու հանքաքար	1,672,416 տ	1,670,755 տ	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ
8	Ոսկու պարունակությամբ հանքաքար	600,757 տ	647,516 տ	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» )
9	Ոսկու պարունակությամբ հանքաքար	62,660 տ	62,285 տ	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ
10	Ոսկու պարունակությամբ հանքաքար	33,447 տ	10,791 տ	«Ասսաթ» ՍՊԸ
11	Ոսկու պարունակությամբ հանքաքար	6 տ	6,401 տ	«Բակտեկ Էկո» ՍՊԸ
12	Ոսկու պարունակությամբ հանքաքար	0.02 տ	-	«Ղարագույաններ» ՓԲԸ

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Համաձայն ՀՀ ՎԿ-ի հրապարակման<sup>84</sup> 2022թ. մետաղական հանքաքարի արդյունահանման արժեքը կազմել է 485,332.4 մլն ՀՀ դրամ, որը կազմել է ամբողջ արդյունաբերության 17.64%: Նախորդ տարվա համեմատ մետաղական արդյունահանման արժեքը նվազել է 6.1%-ով:

Մետաղական հանքաքարերի արտադրությամբ առաջատարն ինչպես և նախորդ տարիներին Սյունիքի մարզն է, որին 2022թ. բաժին է ընկել արտադրության 90.7%, նախորդ տարի այդ մասնաբաժինը կազմել է ընդհանուրի 81%: Երկրորդ տեղում է Լոռու մարզը, որը կազմում է ընդհանուրի 4.77%, իսկ երրորդը Գեղարքունիքի մարզն է՝ 4.15%-ով: Հանքարդյունաբերական արտադրանքի արժեքի բաշխումն ըստ ՀՀ մարզերի, ամփոփված է ստորև ներկայացված գծապատկերում և աղյուսակում:

#### Աղյուսակ 4.2.3

*Մեդաղական հանքաքարերի արտադրությամբ առաջատար մարզերը՝ ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ*

<sup>84</sup> [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_3%20Industry.%20Construction.%20trade%20and%20services\\_32%20Industry\\_322%20Industry.%20by%20marzes%20and%20Yerevan%20city/IC-ind-marz-01.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_3%20Industry.%20Construction.%20trade%20and%20services_32%20Industry_322%20Industry.%20by%20marzes%20and%20Yerevan%20city/IC-ind-marz-01.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb)


Մարզ	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Սյունիք	168,165	146,159	167,184	236,667	259,558	282,574	300,423	461,652	440,179
Լոռի	10,695	54,899	66,515	79,088	7,263	35,456	57,838	92,571	23,145
Գեղարքունիք	8,279	12,855	14,854	15,089	18,886	23,165	26,435	14,198	20,119
Կոտայք	1,099	1,599	2,547	1,517	1,567	1,750	2,203	1,837	1,889
Ընդամենը	188,238	215,513	251,099	332,362	287,274	342,944	386,900	570,259	485,332

Աղբյուրը. ՀՀ ՎԿ « Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, ըստ մարզերի և ք. Երևանի վիճակագրական տեղեկագիր համապատասխան տարիներ<sup>85</sup>

2014-2022թթ. տվյալների համաձայն ՀՀ մետաղական հանքաքարերի արդյունահանման ամենամեծ աճն արձանագրվել է 2015թ.՝ կազմելով 147.9%<sup>86</sup>:

**Գծապատկեր 4.2.1**

2014-2022թթ. հանքարդյունաբերության ոլորտի տարածքային արտադրանքի ծավալները դրամական արտահայտությամբ, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը. ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մետաղական հանքաքարի արդյունահանված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ըստ մարզերի» հրապարակումը համապատասխան տարիների համար

<sup>85</sup> Նույնը

<sup>86</sup> [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services\\_32%20Industry\\_322%20Industry.%20by%20marzes%20and%20Yerevan%20city/IC-ind-marz-03.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services_32%20Industry_322%20Industry.%20by%20marzes%20and%20Yerevan%20city/IC-ind-marz-03.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb)

Հայաստանում մետաղական հանքաքարի արդյունաբերության հիմնական արտադրանքը պղնձի խտանյութն է, սակայն, բացի պղնձի խտանյութից արտադրվում են նաև մոլիբդեն, ֆեոմոլիբդեն և ցինկ: Բացի այդ, արտադրվում են թանկարժեք մետաղներ, ինչպես, օրինակ, ոսկու հանքաքար և ոսկու ու արծաթի համաձուլվածքներ: Հանքարդյունաբերական արտադրանքի հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալները և արժեքներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

#### Աղյուսակ 4.2.4

2022թ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և արժեքը

N	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն ՀՀ դրամ	Ընկերությունը
1	Պղնձի խտանյութ	թմտ	242,439	56,206	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
2	Պղնձի խտանյութ	չմտ	23,159	13,623	«Թեղուտ» ՓԲԸ
3	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	տ	52,021	22,627	«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
4	Պղնձի հանքաքարեր և խտանյութեր	թմտ	8,415	5,429	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ
5	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	գրամ	2,433,502	54,438	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ
6	Ֆերոմոլիբդեն	տ	8,571	40,599	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
7	Մոլիբդենի խտանյութ	թմտ	7,712	16,463	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
8	Մոլիբդենի խտանյութ	չմտ	232	1,215	«Թեղուտ» ՓԲԸ
9	Մոլիբդենի խտանյութ	տ	878	3,802	«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
10	Թրծած մոլիբդենի խտանյութ	տ	1,415	4,677	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ
11	Ցինկի խտանյութ	չմտ	9,944	7,706	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ

N	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն ՀՀ դրամ	Ընկերությունը
					(նախկին «Չաարատ Կապան» )
12	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	չմտ	5,657	8,170	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» )
13	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	չմտ	9,726	25,457	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» )
14	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	չմտ	5,657	3,227	«Լիճքվազ» ՓԲԸ
15	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	20	0	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ
16	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	10,791	120	«Ասսաթ» ՍՊԸ
17	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	4,082	1,518	«Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ
18	Գունավոր մետաղների հանքաքար	տ	62,285	916	«Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

### Պղնձի խտանյութի արտադրությունը

Հայաստանում հանքարդյունաբերության մեջ առաջատար դիրք է զբաղեցնում պղնձի խտանյութի արտադրությունը: 2022թ. արտադրվել է 326,034 տոննա պղնձի խտանյութ՝ 97,885 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: 2021թ. համեմատ արտադրությունը նվազել է 16.12%-ով, իսկ արժեքը նվազել է 42.45%: Պղնձի խտանյութ արտադրող ընկերությունների շարքում առաջատարը «Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն է, որն ունի ամենամեծ արտադրության ծավալը՝ 242,439 տոննա: 2021թ. կոմբինատն արտադրել է 222,905 տոննա, այսինքն 2022թ. գրանցվել է արտադրանքի ծավալի 8.77% աճ՝ ի համեմատ նախորդ տարվա: Մյուս երեք ընկերությունների արտադրության ծավալները զգալիորեն ցածր են: 2022թ. «Թեղուտ» ՓԲԸ-ն նախորդ տարվա համեմատ էապես կրճատել է պղնձի խտանյութի արտադրության ծավալները՝ 84,983 տոննայից պահպանելով միայն 23,159 տոննա արտադրության ծավալ: Սա մեծ ազդեցություն է ունեցել ընդհանուր 2022թ. պղնձի խտանյութի արտադրանքի նվազման վրա: Թեղուտի հանքավայրի արտադրության ծավալները հաշվետու տարվա կեսից սկսեցին անկում գրանցել, ինչը պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմով, քանի որ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներն ուղղակի ազդեցություն ունեցան ընկերության վրա: Ըստ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հրապարակվող իրական շահառուների հայտարարագրի, որը հրապարակվել է 2023թ. մարտի 10-ին, «Թեղուտ» ՓԲԸ-ի 49.95 %-ի բաժնետերը ռուսաստանյան «ՎՏԲ Բանկ» ՓԲԸ-ն է: Ինչպես նաև, նշվածը հանգեցրել է հանքի գործունեության ժամանակավոր դադարեցման: Նախորդ տարվա համեմատ պղնձի խտանյութ չեն արտադրել «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ -ն և «Լիճքվազ» ՓԲԸ-ն:

**Աղյուսակ 4.2.5**

2022թ. պղնձի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Չափման միավոր	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	թմտ	242,439	56,206	128,972
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	չմտ	23,159	13,623	31,259
«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	թմտ	52,021	22,627	51,920
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Ախթալա	թմտ	8,415	5,429	12,457
<b>Ընդամենը</b>			<b>326,034</b>	<b>97,885</b>	<b>224,608</b>


Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

**Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրություն**

2021թ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրության ընդհանուր ծավալը կազմել է 19,005 տոննա, իսկ 2022թ. այն նվազել է ընդամենը 1.04%-ով՝ դառնալով 18,808 տոննա: Ընդհանուր արժեքը 2021թ. կազմել է 63,790 միլիոն ՀՀ դրամ, իսկ 2022թ. այն աճել է 4.65%-ով՝ հասնելով 66,755 միլիոն ՀՀ դրամի: Ընկերությունների շարքում առաջատարը «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատն» է, որի արտադրության ծավալն աճել է 4.5%-ով: Ֆերոմոլիբդենի արտադրությամբ զբաղվում է միայն «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն, որի արտադրանքը կազմում է 45.6%, իսկ ամբողջ մոլիբդենի խտանյութի արտադրությունը՝ 54.4%:

**Գծապատկեր 4.2.2**

2022թ. Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությունն ըստ ընկերությունների



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

**Ցինկի խտանյութի արտադրությունը**

ՀՀ-ում ցինկ արտադրում է միայն «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ -ն (նախկին «Չաարատ Կապան»): 2021թ. արտադրության ծավալը կազմել է 10,622 տոննա, իսկ 2022թ. այն նվազել է 6.4%-ով՝ հասնելով 9,944 տոննայի: Արտադրության արժեքը 2021թ. կազմել է 8,122 միլիոն ՀՀ դրամ, իսկ 2022թ. այն նվազել է 5.1%-ով՝ դառնալով 7,706 միլիոն ՀՀ դրամ:

**Աղյուսակ 4.2.6**

2021-2022թթ. ցինկի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	2021		2022	
		Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	Սյունիքի մարզ, Կապան	10,622	8,122	9,944	7,706
<b>Ընդամենը</b>		<b>10,622</b>	<b>8,122</b>	<b>9,945</b>	<b>7,706</b>

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

**Ընկերություններից և վիճակագրական կոմիտեից ստացված տեղեկությունների համեմատություն**

Ըստ ընկերությունների և ՀՀ ՎԿ-ի տրամադրած տեղեկությունների՝ կան որոշակի անհամապատասխանություններ, ինչի հիմնական պատճառը չափման միավորների նկատմամբ կիրառված տարբերակված մոտեցումն է:

Պղնձի խտանյութի դեպքում ընկերությունների ներկայացրած տվյալները 6%-ով գերազանցում են ՀՀ ՎԿ-ի ներկայացրած ծավալները, քանզի ՀՀ ՎԿ ներկայացնում է տվյալները տոննայով, մինչդեռ այլ ընկերություններն օգտագործել են թմտ և չմտ չափման միավորները, բացառությամբ «Ագարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ի:

**Աղյուսակ 4.2.7**

2022թ. ընդերքօգտագործող ընկերություններից և վիճակագրական կոմիտեից ստացված տեղեկությունների համեմատություն

Արտադրատեսակը	2022	
	Արտադրանքի ծավալը (տ) ըստ ՀՀ ՎԿ-ի	Արտադրանքի ծավալը (թմտ) ըստ ընկերությունների
Պղնձի խտանյութ	307,590	326,034
Մոլիբդենի խտանյութ	22,333	10,237
Ֆերոմոլիբդեն	9,164	8,571
Ցինկի խտանյութ	9,944	9,945

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ և ՀՀ ՎԿ-ի կողմից

Մոլիբդենի խտանյութի դեպքում զգալի տարբերություն կա. «Չաարատի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ի ներկայացրած տվյալը 54.2%-ով պակաս է ՀՀ ՎԿ-ի ներկայացրած տվյալից: Զգալի



տարբերությունը, բացի ծավալների ներկայացման չափման միավորների տարբերությունից, հիմնականում պայմանավորված է «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ֆերոմոլիբդենի արտադրության մեջ ընդերքօգտագործման լիցենզիա չունեցող երրորդ կողմ հանդիսացող պայմանագրային ընկերությունների ներգրավմամբ: 2022թ., ինչպես և նախորդ տարում, ընկերությունն ունի պայմանագիր «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի և «ԱՄՊ հոլդինգ» ՍՊԸ-ի հետ ֆերոմոլիբդենի արտադրության նպատակով: Նշված երկու ընկերություններն իրենց կողմից արտադրված մետաղի ծավալի մասին տեղեկությունը տրամադրում են ՀՀ ՎԿ, իսկ «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն ներկայացրել է միայն իր սեփական արտադրանքը, քանի որ մյուս ընկերությունները ներառված չեն ԱՃԹՆ շրջանակներում:

Ֆերոմոլիբդենի տվյալները մոտ են իրար, սակայն կա փոքր նվազում 6.5%, ինչը պայմանավորված է ընկերության չմտ չափման միավորով ներկայացման հետ: Յինկի խտանյութի տվյալները գրեթե նույնական են:

**Թանկարժեք մետաղների խտանյութի արտադրությունը**

ՀՀ ՎԿ-ն չի հրապարակում թանկարժեք մետաղների տարանջատված տվյալներ (օրինակ՝ ոսկի, արծաթ), քանի որ, համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետի, թանկարժեք մետաղների և քարերի վերաբերյալ տեղեկությունը համարվում է պետական և ծառայողական գաղտնիք: Այս պատճառով հասանելի են միայն ԱՃԹՆ-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) զեկույցի շրջանակներում ընկերությունների կողմից ներկայացված 2022թ. ոսկու արտադրության տվյալները:

**Աղյուսակ 4.2.8**

2022թ. թանկարժեք մետաղների արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Արտադրատեսակը	Չափման միավոր	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Գեղամասար	Ոսկու և արծաթի դրոն համաձուլվածք	գրամ	2,433,502	54,438
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	չմտ	9,726	25,457
«Լիճքվազ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	չմտ	5,657	3,227
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, Մեղրաձոր	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տ	4,082	1,518
«Մուլտի Գրուպ» Կոնցենդ ՍՊԸ	Մղարթի ոսկու հանքավայր	Ոսկու պարունակությամբ հանքաքարեր	տ	20	0

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Արտադրատեսակը	Չափման միավոր	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Ասսաթ» ՍՊԸ	գ.Քարաբերդ	Ոսկու պարունակությամբ հանքաքարեր	տ	10,791	120

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում ոսկու վաճառքով առաջատարն է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն, որի հաշվին է բաժին ընկնում թանկարժեք մետաղների արժեքի 58.7%-ը: 2022թ.ն արտադրության ծավալով առաջատարը «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ -ն է, որն ապահովել է ընդհանուր արտադրության 42.8%-ը և նախորդ տարվա համեմատ աճեցրել է արտադրությունն 149%-ով: Ընդհանուր թանկարժեք մետաղների արտադրության ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 2.5 անգամ, ինչը պայմանավորված է ոչ միայն ընկերությունների արտադրության մեծացմամբ, այլև «Ասսաթ» ՍՊԸ-ի խոշոր ծավալով արտադրության վերսկսմամբ (10,791 տ. 2022թ.):

Համաձայն ԱՃԹՆ 2023թ. Ստանդարտի 3.2 պահանջի՝ իրականացնող երկրներից պահանջվում է ժամանակին հրապարակել արտադրության տվյալները, ներառյալ արտադրության ծավալներն ու արժեքներն ըստ ապրանքների: Տվյալները պետք է հետագայում բաժանվեն ըստ ծրագրերի, որտեղ դրանք կիրառելի է: Անհրաժեշտության և առկայության դեպքում պետք է բացահայտվի արհեստագործական և փոքրածավալ գործունեությամբ ստացված արտադրության գնահատականը: Ինչպես նաև պետք է բացահայտվեն արտադրության ծավալներն ու արժեքները հաշվարկելու աղբյուրները և մեթոդները: Իրականացնող երկրներից պահանջվում է բացահայտել առկա մեխանիզմները՝ վերահսկելու և ստուգելու արտադրության տվյալների և փաստաթղթերի բացահայտումների ճշգրտությունը, ներառյալ ցանկացած թույլ կողմ՝ կապված հանրությանը հասանելի արտադրության տվյալների համապարփակության և հուսալիության հետ: Արտադրության ծավալների և արժեքների վերաբերյալ տվյալների բացահայտման պահանջը կատարվում է Հայաստանի կողմից: Նշված տվյալների բացահայտումը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար իրականացվում է ընդերքագործող ընկերությունների կողմից՝ հրապարակային հաշվետվությունների միջոցով: Ներկայացվող տվյալների ճշգրտության հիմնական պայման է հանդիսանում դրանց որակի ապահովումը, որի վերաբերյալ անդրադարձն իրականացվել է զեկույցի 1.3 և 7.2 բաժիններում: Տվյալների որակի բարելավմանը կխթանի նաև համակարգված բացահայտումների համակարգի գործարկումը, որը թույլ կտա երկկողմանի ներկայացվող տվյալների համադրումը իրականացնել դրանց ներկայացման պահին: Հայաստանը չունի արհեստագործական և փոքրածավալ գործունեությամբ ստացված արտադրություն:

### 4.3. Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրացման ծավալները և արտահանումը (պահանջ 3.3 և 6.3)

#### 4.3.1. Արտահանումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Ըստ Վիճակագրական Կոմիտեի՝ 2022թ. հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը ՀՀ ՀՆԱ-ում հիմնական ճյուղերից մեկն է և կազմում է 3.8%<sup>87</sup>: Ըստ Comtrade կայքի՝


<sup>87</sup> 1.1.2. ՀՆԱ-ի 2021 թվականի վերջնական հաշվետու և 2022 թվականի վերանայված ցուցանիշները

հանքարդյունաբերությունը 2022թ. ապահովել է ընդհանուր արտահանման 28%<sup>88</sup>: Նույն տարում հանքարդյունաբերության ոլորտի ընդհանուր արտահանումը կազմել է 441.9 հազար տոննա՝ 662.9 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ:

Արտահանման մեջ ամենամեծ բաժինը պատկանում է պղնձի խտանյութին՝ կազմելով հանքարդյունաբերության արտահանման 92.99%-ը: Ցինկի խտանյութը կազմում է 2.68%, մոլիբդենի խտանյութը՝ 2.32%, իսկ ֆերոմոլիբդենի խտանյութը՝ 2,01%: Ընդհանուր առմամբ, 2022թ. թվականին արտահանման ծավալները 2021թ. համեմատ նվազել են 3.91%-ով, սակայն արտահանման արժեքն աճել է 22.2%-ով:

**Գծապատկեր 4.3.1.1**

2021 և 2022թթ. մետաղական արտադրարտեսակների արտահանման կշիռներն ընդհանուր արտահանման մեջ




Աղբյուրը. ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

**Գծապատկեր 4.3.1.2**

2013-2022թթ. մետաղական արտադրարտեսակների արտահանումը, հազ տոննա

<sup>88</sup><https://comtradeplus.un.org/TradeFlow?Frequency=A&Flows=X&CommodityCodes=TOTAL&Partners=0&Reporters=51&period=2022&AggregateBy=none&BreakdownMode=plus>




Աղբյուրը: ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

Պղնձի խտանյուրի արտահանման ծավալները տարեցտարի աճ են գրանցել՝ իրենց գագաթնակետին հասնելով 2019թ.՝ 562 հազար տոննա, որից հետո նկատվում է նվազում: Ցինկի արտահանման ծավալները վերջին տասնամյակում փոփոխություններ քիչ են կրել՝ պահպանելով համեմատաբար փոքր քանակներ: Մոլիբդենի արտահանման ծավալները մինչև 2019թ. եղել են աննշան, սակայն 2020թ. գրանցվել է արտահանման զգալի աճ, որը որոշակի նվազումից հետո պահպանվել է 10 տոննայի մակարդակում 2021-2022թթ.: Ֆերոմոլիբդենի արտահանման ծավալները նույն շրջանում տատանվել են 6-8 տոննա մակարդակում, 2019թ. և 2021-2022թթ. ընթացքում գրանցելով որոշակի աճ:

### Գծապատկեր 4.3.1.3

2013-2022թթ. մետաղական արտադրարտեսակների արտահանումը, մլն դոլար



Աղբյուրը. COMTRADE վիճակագրական կայք

### Պղնձի խտանյութի արտահանում

Պղնձի արտահանումը կազմում է հանքարդյունաբերական արտահանման 92.99% և ունի մեծ ազդեցություն ՀՀ ՀՆԱ-ի վրա: Չնայած 4.33% նվազմանը 2022թ., 2013-2022թթ. միջին աճը կազմել է 10.3%: Աճման միտումը շարունակվել է մինչև 2017թ: 2018թ. պղնձի խտանյութի արտադրության ծավալը նվազել է 25.9%-ով, ինչը համեմատաբար հավասարակշռվել է 2019թ. գրանցված 28.5% աճով:


2022թ. պղնձի Հայաստանից արտահանման առաջատար երկիրը եղել է Չինաստանը, որը կազմել է ընդհանուր արտահանման 41.82%-ը կամ 277.2 միլիոն ԱՄՆ դոլար:

Երկրորդ տեղում է Բուլղարիան՝ Հայաստանից պղնձի արտահանման 31.1%-ով կամ 206.1 միլիոն ԱՄՆ դոլարով:

Երրորդ տեղում է Շվեյցարիան, որը նախորդ տարի եղել է առաջատար, սակայն 43.94% անկումից հետո 2022թ. Հայաստանից պղնձի արտահանումը կազմել է միայն 24.3% կամ 161.2 միլիոն ԱՄՆ դոլար:

### Գծապատկեր 4.3.1.4


2013-2022թթ. պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար



Աղբյուրը. ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

**Գծապատկեր 4.3.1.5**

2022թ. պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների



Աղբյուրը. ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

**Աղյուսակ 4.3.1.1**

Պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
Լոռու մարզ	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Բուլղարիա	8,325 թմտ	4,959	11,379
	«Թեղուտ» ՓԲԸ	Շվեյցարիա, Սինգապուր	11,744 չմտ	10,529	24,160
Սյունիքի մարզ	«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան	52,189 տ	34,591	79,374
	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան, Բուլղարիա	243,871 թմտ	174,478	400,363
<b>Ընդամենը</b>				<b>224,557</b>	<b>515,276</b>

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

Արտահանման ամենամեծ ծավալներն ու արժեքները պատկանում են «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ին, որը գերակշռում է ինչպես արտադրանքի քանակով, այնպես էլ արժեքով՝ արտահանելով 243,871 տոննա արտադրանք հիմնականում դեպի Չինաստան և Բուլղարիա: Նախորդ տարի «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն արտահանել է նաև Վրաստան:

«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն նույնպես զգալի արտահանումներ է կատարում՝ 52,189 տոննա, հիմնականում դեպի Չինաստան: «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի և «Թեղուտ» ՓԲԸ-ի կոմբինատների արտահանումները համեմատաբար փոքր են և ուղղվում են Բուլղարիա, Շվեյցարիա և Սինգապուր: «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ն նախորդ տարիներին արտահանել է դեպի Վրաստան և Բելգիա:

Ընդհանուր առմամբ, արտահանման արժեքը կազմել է 224,557 միլիոն ՀՀ դրամ, որը համարժեք է 515,276 հազար ԱՄՆ դոլարի:

Պղնձի խտանյութը բացի պղնձից պարունակում է նաև թանկարժեք մետաղների՝ ոսկու և արծաթի, վճարվող համարվող քանակություններ: Ստորև ներկայացված է պղնձի խտանյութ արդյունահանող ընկերությունների արտահանման ծավալներն ըստ մետաղների վերջնական պարունակության:

**Աղյուսակ 4.3.1.2**

2022թ. արտահանված պղնձի խտանյութի մեջ վճարվող համարվող մեքուաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	2021		2022	
			Ծավալը	խտանյութի ծավալը	Ծավալը	խտանյութի ծավալը
Լոռու մարզ	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	պղինձ	2,040 չմտ	11,025 թմտ	0 թմտ	8,325 թմտ
	«Թեղուտ» ՓԲԸ	պղինձ	18,042 չմտ	82,721 չմտ	2,526 տ	11,744 չմտ
Սյունիքի մարզ	«Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	պղինձ	11,519 տ	50,038 տ	12,233 տ	52,189 տ
		արծաթ	396 կգ	222,906 թմտ	6,870 կգ	243,871 թմտ
		ոսկի	9,425 կգ		308 կգ	
	«Չաարատ Կապան» ՓԲԸ	պղինձ	2,407 տ	14,158 թմտ	-	
		ոսկի	977 կգ			
		արծաթ	19,991 կգ			

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


**Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտահանումը**

2022թ. ՀՀ-ից արտահանվել է մոլիբդենի և ֆերոմոլիբդենի խտանյութ՝ համապատասխանաբար 10.3 և 8.9 հազար տոննա: Հանքարդյունաբերական ընդհանուր արտահանման մեջ մոլիբդենի և ֆերոմոլիբդենի արտահանումը կազմել է համապատասխանաբար 2.51% և 2.17%: 2021թ. համեմատ 2022թ. մոլիբդենի արտահանման ծավալն աճել է 0.7%-ով՝ մնալով գրեթե կայուն, իսկ ֆերոմոլիբդենի արտահանման ծավալն աճել է 9%-ով: Ստորև ներկայացված է մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտահանման արժեքների բաշխումը՝ ըստ երկրների, ԱՄՆ դոլարով:



**Գծապատկեր 4.3.1.6**

2013-2022թթ. մոլիբդենի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար




Աղբյուրը. ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

2022թ. մոլիբդենի խտանյութի արտահանման հիմնական ուղղությունը, ինչպես 2021-ին, եղել է Զինաստանը: Չնայած արտահանումը նվազել է 19.34%-ով, այն կազմել է մոլիբդենի արտահանման ընդհանուր արժեքի 51.9%-ը՝ 80.5 մլն ԱՄՆ դոլարով: Արտահանման ծավալները կտրուկ աճել են դեպի Ռուսաստանի Դաշնություն, ուր մոլիբդենն արտահանվել է միայն թրձած: 2022-ին արտահանման արժեքը դեպի Ռուսաստանի Դաշնություն նախորդ տարվա համեմատ աճել է 33 անգամ՝ կազմելով մոլիբդենի ընդհանուր արտահանման 19.80%-ը: Աճ գրանցվել է նաև դեպի Բելգիա և Հարավային Կորեա՝ մոլիբդենի արտահանման համապատասխանաբար 12.77% և 6.7%, նախորդ տարվա 4.69% և 4%-ի փոխարեն: 2022թ. մոլիբդեն չի արտահանվել դեպի Շվեյցարիա, որը 2020-2021թթ. եղել էր երկրորդ խոշոր արտահանման ուղղությունը: Արդյունքում, 2022թ. մոլիբդենի խտանյութի արտահանման արժեքն աճել է 26.8%-ով և կազմել է 155.1 մլն ԱՄՆ դոլար:

**Գծապատկեր 4.3.1.7**

2013-2022թթ. ֆերոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը. ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

Ֆերոմոլիբդենի արտահանման հիմնական ուղղությունը եղել է Նիդերլանդները, որը 2013-2022թթ. եղել է Հայաստանից ֆերոմոլիբդենի արտահանման առաջատարը: 2022-ին Նիդերլանդներ արտահանման արժեքն աճել է 13.1%-ով՝ կազմելով 198.3 մլն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է ֆերոմոլիբդենի արտահանման 78.3%-ը: Արտահանման ծավալները դեպի Ռուսաստանի Դաշնություն նույնպես զգալիորեն աճել են՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը գրեթե 5 անգամ: Ընդհանուր առմամբ, ֆերոմոլիբդենի արտահանման արժեքը 2022թ. աճել է 33.5%-ով՝ կազմելով 251.9 մլն ԱՄՆ դոլար:

2022թ. մոլիբդենի խտանյութ և ֆերոմոլիբդեն արտահանել է միայն «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն: Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտահանման ուղղությունները բավականին դիվերսիֆիկացված են:

Մոլիբդենի խտանյութի արտահանման ուղղությունները եղել են Ռուսաստանի Դաշնություն, Բելգիա, Չիլի, Հարավային Կորեա, Թայլանդ, Չինաստան, Վրաստան, իսկ ֆերոմոլիբդենի արտահանման ուղղությունները եղել են Ռուսաստան, Նիդերլանդներ և Լեհաստան:

**Աղյուսակ 4.3.1.3**

2022թ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, արժեքի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
Սյունիքի մարզ	«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Թրծած մոլիբդենի խտանյութ	Ռուսաստանի Դաշնություն	1,192 թմտ	11,316	25,966

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյութ	Չինաստան, Բելգիա, Կորեա, Չիլի, Թայլանդ, Վրաստան	8,041 թմտ	47,778	109,633
	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Ֆերոմոլիբդեն	Նիդերլանդներ, Ռուսաստան, Լեհաստան	8,560 տ	105,676	242,487
<b>Ընդամենը</b>					<b>164,770</b>	<b>378,086</b>

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

Մոլիբդենի խտանյութը և ֆերոմոլիբդենը վճարվող համարվող այլ արտադրատեսակներ չեն պարունակում:

#### Աղյուսակ 4.3.1.4

2022թ. արտահանված մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի մեջ վճարվող համարվող մոլիբդենի վերջնական պարունակությունը

Ընկերության անվանումը	Մետաղը	2021		2022	
		Ծավալը	խտանյութի ծավալը	Ծավալը	խտանյութի ծավալը
«Թեղուտ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	375 տ	768 չմտ	-	-
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	թրծած մոլիբդենի խտանյութ	-	-	717 տ	1,192 թմտ
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	3,784 տ	8,562 թմտ	3580 թմտ	8,041 թմտ
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Ֆերոմոլիբդեն	5,304 տ	7,840 տ	5,975 տ	8,560 տ


Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

#### Ֆինկի խտանյութի արտահանումը

Ֆինկի խտանյութի արտահանումը կազմել է հանքարդյունաբերության ընդհանուր արտահանման ծավալների 2.68%-ը: Արտահանման ընդհանուր արժեքը կազմել է 18.9 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 16.9%-ով:

**Գծապատկեր 4.3.1.8**

Ցինկի խտանյութի արտահանումն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը. ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

2018-ից ի վեր ցինկի խտանյութն արտահանվում է միայն Բելգիա, մինչ այդ արտահանվել է դեպի Հարավային Կորեա, Նիդերլանդներ և այլն:

**Աղյուսակ 4.3.1.5**

Ցինկի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
Սյունիքի մարզ	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	Բելգիա	11,751	8,347	19,145

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

Ցինկի արդյունահանում և արտահանում իրականացնում է միայն «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ն:

Ցինկի խտանյութը, բացի ցինկից, պարունակում է նաև թանկարժեք մետաղների՝ ոսկու և արծաթի, վճարվող համարվող քանակություններ: Ստորև ներկայացված են ցինկի խտանյութ արդյունահանող ընկերության արտահանման ծավալները՝ ըստ մետաղների վերջնական պարունակության:

**Աղյուսակ 4.3.1.6**

2021թ. և 2022թ. արտահանված ցինկի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	2021		2022	
			Ծավալը	խտանյութի ծավալը	Ծավալը	խտանյութի ծավալը
Սյունիքի մարզ	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	ցինկ	6,478.92 տ	11,998 թմտ	6,463.05 տ	11,751 թմտ
		ոսկի	107.98 կգ		118 կգ	
		արծաթ	2,075.65 կգ		2,244.4 կգ	


Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

**Թանկարժեք մետաղների արտադրատեսակների արտահանումը**

Համաձայն ՄԱԿ-ի Comtrade տվյալների՝ 2022թ. թանկարժեք մետաղների արտահանման ընդհանուր արժեքը 2021թ. համեմատ աճել է մոտ 209.6%-ով՝ հասնելով 414.2 մլն ԱՄՆ դոլարի, ինչն արտահանման արժեքի եռապատկում է: Արտահանման քանակն աճել է շուրջ 143.2%-ով, ինչը վկայում է, որ արտահանված մետաղների քանակը նույնպես զգալիորեն ավելացել է:

**Գծապատկեր 4.3.1.9**

2013- 2022թթ. անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի արտահանումն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը. ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

2022թ. թանկարժեք մետաղների ՀՀ-ից արտահանմամբ առաջատար երկիրն ԱՄԷ-ն է, որի արտահանումը կազմել է ընդհանուր թանկարժեք մետաղների արտահանման 61.8%: Արտահանումը դեպի ԱՄԷ զգալիորեն աճել է 48 անգամ: Երկրորդ տեղում Հնդկաստանն է, որը 2021թ. եղել է առաջատար: 2022թ. անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի՝ դեպի Հնդկաստան արտահանման արժեքը նվազել է 22.7% և կազմել ընդհանուր անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի արտահանման 23.54%:

Երրորդ տեղում Թուրքիան է, որի հետ վերջին տասնամյակում արտահանում չի իրականացվել: 2022թ. դեպի Թուրքիա թանկարժեք մետաղների արտահանումը կազմել է ընդհանուրի 14%:

Նշված տվյալների աղբյուր է հանդիսանում ՄԱԿ-ի Comtrade վիճակագրությունը, որտեղ արտահանման տվյալները ներկայացված են ըստ երկրների և արտահանող ընկերությունների վերաբերյալ տվյալները բացակայում են: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներում ևս բացակայում է ըստ ընկերությունների արտահանման տվյալները և այդ տվյալները ստացվում են մաքսային մարմիններից գումարային ցուցանիշներով: Հաշվետու ընկերությունների կողմից ներկայացված տվյալներում առկա չեն ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի արտահանման մասին տեղեկատվությունը, ինչը նշանակում է, որ 2022թ.-ին արտահանող ընկերությունները չեն հանդիսանում արդյունահանող ընկերություններ:

### Աղյուսակ 4.3.1.7

2022թ. ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
Գեղարքու-նիքի մարզ	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	Շվեյցարիա	4.14 տ	60,614	139,087
Կոտայքի մարզ	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Շվեյցարիա	1,310 տ	645	1,480
Սյունիքի մարզ	«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Վրաստան	17,809 թմտ	35,782	82,106
Սյունիքի մարզ	«Լիճքվազ» ՓԲԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Մալազիա	1,253 չմտ	1,227	2,815
<b>Ընդամենը</b>					<b>98,268</b>	<b>225,488</b>

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

2022թ. առաջատար ընկերությունը թանկարժեք մետաղների արտահանմամբ եղել է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն, որի արժեքն արտահանման մեջ կազմել է 61.7% և հիմնական արտադրետեսակը ոսկու և

արծաթի դորե համաձուլվածքն է, իսկ հիմնական արտահանման ուղղությունը Շվեյցարական Համադաշնությունը: Երկրորդ տեղում «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ն է ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի արտահանմամբ, որը կազմում է ընդհանուր արտահանման 36.42%, հիմնական արտահանման երկիրն Իրանն է: Համեմատ ավելի փոքր արժեքներով արտահանել են «Լիճքվազ» ՓԲԸ-ն և «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն դեպի Մալազիա և Շվեյցարական Համադաշնություն համապատասխանաբար:

Ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութը, բացի ոսկուց, պարունակում է նաև թանկարժեք մետաղների՝ ոսկու, արծաթի, ցինկի, կապարի և պղնձի վճարվող համարվող քանակություններ: Ստորև ներկայացված է ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ արդյունահանող ընկերության արտահանման ծավալներն ըստ մետաղների վերջնական պարունակության:

**Աղյուսակ 4.3.1.8**

2022թ. արտահանված ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղ	Չափման միավոր	Մետաղի ծավալը	Խտանյութի ծավալը
Սյունիքի մարզ	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» )	Պղինձ	տ	2,382	17,809 թմտ
		Ոսկի	կգ	1,336	
		Արծաթ	կգ	18,916	
Գեղարքունիքի մարզ	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկի	կգ	2,430	4.14 տ
		Արծաթ	կգ	1,706	
Սյունիքի մարզ	«Լիճքվազ» ՓԲԸ	Պղինձ	տ	78	1,253 չմտ
		Ոսկի	կգ	461	
		Արծաթ	կգ	6,667	
Կոտայքի մարզ	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկի	կգ	28.7	1,310 տ
		Արծաթ	կգ	36.5	

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

**Ընդերքօգտագործող ընկերությունների և ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության տեղեկատվության համեմատություն**

Ըստ ստորև ներկայացված աղյուսակի՝ Հայաստանից արտահանվող արտադրատեսակների ծավալների միջև՝ ընկերություններից ստացված տեղեկության և COMTRADE-ի տվյալների համադրությամբ, առկա է դրամային համարժեքով տարբերություն: Այս տարբերությունները պայմանավորված են ընկերությունների կողմից արտադրանքի արտահանման հայտարարագրման և փաստացի արտահանման ժամանակային տարբերություններով, ինչպես նաև փոխարժեքի տատանումներով:

### Աղյուսակ 4.3.1.9

2021 և 2022թթ. ընդերքօգտագործող ընկերություններից և ՄԱԿ-ի Comtrade-ից ստացած մետաղների արդյունահանման ոլորտի արտահանման փվյալների համեմատություն

Արտադրատեսակը	2021		2022	
	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների, մլն ԱՄՆ դոլար	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ ՄԱԿ Comtrade-ի, մլն ԱՄՆ դոլար	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների, մլն ԱՄՆ դոլար	Արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ ՄԱԿ Comtrade-ի, մլն ԱՄՆ դոլար
Պղնձի խտանյութ	698	769	515	663
Ցինկի խտանյութ	16	16	19	19
Մոլիբդենի խտանյութ	111	122	136	94.2
Ֆերոմոլիբդենի խտանյութ	180	189	242	252
Անմշակ և կիսամշակ ոսկի և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութ	122	134	515	414

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերություններ և ՄԱԿ COMTRADE վիճակագրություն

### 4.3.2. Ներքին իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

2022թ. ներքին շուկայում իրացվել է 12,248.6 մլն ՀՀ դրամի մետաղական արտադրանք, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 7.7%-ով: Պղնձի հանքաքարերի և խտանյութի իրացումը շարունակում է կազմել շուկայի գերակշիռ մասը: Ընկերություններից ներքին իրացման առաջատարն ըստ իրացրած արժեքի «Թեղուտ» ՓԲԸ-ն է, որն իրացման արժեքի առումով զբաղեցնում է շուկայի 54.1%-ը:



Ստորև ներկայացված է 2022թ. ներքին իրացման բաշխումը՝ ըստ ընկերությունների:

#### Աղյուսակ 4.3.2.1

Ներքին շուկայում վաճառք իրականացրած ընկերությունները, իրացրած մետաղական արտադրանքը, ծավալը և դրամային արժեքը

Ընկերություն	Ապրանքի տեսակ	Ծավալի չափման միավոր	Ծավալ	Մետաղների քանակությունը	Ընդամենը իրացման արժեքը, մլն ՀՀ դրամ	Գնորդ կազմակերպություն
«Թեղուտ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյույթ	չմտ	392	մոլիբդեն - 191 տ	3,087	«Մեթալ Լայն» ՍՊԸ
«Թեղուտ» ՓԲԸ	Պղինձ հանքաքարերի խտանյույթ	չմտ	7,042	պղինձ - 1622 չմտ	4,052	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ
«Թեղուտ» ՓԲԸ	Պղինձ հանքաքարերի խտանյույթ	չմտ	2,849	պղինձ - 656 չմտ	1,639	«Այսիսի» ՍՊԸ
«Թեղուտ» ՓԲԸ	Պղինձ հանքաքարերի խտանյույթ	չմտ	9	պղինձ - 2.1 չմտ	5.2	«Նեոսիստեմ» ՍՊԸ
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	տ	2,665	ոսկի - 54 կգ	1,109	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ
				արծաթ - 70 կգ		
«Լիճքվազ» ՓԲԸ	Պղինձ հանքաքարերի խտանյույթ	չմտ	4,641	պղինձ - 300 տոննա ոսկի- 2,442,932 գրամ արծաթ- 21,182,755 գրամ	6,342	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)
«Ասսաթ» ՍՊԸ	Ոչ հայտնի մետաղների հանքաքար	տ	21	ոսկի - 52 գրամ	1.1	«Ասսաթ-Մ» ՍՊԸ
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյույթ	թմտ	280	Մոլիբդեն - 124 տ	13.3	"Արամետ" ՍՊԸ
<b>Ընդամենը</b>					16,248.60	

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

#### 4.4. Միջազգային գները հանքարդյունաբերության ոլորտում


Տվյալ բաժնում ուսումնասիրվել են Վիճակագրական Կոմիտեի տվյալները հանքարդյունաբերական արտադրության վերաբերյալ<sup>89</sup>, ինչպես նաև Համաշխարհային Բանկի կողմից հրապարակված տեղեկությունները՝ միջազգային գների վերաբերյալ<sup>90</sup>: Վերլուծվել և համեմատվել են ՀՀ-ում հանքարդյունաբերական արտադրության ծավալներն ու միջազգային շուկաներում գների փոփոխությունների տենդենցները:

##### Պղնձի խտանյութի արտադրությունը և միջազգային գները

Ըստ ՀՀ ՎԿ-ի՝ պղնձի խտանյութի արտադրության ծավալը 2022թ. կազմել է 307,585տ<sup>91</sup>: Ըստ Համաշխարհային Բանկի՝ 2022թ. պղնձի խտանյութի միջին արժեքը կազմել է 8,822 դոլար/տոննա:

##### Գծապատկեր 4.4.1

2013-2022թթ. պղնձի խտանյութի արտադրությունը և պղնձի միջազգային գինը



Աղբյուրը. ՀՀ Վիճակագրական Կոմիտեի և Համաշխարհային Բանկի տվյալների բազա<sup>92</sup>

<sup>89</sup> <https://www.armstat.am/am/?nid=82&id=2595>

<sup>90</sup> World Bank Commodity Price Data (The Pink Sheet)

<sup>91</sup> Նույնը


<sup>92</sup> [Commodity Markets \(worldbank.org\)](https://www.worldbank.org/commoditymarkets)

Նշված ժամանակահատվածում պղնձի միջազգային գների տարեկան միջին աճը կազմել է 13.9%: Ըստ Համաշխարհային Բանկի տվյալների՝ 2022թ. պղնձի խտանյութի միջինացված տարեկան արժեքը նվազել է 5.31%<sup>93</sup>: Դրա հետ մեկ տեղ 2022թ. ՀՀ-ում պղնձի խտանյութի ծավալները շարունակում են նվազել, նախորդ տարվա համեմատ նվազել են 14%: 2022-ին 2015-ից հետո գրանցվել է արտադրման ամենացածր ցուցանիշը: Միջազգային գների բարձր լինելու հետ համատեղ, իր արտադրական ծավալները մեծացրել է «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն, սակայն ընդհանուր արտադրական ծավալի վրա ազդել է Թեղուտի հանքավայրի արտադրության ծավալների անկումը, ինչը պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմով, քանի որ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներն ուղղակի ազդեցություն ունեցան ընկերության վրա: Ըստ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հրապարակվող իրական շահառուների հայտարարագրի, որը հրապարակվել է 2023թ. մարտի 3-ին, «Թեղուտ» ՓԲԸ-ի 49.95%-ի բաժնետերը ռուսաստանյան «ՎՏԲ Բանկ» ՓԲԸ-ն է: Ինչպես նաև, նշվածը հանգեցրել է հանքի գործունեության ժամանակավոր դադարեցման: Ինչպես նաև, նախորդ տարվա համեմատ պղնձի խտանյութ չեն արտադրել «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ն և «Լիճքվազ» ՓԲԸ-ն, որը նույնպես նպաստել է արտադրական ծավալի նվազման:

**Մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությունը և միջազգային գները**

**Գծապատկեր 4.4.2**

2013-2022թթ. մոլիբդենի խտանյութի և ֆերոմոլիբդենի արտադրությունը և մոլիբդենի միջազգային գինը



Աղբյուրը. ՀՀ Վիճակագրական Կոմիտե և Tradingeconomics կայք<sup>94</sup>, տարեկան միջինացված արժեքը հաշվարկվել է ամսական միջինացված թվերի հիման վրա

<sup>93</sup> Նույնը

<sup>94</sup> [Molybdenum - Price - Chart - Historical Data - News \(tradingeconomics.com\)](https://tradingeconomics.com/molybdenum-price-chart-historical-data-news)


2020թ. մոլիբդենի արտադրության ծավալներում գրանցված 72.45% կտրուկ աճից հետո ՀՀ-ում մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալը շարունակել է պահպանել բարձր մակարդակ: 2022թ. արտադրության ծավալը գրեթե նույնն է եղել, ինչ նախորդ տարում, իսկ ֆերոմոլիբդենի արտադրությունն աճել է 10%-ով:

Ըստ Tradingeconomics կայքի տվյալների<sup>95</sup> 2015թ. ի վեր մոլիբդենի տարեկան միջինացված արժեքը մեկ տոննայի համար աճել է միջինում 21.7%-ով: 2021թ. ռեկորդային գների հաջորդել է 13%-ով նվազում: Ընդհանուր առմամբ, Հայաստանում արտադրական ծավալների աճը համահունչ է միջազգային գների աճին:

**Ցինկի խտանյութի արտադրությունը և միջազգային գները**

**Գծապատկեր 4.4.3**

2013-2022թթ. ցինկի խտանյութի արտադրությունը և միջազգային գինը



Աղբյուրը. ՀՀ Վիճակագրական կոմիտե<sup>96</sup> և Համաշխարհային Բանկի տվյալների բազա<sup>97</sup>

Ցինկի արտադրական ծավալները 2020թ. հետո շարունակաբար նվազում են: 2022թ., նախորդ տարվա համեմատ, արտադրության ծավալը նվազել է 6.4%-ով՝ հասնելով 9,944 տոննայի: Միննույն ժամանակ, միջազգային գների աճը շարունակվել է, և 2022թ. արձանագրվել է 15% աճ: 2016թ. սկսած ցինկի միջին տարեկան գների աճը կազմել է 10.9%: Ցինկի խտանյութն արտադրվում է որպես պղինձ-բազմամետաղային հանքաքարի հավելանյութ: Ցինկի արտադրության ծավալների և միջազգային գների միջև հստակ փոխկապակցվածություն չկա:

<sup>95</sup> Նույնը

<sup>96</sup> [https://armstat.am/file/article/bnexen\\_12\\_2022.pdf](https://armstat.am/file/article/bnexen_12_2022.pdf)


<sup>97</sup> <https://www.worldbank.org/en/research/commodity-markets> World Bank Commodity Price Data (The Pink Sheet)

**Ոսկու միջազգային գները**

Քանի որ ՀՀ ՎԿ չի հրապարակում թանկարժեք մետաղների արտադրության տվյալները, ներկայացվում է միայն ոսկու միջազգային գնի փոփոխությունը (դոլար/տրոյական ունցիա) 2013-2022թթ. ժամանակահատվածում:

**Գծապատկեր 4.4.4**

2013-2022թթ. ոսկու միջազգային գինը, դոլար/տրոյական ունցիա



Աղբյուրը. Համաշխարհային Բանկի տվյալների բազա<sup>98</sup>

2015ից ոսկու արժեքը շարունակաբար աճել է, 2022-ին այդ աճը կազմել է 55.1%: 2022թ. ոսկու 1 տրոյական ունցիայի արժեքը մնացել է կայուն, իսկ ամենամեծ աճը գրանցվել է 2020թ.<sup>1</sup> կազմելով 27.1%:

<sup>98</sup> Նույնը

5. ՄԵՏԱՂԱԿԱՆ  
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏԻՑ ՍՏԱՅԱԾ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԲԱՇԽՈՒՄԸ

## 5. ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՑ ՍՏԱՑԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

### 5.1. Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը պետական բյուջե (պահանջ 4.1 և 6.3)

Համաձայն ԱՃԹՆ Ստանդարտի 4-րդ պահանջի՝ պետք է համակողմանիորեն բացահայտվեն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից վճարումները և արդյունահանող ճյուղերից ստացված կառավարության եկամուտները: Համաձայն ԲՇԽ որոշման<sup>99</sup> սույն զեկույցի շրջանակներում, կողմերը երկուստեք բացահայտում են համապատասխան հարկերն ու վճարումներն առանց էականության շեմի կիրառման:

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվող հարկերն ու վճարներն են.


Պետական եկամուտների կոմիտե	Շրջակա միջավայրի նախարարություն
<ul style="list-style-type: none"> <li>• Շահութահարկ</li> <li>• Եկամտային հարկ</li> <li>• Ավելացված արժեքի հարկ</li> <li>• Ակցիզային հարկ</li> <li>• Ռոյալթի</li> <li>• Բնօգտագործման վճարներ</li> <li>• Բնապահպանական հարկ</li> <li>• Մաքսային տուրքեր և վճարներ</li> <li>• Տուրքեր</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Մշտադիտարկումների իրականացման վճար</li> <li>• Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման տուրք</li> <li>• Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից նշանակված տույժեր և տուգանքներ</li> </ul>

Պետական մարմինների (ՊԵԿ, ՇՄՆ) կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարման ենթակա հարկերը և վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 11%-ով՝ կազմելով 130.2 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 6.8%:

<sup>99</sup> [MSG\\_meeting\\_minute\\_28\\_03\\_2024\\_arm.pdf \(eiti.am\)](#)

**Գծապատկեր 5.1.1**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետություններին վճարված հարկերի մասնաբաժինը պետությունների հարկային եկամուտներում



Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարություն(բյուջեի ցուցանիշներ) և ՊԵԿ-ի կողմից ԱՃԹՆ զեկույցի համար տրամադրված հաշվետվություններ<sup>100</sup>

**Աղյուսակ 5.1.1**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների մասնաբաժինն ընդհանուր պետությունների հարկային եկամուտներում (մլն ՀՀ դրամ)

Հարկի կամ վճարի անվանումը	Ընդամենը հաշվարկված գումարը	Մասնաբաժինն ընկերությունների կողմից պետություններին վճարված ընդհանուր հարկերում և վճարումներում	Մասնաբաժինը պետությունների եկամուտներում
Արտահանման պետական տուրքեր <sup>101</sup>	43,208	33%	2.2%
Ռոյալթի	42,604	33%	2.2%
Շահութահարկ	19,534	15%	1.0%
Եկամտային հարկ	16,356	13%	0.8%
ԱԱՀ	6,216	5%	0.3%
Մաքսատուրք, մաքսավճարներ	1,211	1%	0.1%
Այլ	1,106	1%	0.1%
<b>Ընդամենը</b>	<b>130,235</b>	<b>100%</b>	<b>6.8%</b>
<b>Ընդամենը պետական բյուջեի հարկային եկամուտները</b>	<b>1,925,969</b>	-	-

<sup>100</sup> [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

<sup>101</sup> 2022թ. ընթացքում պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի և մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանման յուրաքանչյուր մեկ տոննայի համար լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրք



Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում պետական մարմինների (ՊԵԿ, ՇՄՆ) կողմից ներկայացված հաշվետվություններ (համադրման արդյունքում ճշգրտված)

Արտահանման պետական տուրքերը, ռոյալթին, շահութահարկը և եկամտային հարկը կազմում են ամենամեծ մասնաբաժինը 2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեջ:

Արտահանման պետական տուրքերը և ռոյալթին կազմել են ամենաբարձր մասնաբաժինը պետբյուջեի եկամուտներում՝ յուրաքանչյուրը 2.2%: Շահութահարկի մասնաբաժինը կազմում է 1%: Մնացած հարկատեսակների և վճարումների մասնաբաժինը պետական բյուջեի եկամուտներում չի գերազանցել 1%: 2022թ. պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերով և վճարումներով առաջատար ընկերությունն է «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն: 2022թ. «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ին բաժին է ընկել ընդերքօգտագործող ընկերություններից հաշվարկված հարկերի և վճարումների 76.3%-ը կամ 99.4 մլրդ ՀՀ դրամ, նույն ընկերության հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 5% :


«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ը երկրորդն է 2022թ. պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված գումարով, որին բաժին է ընկնում ընդերքօգտագործող ընկերություններից 2022թ. բոլոր հաշվարկված վճարումների 7.8%: «Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ հաշվարկված հարկերը և վճարները 2022թ. ընթացքում կազմել են 10.2 մլրդ ՀՀ դրամ, ինչը պետական բյուջեի եկամուտներում կազմել է 0.5%:

2022թ. պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների հանրագումարով երրորդն է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն, որին բաժին է ընկնում ընդերքօգտագործող ընկերությունների 2022թ. բոլոր հաշվարկված հարկերի և վճարների 5.6%: «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ հաշվարկված հարկերը և վճարները 2022թ. ընթացքում կազմել են 7.3 մլրդ ՀՀ դրամ, ինչը պետական բյուջեի եկամուտներում կազմել է 0.4%:

2022թ. ընդերքօգտագործող 10 խոշոր ընկերությունների կողմից պետական բյուջե կատարած հարկերը և վճարումներն ամփոփված են ստորև ներկայացված գծապատկերում:

**Գծապատկեր 5.1.2**


2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, հազ. ՀՀ դրամ



Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում պետական մարմինների կողմից ներկայացված հաշվետվություններ (համադրման արդյունքում ճշգրտված)

**Գծապատկեր 5.1.3**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները (մլն ՀՀ դրամ)



Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի կողմից ներկայացված հաշվետվություններ (համադրման արդյունքում ճշգրտված)

2022թ. հաշվետու տարում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեջ պետական արտահանման տուրքերը կազմել են ամենամեծ մասնաբաժինը: Պետական արտահանման տուրքերի մասնաբաժինը հաշվեգրված ընդհանուր հարկերի մեջ կազմել է 33.2% (43,208 մլն ՀՀ դրամ): Երկրորդ ամենամեծ հարկատեսակն է ռոյալթին, որի մասնաբաժինը կազմել է 32.7% (42,604 մլն ՀՀ դրամ): Երրորդ ամենախոշոր հարկատեսակն է՝ շահութահարկը, որի մասնաբաժինը կազմել է 15% (19,534 միլիոն ՀՀ դրամ):

Նախորդ տարվա՝ 2021թ. համեմատ, 2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից աճ են գրանցել պետական բյուջե վճարված հետևյալ հարկերը և վճարները.

- Պետական արտահանման տուրքեր (97% կամ 21,285 մլն ՀՀ դրամի չափով)
- ԱԱՀ (248% կամ 4,431 մլն ՀՀ դրամի չափով)
- Այլ հարկեր և վճարներ (26% կամ 282 մլն ՀՀ դրամի չափով)

Հետևյալ հարկերը և վճարները գրանցել են նվազում նախորդ տարվա համեմատ՝


- Եկամտային հարկ (2% կամ 273 մլն ՀՀ դրամի չափով)
- Մաքսատուրք, մաքսավճար (1% կամ 18 մլն ՀՀ դրամի չափով)
- Շահութահարկ (48% կամ 17,939 մլն դրամի չափով)
- Ռոյալթի (35% կամ 23,420 մլն դրամի չափով)

Ընդհանուր առմամբ, 2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերը և վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 11% կամ 15,660 մլն ՀՀ դրամով:

Ստորև ներկայացված է 2020-2022թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի դինամիկան:

**Գծապատկեր 5.1.4**

2020-2022թթ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետություններ վճարված հարկերը (միլիոն ՀՀ դրամ)




Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի կողմից ներկայացված հաշվետվություններ (համադրման արդյունքում ճշգրտված), 2020-2021թթ. Զեկույց<sup>102</sup>

**5.2. Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ (պահանջ 4.6)**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերը և վճարները համայնքային բյուջեների ընդհանուր եկամուտներում կազմել են 17.8% կամ 2.974 մլրդ ՀՀ դրամ:

**Գծապատկեր 5.2.1**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները




Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված հաշվետվություններ (համադրման արդյունքում ճշգրտված)

<sup>102</sup> <https://www.eiti.am/hy/2022/>

2022թ. ընթացքում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ կատարված վճարումների հիմնական մասը կազմում են ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտադիր սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարման հետ կապված վճարները՝ 1.615 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր վճարված հարկերի և վճարների 54%: Մյուս էական վճարումը վարձակալության վճարն է՝ 1.328 մլրդ ՀՀ դրամ կամ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքների բյուջեներ վճարված ընդհանուր գումարի 45%: Գույքահարկի և հողի հարկի կշիռը կազմել է 1% կամ 31.337 միլիոն ՀՀ դրամ: Հաջորդ գծապատկերում ներկայացվում է 2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների չափը՝ ըստ վճարների տեսակի:

**Գծապատկեր 5.2.2**

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները




Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված հաշվետվություններ (համադրման արդյունքում ճշգրտված)

Ստորև ներկայացված է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարված եկամուտներն ըստ մարզերի (հազար ՀՀ դրամ)

**Գծապատկեր 5.2.3**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարված եկամուտներն ըստ մարզերի (մլն ՀՀ դրամ)



Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված հաշվետվություններ

Ընդերքօգտագործող ընկերությունների կազմից վճարված հարկերի գերակշիռ մասը բաժին է ընկել Սյունիքի մարզին՝ ներառյալ 872 մլն ՀՀ դրամ Կապանի համայնքին, 95 մլն ՀՀ դրամ Մեղրի համայնքին և 1.3 մլրդ ՀՀ դրամ Քաջարանի համայնքին: Համայնքային բյուջե վճարումների չափով երկրորդ տեղում է Վայոց Ձորը, որտեղ Ջերմուկի համայնքային բյուջե է վճարվել 411 մլն ՀՀ դրամ: Երրորդ տեղում է Լոռու մարզը, որտեղ 152 միլիոն ՀՀ դրամ վճարվել է Ալավերդի համայնքի բյուջե, 10 միլիոն ՀՀ դրամ վճարվել է Ստեփանավանի համայնքի բյուջե և 2.6 միլիոն ՀՀ դրամ՝ Փամբակի համայնքի բյուջե:

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացվում է համայնքների ընդհանուր բյուջեները և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերն ու վճարումները:

### Աղյուսակ 5.2.1

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերի և վճարների մասնաբաժինը համայնքների բյուջեներում (հազար ՀՀ դրամ)

Համայնք	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Ընդերքօգտագործող ընկերության հաշվարկված վճարումները	Մասնաբաժինը համայնքի եկամուտներում
Ալավերդի (այդ թվում գ. Շնող)	2,600,213	152,044	5.8%
Ապարան	1,398,468	6,065	0.4%
Ծաղկաձոր	824,106	24,311	3.0%
Կապան	4,829,336	871,884	18.1%
Մեղրի	826,378	94,583	11.4%
Ջերմուկ	601,975	411,402	68.3%
Ստեփանավան	1,048,706	10,008	1.0%
Վարդենիս	2,035,063	71,471	3.5%
Փամբակ	572,289	2,621	0.5%
Քաջարան	2,002,887	1,330,008	66.4%
<b>Ընդամենը</b>	<b>16,739,420</b>	<b>2,974,398</b>	<b>17.8%</b>


Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված հաշվետվություններ

Հաջորդ գծապատկերը ներկայացնում է համայնքային բյուջեների եկամուտն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների:

2022թ. համայնքային բյուջե վճարված հարկերի և վճարների գումարով առաջատար ընկերություն է «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, որի մասնաբաժինը կազմում է 65%: Երկրորդ տեղում է «Լիդիան Արմենիա» ՓԲԸ՝ 14%, և երրորդ տեղում է «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (\*նախկին «Չաարատ կապան» ՓԲԸ), որի մասնաբաժինն ընդհանուր համայնքային բյուջե վճարված հարկերում կազմում է 9%:

**Գծապատկեր 5.2.4**

2022թ. խոշոր ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները (հազար ՀՀ դրամ)



Աղբյուր. ԱՃԹՆ-ի շրջանակում SԿԵՆ-ի կողմից ներկայացված հաշվետվություններ

**5.3 Եկամուտների բաշխումը և ծախսերի կառավարումը (պահանջներ 5.1, 5.2, 5.3)**

Շահագրգիռ կողմերին եկամուտների պետական և տեղական կառավարման մարմինների բյուջեներ մուտքագրման մասին տեղեկություն տրամադրելու նպատակով՝ ԱՃԹՆ-ն պահանջում է եկամուտների բաշխումների հետ կապված տեղեկությունների բացահայտումներ, մասնավորապես՝ խրախուսվում է բացահայտել եկամուտների կառավարման և ծախսերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում, արդյունահանող ոլորտից ստացվող՝ հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված բոլոր եկամուտների նկարագրությունը:

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի գումարներից համայնքներին հատկացումները կատարվում են՝ համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի, համաձայն որի բնապահպանական հարկերից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները նպատակային միջոցներ են և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար: Շահառու համայնքների ցանկը և բնապահպանական հարկերից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով, իսկ մասհանումներն առանձին տողով արտացոլվում են համապատասխան համայնքների բյուջեներում:

**Ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաների տրամադրման գործընթացի նկարագրություն**

Ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաների տրամադրման գործընթացի շրջանակում լիազոր մարմինների կատարման ենթակա աշխատանքներն ու միջոցառումները և դրանց կատարման ժամկետները սահմանվում են իրականացվելիք տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին՝ ՀՀ վարչապետի որոշմամբ:

Համաձայն օրենքի՝ բնապահպանական ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության հաստատված փաստաթղթերի հիման վրա:

Ծրագիրը ներառում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողային, ջրային և օդային տարածքներում ընդերքօգտագործող ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ, ընդերքօգտագործող ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումները, ծրագրային միջոցառումների իրականացման առաջնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները:

Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի Հոդված 3-ի՝ բնապահպանական ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության հաստատված փաստաթղթերի հիման վրա:

Համաձայն 2021թ. հուլիսի 15-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները սահմանելու մասին որոշման՝ ընկերությունները վերոնշյալ ցանկում ներառվում են՝ հաշվի առնելով ընկերությունների և (կամ) դրանց դուստր ձեռնարկությունների և (կամ) մասնաճյուղերի և (կամ) ընկերությունների կառուցվածքում ներառված այլ ստորաբաժանումների կողմից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի և հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման և պահման մասերով համայնքների և (կամ) բնակավայրերի վարչական տարածքներում վնասակար ազդեցությունը: Այլ ընկերությունների ցանկում ներառվում են այն ընկերությունները, որոնց կողմից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի և հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման և պահման բնապահպանական հարկի գծով հաշվարկված գումարներից առնվազն մեկի մասով տվյալ տարվան նախորդող երկու տարում հաշվարկված հարկի հանրագումարը պակաս չէ 2,000,000 դրամից:

Որոշումն ուժի մեջ է մտել 2022թ. հունվարի 1-ից:<sup>103</sup>

<sup>103</sup> [arlis.am/DocumentView.aspx?docID=154470](http://arlis.am/DocumentView.aspx?docID=154470)

**Աղյուսակ 5.3.1**

2022թ. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին հասանելի հաշվարկված և պետական բյուջեով հատկացված գումարները, (հազար ՀՀ դրամ)<sup>104</sup>

Համայնքի անվանումը	Պետբյուջեով պլանավորված	Փաստացի տրամադրված	Կատարման %
<b>ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ</b>	<b>13,668</b>	<b>9,042</b>	<b>66%</b>
<b>Արարատի համայնք</b>	<b>13,668</b>	<b>9,042</b>	<b>66%</b>
Արարատ համայնքի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները ծրագիր	13,668	9,042	66%
<b>ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ</b>	<b>4,717</b>	<b>4,683</b>	<b>99%</b>
<b>Շնող համայնք</b>	<b>4,717</b>	<b>4,683</b>	<b>99%</b>
Շնող համայնքի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները ծրագիր	4,717	4,683	99%
<b>ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ</b>	<b>21,236</b>	<b>20,138</b>	<b>95%</b>
<b>Ծաղկաձոր համայնք</b>	<b>1,079</b>	<b>980</b>	<b>91%</b>
Ծաղկաձոր համայնքի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները ծրագիր	1,079	980	91%
<b>Չարենցավան համայնք</b>	<b>15,049</b>	<b>14,050</b>	<b>93%</b>
Չարենցավան համայնքի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները ծրագիր	15,049	14,050	93%
<b>Հրազդան համայնք</b>	<b>5,108</b>	<b>5,108</b>	<b>100%</b>
Հրազդան համայնքի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները ծրագիր	5,108	5,108	100%
<b>ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ</b>	<b>8,148</b>	<b>-</b>	<b>0%</b>

<sup>104</sup> Ֆինանսների նախարարության կայք՝ [բյուջե \(minfin.am\)](http://minfin.am)



Համայնքի անվանումը	Պետբյուջեով պլանավորված	Փաստացի տրամադրված	Կատարման %
<b>Կապան համայնք</b>	<b>8,148</b>	-	0%
Կապան համայնքի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները ծրագիր	8,148	-	0%
<b>Ընդամենը</b>	<b>47,769</b>	<b>33,863</b>	<b>71%</b>

Աղբյուր. ՀՀ Ֆինանսների նախարարության կայք, Պետբյուջե 2022թ.

### Աղյուսակ 5.3.2

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված հանքարդյունահանող ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները, 2022թ.

Ընկերությունների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը
<b>Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկերի գծով</b>		
<b>Լոռու մարզ</b>		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	7%	Շնող
«Թեղուտ» ՓԲԸ	100%	Շնող
<b>Սյունիքի մարզ</b>		
«Չանգեգուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	60%	Քաջարան
	40%	Կապան
«Ագարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	100%	Մեղրի
Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)	100%	Կապան
«Լիճքվազ» ՓԲԸ	100%	Մեղրի
«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	100%	Մեղրի
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	100%	Գորայք
<b>Գեղարքունիքի մարզ</b>		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	100%	Գեղամասար
<b>Տավուշի մարզ</b>		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	19%	Այրում
	2%	Կողբ
	7%	Նոյեմբերյան
<b>Կոտայքի մարզ</b>		
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	100%	Մեղրաձոր
<b>Վայոց Ձորի մարզ</b>		
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	16%	Զառիթաի

Ընկերությունների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը
	47%	Ջերմուկ
<b>Մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկերի գծով</b>		
<b>Լոռու մարզ</b>		
«Թեղուտ» ՓԲԸ	100%	Շնող
<b>Սյունիքի մարզ</b>		
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	Քաջարան
Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)	100%	Կապան
«Ագարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	100%	Մեղրի
«Լիճքվազ» ՓԲԸ	100%	Մեղրի
«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	100%	Մեղրի
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	37%	Գորայք
<b>Արարատի մարզ</b>		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	15%	Արարատ
<b>Գեղարքունիքի մարզ</b>		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	85%	Գեղամասար
<b>Կոտայքի մարզ</b>		
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	100%	Մեղրաձոր
<b>Վայոց Ձորի մարզ</b>		
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	16%	Չառիթափ
	47%	Ջերմուկ
<b>Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկերի գծով</b>		
<b>Լոռու մարզ</b>		
«Թեղուտ» ՓԲԸ	100%	Շնող
<b>Սյունիքի մարզ</b>		
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	30%	Քաջարան
	70%	Կապան
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	Մեղրի
Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)	100%	Կապան
«Լիճքվազ» ՓԲԸ	100%	Մեղրի
«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	100%	Մեղրի
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	37%	Գորայք
<b>Արարատի մարզ</b>		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	100%	Արարատ
<b>Կոտայքի մարզ</b>		
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	100%	Մեղրաձոր
<b>Վայոց Ձորի մարզ</b>		
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	16%	Չառիթափ
	47%	Ջերմուկ

Աղբյուր. Տեղեկատվությունը տրամադրվել է ՇՄՆ կողմից՝ ԱՃԹՆ զեկույցի պատրաստման շրջանակներում

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի<sup>105</sup> ծրագիրը հրապարակում է համայնքի ղեկավարը: Հրապարակման հստակ ձևերը, սահմանվել են 2020թ. մայիսի 27-ի օրենսդրական բարեփոխումների արդյունքում, որոնց համաձայն՝ ծրագրերը յուրաքանչյուր տարի հրապարակվում են համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և (կամ) համապատասխան մարզպետարանի կայքում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

### Աղյուսակ 5.3.3

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքների բնապահպանական ծրագրերի հրապարակումների հղումները, 2022թ.

Համայնք	Ծրագիր	Հղում
<b>ՀՀ Լոռու մարզ</b>		
Շնող համայնք	Շնող համայնքի. բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր	<a href="https://alaverdi.am/Pages/DocFlow/?Refresh=1&amp;nt=1&amp;a=v&amp;g=2ac07952-6677-4c23-8c20-4ad71cc29ce6">https://alaverdi.am/Pages/DocFlow/?Refresh=1&amp;nt=1&amp;a=v&amp;g=2ac07952-6677-4c23-8c20-4ad71cc29ce6</a>
<b>ՀՀ Սյունիքի մարզ</b>		
Կապան համայնք	Համայնքի կողմից համապատասխան ծրագրեր չներկայացնելու պատճառով պետական բյուջեից գումար չի տրամադրվել	<a href="https://kapan.am/Pages/DocFlow/Def.aspx?a=d&amp;dt=4CDPReports&amp;nt=1&amp;f=true">https://kapan.am/Pages/DocFlow/Def.aspx?a=d&amp;dt=4CDPReports&amp;nt=1&amp;f=true</a>
<b>ՀՀ Կոտայքի մարզ</b>		
Ծաղկաձոր համայնք	Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքում իրականացված բնապահպանական ծրագիր	<a href="https://www.tsakhkadzor-kotayk.am/Pages/DocFlow/Def.aspx?a=v&amp;g=e5db01ae-ce46-401a-adcd-e4ac69476acd">https://www.tsakhkadzor-kotayk.am/Pages/DocFlow/Def.aspx?a=v&amp;g=e5db01ae-ce46-401a-adcd-e4ac69476acd</a>
Չարենցավան համայնք	Չարենցավան համայնքի Չարենցավան բնակավայրում իրականացված բնապահպանական ծրագիր	<a href="https://charentsavan.am/Pages/DocFlow/?nt=1&amp;a=v&amp;g=89502c8d-bda1-4ec3-8880-c2c993f31dd1">https://charentsavan.am/Pages/DocFlow/?nt=1&amp;a=v&amp;g=89502c8d-bda1-4ec3-8880-c2c993f31dd1</a>
Հրազդան համայնք	Հրազդան համայնքի Հրազդան քաղաքում իրականացված բնապահպանական ծրագիր	<a href="https://hrazdan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&amp;nt=1&amp;g=0e7675e1-c49a-4246-b96f-4297b8cce25a">https://hrazdan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&amp;nt=1&amp;g=0e7675e1-c49a-4246-b96f-4297b8cce25a</a>
<b>ՀՀ Արարատի մարզ</b>		
Արարատ համայնք	Արարատ համայնքի Արարատ քաղաքում իրականացված բնապահպանական ծրագիր	<a href="https://araratcity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&amp;nt=1&amp;g=0c210cf6-18f0-4283-88ff-30d7954b405f">https://araratcity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&amp;nt=1&amp;g=0c210cf6-18f0-4283-88ff-30d7954b405f</a>

Աղբյուր. Տեղեկատվությունը հավաքագրվել է համայնքների կայքերից

<sup>105</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143046>



6. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆ ԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ  
ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

## 6. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

### 6.1. Հանքարդյունաբերական ոլորտի դերը ՀՀ տնտեսության մեջ (պահանջ 6.3)

#### Հանքարդյունաբերությունը Հայաստանում

Հանքարդյունաբերության ոլորտը շարունակում է հանդիսանալ Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ճյուղերից մեկը: Համաձայն ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված տեղեկության՝ 2022թ. հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմել է 3.9%, որը գնահատվել է 334.7 մլրդ ՀՀ դրամ: 2022թ. նախորդ տարվա համեմատ հանքարդյունաբերության ոլորտում գրանցվել է 16.9% նվազում: 2017-ից մինչև 2022-ը հանքարդյունաբերության ոլորտի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում ցուցաբերել է կայունություն՝ պահպանելով միջին 3.8% ցուցանիշ, բացառությամբ 2021թ., երբ այն հասել է դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշին՝ 5.5%: Այս աճը պայմանավորված է միջազգային շուկայում տեղի ունեցած գնաճով:

Ընդհանուր առմամբ, 2017-2022 թվականների ընթացքում հանքարդյունաբերության ոլորտի տարեկան միջին անվանական աճի տեմպը կազմել է 9.3%: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակաշրջանում Հայաստանի ընդհանուր ՀՆԱ-ի տարեկան միջին անվանական աճը կազմել է 20%:


Չնայած ՀՆԱ-ում ունեցած ոչ բարձր տեսակարար կշիռին՝ հանքարդյունահանող ընկերություններից ստացված հարկային մուտքերը մշտապես ունեցել են էական կշիռ ընդհանուր հարկային մուտքերի մեջ: Ըստ ՊԵԿ տվյալների՝ 2022թ. հանքարդյունահանող 7 ընկերություններ ներառված են առաջին 100 խոշոր հարկ վճարողների ցանկում<sup>106</sup>, որոնց կողմից վճարված հարկերը կազմում են ցանկի բոլոր ընկերությունների ընդհանուր մուտքերի 22%-ը: 2022թ. հանքաքարի արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման 17%-ը՝ նախորդ տարվա 31%-ի փոխարեն: Արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել է բնական և թանկարժեք քարերի ու մետաղների արտահանումը՝ 18%: Չնայած արտահանման մեջ տեսակարար կշիռ կտրուկ անկմանը՝ 2022թ. հանքաքարի արտահանման ծավալը նախորդ տարվա՝ 2021թ. համեմատ նվազել է ընդամենը 0.1%: Հանքաքարի արտահանման ծավալի էական նվազում է գրանցվել 2023թ.՝ 13.1%:

Համաձայն ՀՀ ՎԿ-ի՝ ՀՆԱ կառուցվածքում ներկայացված 20 ոլորտների շարքում հանքարդյունաբերությունը 2022 թվականին զբաղեցրել է տասներորդ տեղը:

<sup>106</sup> <https://src.am/am>

**Գծապատկեր 6.1.1**

Հանքագործական արդյունաբերության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում, 2014–2022թթ.<sup>107</sup>



Աղբյուրը. ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն<sup>108</sup>


2022թ. ՀՆԱ-ն կազմել է 8,501 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա համեմատ ավելացել է 1,510 մլրդ ՀՀ դրամով կամ 21.6%: Հանքարդյունաբերության ոլորտի անվանական նվազումը կազմել է 13.45% կամ 52 մլրդ ՀՀ դրամ:

**Գծապատկեր 6.1.2**

ՀՆԱ-ի և հանքարդյունաբերության ոլորտի իրական ծավալի ինդեքսները, 2017–2022թթ.

<sup>107</sup> <https://www.armstat.am/am/?nid=202>

<sup>108</sup> [Լույսը](#)



Աղբյուրը. ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն<sup>109</sup>

2017-2022թթ. ընթացքում ՀՆԱ-ի տարեկան միջին աճի տեմպը կազմել է 5.3%: Չնայած հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքի անկմանը նախորդ երկու տարում ոլորտի միջին տարեկան աճը կազմել է 9.5%:

2017-2022թթ. ընթացքում Հայաստանի հանքագործական արդյունաբերության ոլորտը դրսևորել է նշանակալի տատանումներ՝ գրանցելով ինչպես աճ, այնպես էլ անկում: 2017թ. ոլորտի ավելացված արժեքը կազմել է 185.51 մլրդ ՀՀ դրամ, սակայն 2018թ.-ին ոլորտը կտրուկ անկում է գրանցել՝ 15.5%, ինչը հիմնականում պայմանավորված է եղել 2018թ.-ին «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության դադարեցմամբ: Ընկերությունը գործունեությունը վերսկսել է 2021թ.-ին, 2021թ.-ին ՀՆԱ-ն հասել է իր ամենաբարձր ցուցանիշին՝ 386.8 մլրդ ՀՀ դրամ, սակայն իրական ծավալի ինդեքսը կազմել է -0.2%: 2022թ.-ին ոլորտը նույնպես անկում է գրանցել՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով -1.3% ծավալի ինդեքս: Նշված տատանումները հստակորեն ցույց են տալիս ոլորտի անկայունությունը՝ միջազգային շուկայի փոփոխականությունների արդյունքում: Հարկ է նշել, որ մյուս առաջատար ոլորտները, ինչպիսիք են մշակող արդյունաբերությունը և առևտուրը, նույն ժամանակահատվածում ցույց են տվել կայուն աճ՝ 12.5% և 17.6% համապատասխանաբար: 2022թ. հանքարդյունաբերության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում կազմել է միայն 3.9%, որը զգալիորեն ցածր է առևտրի (11.6%) և մշակող արդյունաբերության (11.4%) մասնաբաժիններից: Այսօր, երբ հանքարդյունաբերությունը ՀՆԱ-ի համեմատաբար փոքր մասնաբաժին ունեցող ոլորտներից է, իր դերի բարելավմանն ուղղված գործնական քայլերի իրականացումը նպատակահարմար կլինի՝ հատկապես միջազգային շուկայի փոփոխությունների և անհատական արդյունաբերական կայունության հաշվառումով:

Ստորև ներկայացված է 2017-2022թթ. ընթացքում հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում՝ առաջատար ոլորտների հետ համեմատությամբ:

<sup>109</sup> <https://www.armstat.am/am/?nid=202>



### **Գծապատկեր 6.1.3**

*2021-2022թթ. դրությամբ Հայաստանի տնտեսության մյուս ոլորտների համեմատ  
հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի ավելացված արժեքը ՀՆԱ-ում  
ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ*




Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» համապատասխան տարիների համար<sup>110</sup>

**Գծապատկեր 6.1.4**

Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 2022թ. դրությամբ 5 խոշորագույն տնտեսական ոլորտների հետ համեմատ

<sup>110</sup> <https://www.armstat.am/am/?nid=202>



Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» համապատասխան տարիների համար

### Արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանումը հանքարդյունաբերության ոլորտում

Արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանման ոլորտի վերլուծության նպատակով ուսումնասիրվել են ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող դատական ակտերն ու վարչական մարմինների որոշումները:

Ինչպես նշվել է նախորդ զեկույցներում, հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեություն չի ակնկալվում: Գործող օրենսդրական կարգավորումները, ոլորտի վերահսկողությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև դրա կարևորությունը և մասշտաբը ՀՀ տնտեսության համար, հիմնական զսպող գործոններ են: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2022թ. տարեկան հաշվետվություններում հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեության վերաբերյալ տեղեկություններ չեն արձանագրվել: Ավելին, մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեության հետ կապված դատական գործեր չեն բացահայտվել:

### Ոլորտի տարածական բաշխումը՝ հիմնված ընկերությունների գործունեության վրա

Հայաստանում մետաղական հանքարդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների քանակով առաջատար է Սյունիքի մարզը. մարզում գործունեություն է ծավալում 10 հանքագործական


ընկերություն: Մարզում ընդերքօգտագործման իրավունք կրող ընկերություններն են՝ «Լեռ-էքս» ՍՊԸ-ն, Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ-ն), «Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, «Լիճքվազ» ՓԲԸ, «Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, «Մարջան Մայնինգ Քոնսիանի» ՍՊԸ, «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ, «Ատ-Մետալս» ՍՊԸ, «Գեղի Գոլդ» ՍՊԸ և «Ղարագույաններ» ՓԲԸ-ն:

Երկրորդ տեղում Լոռու մարզն է, որտեղ գործունեություն է ծավալում 6 ընկերություն՝ «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ն, «Ասսաթ» ՍՊԸ-ն, «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ն, «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ-ն, «Սագամար» ՓԲԸ-ն և «Թեղուտ» ՓԲԸ-ն:

Վայոց Ձորի և Կոտայքի մարզերում հանքարդյունաբերությամբ զբաղվում են 3-ական ընկերություն: Վայոց Ձորի մարզում ընդերքօգտագործման իրավունք կրող ընկերություններն են՝ «Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ-ն, «Վայք Գոլդ» ՍՊԸ-ն և «Լիդիան Արմենիա» ՍՊԸ-ն: Կոտայքի մարզում գործունեություն ծավալող ընկերություններն են՝ «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ն, «Մեդրաժոր Գոլդ» ՍՊԸ-ն և «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ն: Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում գործունեություն են ծավալում մեկական ընդերքօգտագործող ընկերություն՝ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն և «Մեգո Գոլդ ՍՊԸ-ն»:

**Գծապատկեր 6.1.5**

Հանքագործական ընկերությունների բաշխվածությունն ըստ Հայաստանի մարզերի




Աղբյուրը. Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

**Զբաղվածությունը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (ներառյալ՝ գենդերային բաշխվածությունը)**

2022թ. արդյունաբերությունը շարունակում է զբաղվածության ցուցանիշներով Հայաստանի տնտեսության առաջատար տեղերը զբաղեցնել: 2022թ. տվյալներով ոլորտում աշխատում էր 104.1 հազար մարդ, ինչը կազմում է ընդհանուր զբաղվածության 9.2%-ը: Անդրադառնալով նախորդ տարիներին՝ ոլորտի տեսակարար կշիռը զգալի փոփոխություն չի ունեցել, սակայն բացարձակ թվով աճել է թե՛ ընդհանուր զբաղվածության, թե՛ արդյունաբերության ոլորտում աշխատող անձանց թիվը: Մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտում զբաղվածությունը 2022թ.-ին կազմել է 9.3 հազար մարդ:

**Գծապատկեր 6.1.6**

Մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտում զբաղվածության տարեկան դինամիկա, 2017-2022թթ.



Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի հրապարակված համապատասխան տարեգրքեր

2022թ. մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտի մասնաբաժինը հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի ընդհանուր զբաղվածության մեջ աճել է 1.8%-ով՝ 2021թ. համեմատ վերջինիս զբաղվածության բացարձակ թվի աճման հետևանքով: Համապատասխանաբար 0.02%-ով նվազել է մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտի մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների՝ ուսումնասիրված տնտեսության 21 ոլորտներից հանքարդյունաբերության ոլորտը զբաղվածության ցուցանիշով 2020, 2021 և 2022թթ. զբաղեցրել է 16-րդ մասնաբաժինը, իսկ 2019թ.՝ 17-րդը:

**Աղյուսակ 6.1.1**


*Զբաղվածությունը Հայաստանի Հանրապետությունում, 2017–2022թթ*

	2017	2018	2019	2020	2021	2022
Մետաղների արդյունահանման ոլորտն ընդհանուր զբաղվածության մեջ, %	0.77%	0.74%	0.85%	0.87%	0.84%	0.82%
Մետաղների արդյունահանման ոլորտի մասնաբաժինը հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործում ոլորտի զբաղվածության մեջ, %	88.84%	86.95%	83.83%	81.01%	80.39%	82.20%
Ընդհանուր զբաղվածություն, հազ. մարդ	1,011.70	1,048.50	1,077.40	1,052.40	1,088.30	1,134.80

Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի հրապարակված համապատասխան տարեգրքեր

**Գծապատկեր 6.1.7**

2017-2022թթ. ընթացքում մետաղարդյունաբերության ոլորտի զբաղվածությունը, հազ. մարդ



Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր<sup>111</sup>

**Աղյուսակ 6.1.2**

2021թ. և 2022թ. դրությամբ հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ՝ Հայաստանի տնտեսության խոշորագույն 10 ոլորտների համեմատ

Ոլորտ	Զբաղվածությունը 2021թ., հազ. մարդ	Զբաղվածությունը 2022թ., հազ. մարդ	Ոլորտի մասնաբաժինն ընդհանուրի մեջ,	
			2021թ., %	2022թ., %
Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և ձկնորսություն	237	250	21.81%	22.03%
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	129	133	11.87%	11.72%
Կրթություն	118	119	10.85%	10.49%
Մշակող արդյունաբերություն	107	115	9.81%	10.13%
Շինարարություն	96	97	8.82%	8.55%

<sup>111</sup> <https://armstat.am/file/doc/99546313.pdf>


Ոլորտ	Զբաղվածությունը 2021թ., հազ. մարդ	Զբաղվածությունը 2022թ., հազ. մարդ	Ոլորտի մասնաբաժինն ընդհանուրի մեջ,	
			2021թ., %	2022թ., %
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	91	90	8.32%	7.93%
Առողջապահություն և բնակ- չության սոցիալական սպասարկում	61	56	5.62%	4.93%
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	45	48	4.13%	4.25%
Տեղեկատվություն և կապ	30	42	2.78%	3.70%
Կացության և հանրային սննդի կազմակերպում	28	37	2.61%	3.26%
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	11	12	0.96%	1.06%

Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր

2021 և 2022թթ. տվյալների համաձայն, հանքագործական արդյունաբերության ոլորտի մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ փոքր աճ է ցույց տալիս՝ 0.96%-ից հասնելով 1.06%-ի: Ընդհանուր առմամբ, ոլորտի զբաղվածության թիվը բարձրացել է 11 հազարից մինչև 12 հազարի, ինչը ցույց է տալիս ոլորտի փոքր, բայց դրական զարգացումը: Դիտարկելով Հայաստանի տնտեսության խոշորագույն 10 ոլորտները, հանքագործական արդյունաբերությունը շարունակում է զբաղեցնել ամենամեծ մասերից մեկը, սակայն դրա մասնաբաժինը դեռևս փոքր է մյուս հիմնական ոլորտների համեմատ՝ ինչպես օրինակ գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության և կրթության ոլորտների հետ: Օրինակ, գյուղատնտեսության ոլորտի մասնաբաժինը կազմում է 22.03%, իսկ մշակող արդյունաբերությաննը՝ 10.13%, ինչը ցույց է տալիս, որ հանքագործական արդյունաբերության մասնաբաժինը դեռևս համեմատաբար փոքր է, բայց աստիճանաբար աճում է:

**Գծապատկեր 6.1.8**

2022թ. դրությամբ հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ Հայաստանի տնտեսության խոշորագույն 10 ոլորտների համեմատ




- Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և ձկնորսություն
- Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում
- Կրթություն
- Մշակող արդյունաբերություն
- Շինարարություն
- Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն
- Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում
- Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
- Տեղեկատվություն և կապ
- Կացության և հանրային սննդի կազմակերպում
- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում

Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

**Գծապատկեր 6.1.9**

2016-2022թթ Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության գեներային կառուցվածքը




Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր



Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության գենդերային կառուցվածքում ավանդաբար գերակշռում են տղամարդիկ: Այսպիսով, 2022թ. ոլորտում աշխատող 12.2 հազ. աշխատակցից տղամարդիկ կազմել են 11.5 հազ. (94.3%), իսկ կանայք՝ 0.7 հազ. (5.7%): ոլորտում կանանց մասնաբաժինը 2018թ. ի վեր աստիճանաբար աճել է՝ 2020թ. գերազանցելով 2017թ. դրությամբ գրանցված համապատասխան ցուցանիշը, որը, սակայն, կրկին նվազել է 2021թ. և նույնպես 2022թ.:

**Գծապատկեր 6.1.10**

2021 և 2022թթ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների բաշխվածությունն ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության



Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

Ընդերքօգտագործող ընկերությունների տրամադրած տվյալների հիման վրա՝ հանքարդյունաբերության ոլորտում աշխատողները դասակարգվել են մի շարք գործոններով, ինչպիսիք են սեռը, բնակության վայրն ու աշխատանքային պայմանագրի տեսակները:

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2021 և 2022թթ. հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների գերակշռող մասը՝ 97.9%-ը ՀՀ քաղաքացի էր: Մինչդեռ ժամանակ, նշված երկու տարիների ընթացքում հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների շուրջ 84.3%-ը տղամարդ էր, և 97.2%-ն ուներ անժամկետ պայմանագրային աշխատանք: Ընդհանուր առմամբ, ոլորտում զբաղվածների ընդհանուր բաշխվածությունն ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության բավականին կայուն է:

Ստորև ներկայացված գծապատկերում ամփոփված են ստեղծած աշխատատեղերի քանակով առաջատար 10 ընկերությունները և դրանց կողմից ապահովվող աշխատատեղերի քանակը: Ուսումնասիրված երկու տարիների ընթացքում՝ 2021 և 2022թթ., մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ստեղծած աշխատատեղերի մեծամասնությունը՝ շուրջ 97.3%-ը, բաժին է ընկել հետևյալ ընկերություններին՝ «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ, «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ, «Չաարատ Կապան» ՓԲԸ և «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ:


Ստորև ներկայացված է աշխատատեղերի բաշխումն ըստ ընկերությունների՝

- «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ՝ 4,374 (2021թ) և 4,618 (2022թ)
- «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ՝ 1,765 (2021թ) և 1,627 (2022թ)
- «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ՝ 1,119 (2021թ) և 1,107 (2022թ)
- «Թեղուտ» ՓԲԸ՝ 1,035 (2021թ) և 1,007 (2022թ)
- «Չաարատ Կապան» ՓԲԸ՝ 1,029 (2021թ) և 1,010 (2022թ)
- «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ՝ 491 (2021թ) և 465 (2022թ)

Այս ընկերությունների ընդհանուր աշխատատեղերի թվի ավելացումը 2021-2022թթ. ընթացքում կազմում է 9,813 (2021թ) և 9,834 (2022թ), ինչն ընդհանուր աշխատատեղերի թվից (10,363 և 10,365) կազմում է մոտավորապես 97.3%-ը:

**Գծապատկեր 6.1.11**

2020թ. և 2021թ. զբաղվածությունը հանքարդյունաբերության առաջատար ընկերություններում




Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


**Գծապատկեր 6.1.12**

2021թ. և 2022թ. բոլոր ոլորտներում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումն՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի

2021



2022




Աղբյուրը. ՀՀ ՎԿ-ի 2022թ. «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» հրապարակում

Ըստ 2022թ. տվյալներ՝ Երևանում զբաղվածների թիվը զգալիորեն աճել է՝ կազմելով 392.3 հազար, ինչը նշանակում է 93.2 հազար կամ 31.2% աճ 2021թ. համեմատությամբ: Արմավիրում գրանցվել է 8.7 հազար կամ 6.7% աճ, իսկ Արարատում՝ փոքր անկում՝ 2.9 հազար կամ 2.7%: Կոտայքում զբաղվածների թիվը կրճատվել է 17.4 հազարով կամ 16.8%-ով, Լոռիում՝ 25 հազարով կամ 26%-ով, իսկ Շիրակում՝ 17.2 հազարով կամ 19.1%-ով: Գեղարքունիքում դիտվել է 6.9 հազար կամ 8.9% աճ, Սյունիքում՝ 3 հազարով կամ 4.8% աճ, Արագածոտնում՝ 2.2 հազարով կամ 3.9% աճ, Տավուշում՝ 4.6 հազարով կամ 10.3% կրճատում, և Վայոց ձորում՝ 0.5 հազարով կամ 2.6% անկում: Ընդհանուր առմամբ, 2022թ. ընթացքում աշխատանքային շուկայի բաշխվածությունը ցույց է տալիս, որ Երևանը մեծապես մեծացրել է իր տնտեսական դերը, մինչդեռ մի շարք այլ տարածաշրջաններում՝ հատկապես Լոռի, Շիրակ և Կոտայք, նկատվել են զգալի նվազումներ զբաղվածության մեջ, որոնք կարող են ի ցույց դնել տարածաշրջանային տնտեսական խնդիրներ: Ստորև ներկայացված է վերլուծությունը և գրաֆիկը, որը ցուցադրում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումը՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի:

**Գծապատկեր 6.1.13**

2021թ. և 2022թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումն՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի



Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

Գեղարքունիքում գրանցվել է ավելի զգալի անկում՝ 1,765-ից նվազելով մինչև 1,529՝ 13.4% նվազում: Լոռիում գրանցվել է զգալի աճ՝ 1,122-ից աճելով մինչև 1,571՝ 40.1% աճ: Երևանում զբաղվածների թիվը նվազել է 491-ից մինչև 385՝ 21.6% նվազում, իսկ Կոտայքում զբաղվածների թիվը նվազել է 221-ից մինչև 178՝ 19.5% նվազում: Վայոց Ձորում զբաղվածների թիվը զգալիորեն նվազել է՝ 30-ից իջնելով մինչև 4, ինչը կազմում է 86.7% նվազում:

2021 և 2022թթ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների թվի փոփոխությունները ցույց են տալիս մի շարք կարևոր միտումներ: Սյունիքում, որտեղ 2021թ. զբաղվածների թիվը եղել է 6,734, 2022թ. տվյալները ցույց են տալիս փոքր-ինչ նվազում՝ կազմելով 6,698, կամ 0.53% նվազում:

Ընդհանուր առմամբ, այս փոփոխությունները ցույց են տալիս, որ մարզերում զբաղվածության թիվը տատանվում է՝ կապված տնտեսական, ներդրումային և տեղական սոցիալական ու քաղաքական հանգամանքների փոփոխությունների հետ:

## 6.2. Ընկերությունների կողմից կատարվող սոցիալական և բնապահպանական ծախսումները (պահանջ 6.1)

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարվող սոցիալ-տնտեսական և բնապահպանական ծախսերը և հատկացումները իրականացվում են օրենսդրությամբ նախատեսված կարգով, պայմանագրային պարտավորությունների շրջանակում և կամավոր սկզբունքով: Օրենսդրությամբ նախատեսված կարգով հատկացումները վերաբերում են բնապահպանական վճարներին, որոնք ներառում են ռոյալթին: Հատկացումների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվության մանրամասները ներկայացված են սույն զեկույցի 5.3 բաժնում:

Պայմանագրային պարտավորությունների շրջանակում իրականացվող վճարումները ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված հատկացումներ են, իսկ կամավոր սկզբունքով կատարվող նվիրատվությունները կարող են իրականացվել կամ պայմանագրով կամ առանց պայմանագրի: Այս տեղեկատվությունը առկա է ընդերքօգտագործող ընկերությունների ԱՃԹՆ հրապարակային հաշվետվություններում:

Սոցիալ-տնտեսական զարգացումների հետ կապված հատկացումների մասով 2022թ ընթացքում որոշակի փոփոխություններ են իրականացվել: 2021թ դրությամբ՝ ընդերքօգտագործողների պայմանագրերում շարադրված սոցիալական պարտավորությունները ներկայացված են այդ տարվա զեկույցում:<sup>112</sup>

Ընդերքօգտագործող 11 ընկերություն ստանձնել է համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ: 2022թ. ընթացքում տվյալ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրականացված պարտավորությունների կատարումը ֆինանսական ոչ բնաիրային ներդրումներ են, որոնք փոխանցվել են համայնքի բյուջե, այլ ոչ թե երրորդ կողմին: Պայմանագրային պարտավորությունները կարող են սահմանվել տարբեր ժամկետներով՝ տարեկան, 3 տարի, 5 տարի կամ այլ: Ընդերքօգտագործման պայմանագրով պարտավորություն ստանձնած ընկերությունների ցանկը, պարտավորության չափը, 2022թ. ընթացքում տվյալ պարտավորությունների կատարումը՝

<sup>112</sup> ԱՃԹՆ 2020-2021թթ զեկույց, էջ 114, [https://eiti.org/sites/default/files/2023-02/2020-2021\\_EITI\\_Report\\_Armenia%20%28EN%29.pdf](https://eiti.org/sites/default/files/2023-02/2020-2021_EITI_Report_Armenia%20%28EN%29.pdf)

համաձայն ընկերությունների և համայնքների կողմից ներկայացված հաշվետվությունների, ներկայացված է ստորև:

### Աղյուսակ 6.2.1

2022թ. Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները

Ընկերության անվանում	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Փոփոխություններ 2022	Նկարագրություն
«Լիճքվազ» ՓԲԸ	ՊՎ-293, 22 Նոյեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» )	ՊՎ-183, 27 Նոյեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	ՊՎ-398, 07 Մարտ 2013	Փոփոխության չի ենթարկվել	-
«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	ՊՎ-089, 12 Հունիս 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Վարդանի Ջարթոնքը» ՍՊԸ	ՊՎ-239, 27 Սեպտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Ֆորչն Ռիզորսիս ՍՊԸ	ՊՎ-169, 20 հոկտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Մուլտի Գրոպ» Կոնցեռն ՍՊԸ	ՊՎ-213, 20 հոկտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	ՊՎ-425, 28 դեկտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՊՎ-232, 27 Նոյեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Մեզո Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-184, 28 դեկտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Լեռ-Էքս» ՍՊԸ	ՊՎ-094, 16 օգոստոս 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	ՊՎ-103, 20 հոկտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Ազարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	ՊՎ-311, 05 ապրիլ 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Ասսաթ» ՍՊԸ	ՊՎ-366, 06 հունիս 2013	Փոփոխության չի ենթարկվել	-
«Ատ-Մետալս» ՍՊԸ	ՊՎ-514, 16 հունվար 2015	Ենթարկվել է փոփոխության 27 Հոկտեմբեր 2022թ-ին	Ըստ պայմանագրի նախատեսվում է գյուղամիջյան միջհամայնքային նշանակության ավտոճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն,

Ընկերության անվանում	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Փոփոխություններ 2022	Նկարագրություն
			<p>Դպրոցի 1-ին դասարանցիներին կարիքների համաֆինանսական միջոցների տրամադրում, Մեղրի համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, Սոցիալապես անապահով ընտանիքներին անհրաժեշտ բժշկական ծառայությունների ֆինանսական փոխհատուցում, Սոցիալապես անապահով ընտանիքներին դեղորայքի տրամադրում, Քաջարան համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն</p>
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	ՊՎ-515, 22 օգոստոս 2014	Փոփոխության չի ենթարկվել	-
«Գեղի Գօլդ»	ՊՎ-544, 22 հուլիս 2016	Փոփոխության չի ենթարկվել	-
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-189, 20 հոկտեմբեր 2012	Ենթարկվել է փոփոխության 02 Փետրվար 2023թ-ին	<p>Ըստ պայմանագրի նախատեսվում է Գեղամասար, Վարդենիս համայնքների 2-3 երիտասարդների ուսման ֆինանսական օժանդակում, Գյուղամիջյան, միջհամայնքային նշանակության ավտոճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն, Սոթք համայնքի բնակիչների բժշկական զննության կազմակերպում, Սոթք համայնքի և մերձակա բնակավայրերի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, Սոթք համայնքի տարածքում հողի, օդի և մակերևութային ջրի որակի մոնիտորինգի կազմակերպում, Սոթք գյուղի խմելու ջրի որակի ստուգման կազմակերպում</p>

Ընկերության անվանում	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Փոփոխություններ 2022	Նկարագրություն
«Թեղուտ» ՓԲԸ	ՊՎ-376, 20 հուլիս 2013	Ենթարկվել է փոփոխության 14 Օգոստոս 2023թ-ին	Ըստ պայմանագրի նախատեսվում է բժշկական սարքավորումների, դեղամիջոցների նվիրատվություն, Դրամական աջակցություն, Համայնքային ենթածրագրերի իրականացում, Համայնքային մշակութային, կրթական միջոցառումներ, Համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	ՊՎ-245, 26 սեպտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Ղարագույաններ» ՓԲԸ	ՊՎ-547, 25 հոկտեմբեր 2016	Փոփոխության չի ենթարկվել	-
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-057, 22 օգոստոս 2012	Ենթարկվել է փոփոխության 29 Օգոստոս 2023թ-ին	Ըստ պայմանագրի նախատեսվում է համայնքային հեղիեղների մաքրում, կարգաբերում՝ վճարելով համայնքի բյուջե, Համայնքային մանկապարտեզի պահպանում՝ վճարելով համայնքի բյուջե, Համայնքի տարածքի սանիտարական մաքրում բարեկարգում, Համայնքում «Արմաթ» կենտրոնի ներդրում, Համայնքում «Արմաթ» կենտրոնի ֆինանսավորում, Հանքավայրի շահագործման ավարտին նախորդող 3 տարիների կտրվածքով, համայնքում փոքր բիզնեսների ներդրում և դրանց զարգացման խրախուսում, Սոցիալ մշակութային միջոցառումների, կրթական ծրագրերի ֆինանսավորում
«Սագամար» ՓԲԸ	ՊՎ-093, 20 հոկտեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-
«Վայք Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-371, 30 նոյեմբեր 2012	Փոփոխության չի ենթարկվել	-

Աղբյուրը. ՏԿԵՆ-ի ԱՃԹՆ հրապարակային տեղեկություններ<sup>113</sup>

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացվող ԱՃԹՆ հրապարակային հաշվետվություններում ընկերությունները «Ընդերքօգտագործողի սոցիալ-տնտեսական ներդրումը համայնքին» բաժնում ներկայացնում են ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պարտավորությունները, մասնավորապես, պարտավորության անվանումը, ֆինանսական պարտավորության դեպքում՝ ներդրման չափը, իսկ ոչ ֆինանսական պարտավորության դեպքում՝ ապրանքը կամ ծառայությունը (ծրագիրը) և դրա արժեքային գնահատականը, ինչպես նաև, թե որ համայնքին է ուղղված եղել պարտավորությունը:

### Աղյուսակ 6.2.2

2022թ. ընկերությունների կողմից իրականացված սոցիալ-տնտեսական պարտավորությունները և նվիրատվությունները, հազ. ՀՀ դրամ

Ընկերության անվանումը	Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարում	Բարեգործական հատկացումներ և նվիրատվություններ համայնքին	Ոչ առևտրային իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվություններ
«Ազարակի Պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	37,920	3,217	46,787
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	-	60,000	4,144
«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	-	-	-
«Ասսաթ» ՍՊԸ	-	15,000	-
«Ատ-Մետալս» ՍՊԸ	-	-	-
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	250	-	1,344
«Գեղի Գօլդ» ՍՊԸ	600	200	-
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	-	60,988	68,116
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	-	2,460,849	4,003,638
«Թեղուտ» ՓԲԸ	-	34,820	1,850
«Լեռ-Էքս» ՍՊԸ	-	-	-
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	-	-	72,000
«Լիճքվազ» ՓԲԸ	-	24,058	654
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	-	148,280	103,033
«Ղարագոլյաններ» ՓԲԸ	1,250	-	-
«Մարջան Մայնինգ Քոնվանի» ՍՊԸ	-	-	-
«Մեգո Գոլդ» ՍՊԸ	-	-	-
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	-	4,950	3,066
«Մուլտի Գրոպ» Կոնցեռն ՍՊԸ	-	10,000	21,480

<sup>113</sup> <https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative>



«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	-	-	-
«Սագամար» ՓԲԸ	1,563	-	-
«Վայք Գոլդ» ՍՊԸ	-	-	-
«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	-	-	-
«Ֆորչն Ռիզորսիս ՍՊԸ	-	-	-
<b>Ընդհանրը</b>	<b>41,583</b>	<b>2,822,362</b>	<b>4,326,111</b>

Աղբյուրը. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար տրամադրված տեղեկատվություն համադրման արդյունքում ճշգրտված

### 6.2.1. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված սոցիալ-տնտեսական զարգացման պարտավորություններ

Դիտարկվող ժամանակահատվածում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարված պարտադիր վճարումների ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև:

#### Աղյուսակ 6.2.1.1

2022թթ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված սոցիալ-տնտեսական զարգացման պարտավորությունների կատարում, հազ. ՀՀ դրամ

Ընկերության անվանումը	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված		Փաստացի կատարված
		Տարեկան	Այլ ժամկետով	
«Ագարակի Պղնձ-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՊՎ-311, 5 ապրիլ 2013թ.	40,640	-	37,920
«Ասսաթ» ՍՊԸ	Պ-366, 6 հունիս 2013թ.	800	200	-
«Ատ-Մետալս» ՍՊԸ	Պ-514, 16 հունվար 2015թ.	8,100	-	-
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Պ-515, 22 օգոստոս 2014թ.	250	400	250
«Գեդի Գոլդ» ՍՊԸ	Պ-544, 22 հուլիսի 2016թ.	650	-	600
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-189, 20 հոկտեմբեր 2012թ.	-	13,200	-
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	ՊՎ-245, 26 սեպտեմբեր 2012թ.	61,500	-	-
«Ղարագույաններ» ՓԲԸ	Պ-547, 25 հոկտեմբեր 2016թ.	1,250	-	1,250


«Սագամար» ՓԲԸ	ՊՎ-093, 20 հոկտեմբեր 2012թ.	1,000	5,000	1,563
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Պ-371, 30 նոյեմբեր 2012թ.	3,000	-	-
<b>Ընդհանրը</b>		<b>117,190</b>	<b>18,800</b>	<b>41,583</b>

Աղբյուրը. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար տրամադրված տեղեկատվություն՝ համադրման արդյունքում ճշգրտված

Ընդերքօգտագործող ընկերությունների տրամադրած հաշվետվությունների համաձայն՝ 2022թ. ընկերությունների կողմից համայնքներին վճարված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտադիր գումարների ընդհանուր չափը կազմել է 41.6 մլն դրամ: 2022թ. կատարած ամենախոշոր վճարը կատարել է «Ագարակի Պղնձ-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ն 37.9 մլն ՀՀ դրամ: Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված տարեկան պարտավորությունները չեն կատարել հինգ ընկերություն: 2022թ. պարտադիր վճարներով առաջատարն է եղել Սյունիքի մարզի Մեղրի համայնքը, որին բաժին է հասել ընդհանուր վճարած պարտադիր վճարների 94%-ը:

**Գծապատկեր 6.2.1.2**

2022թ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված սոցիալ-փոփոխական զարգացման պարտավորությունների կատարում՝ ըստ համայնքների, հազար ՀՀ դրամ<sup>14</sup>



**6.2.2. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքներին կատարած նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումներ**

**Աղյուսակ 6.2.2.1**

2022թ. ընթացքում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքներին կատարած նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումները, հազ. ՀՀ դրամ

<sup>14</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Ընկերություն	Համայնք	Նպատակ	Նվիրատվության չափը, հազ. ՀՀ դրամ
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարան	Նվիրաբերության պայմանագրի շրջանակում սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով հատկացում	647,832
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորում	577,900
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարան, Կապան	Աջակցություն պաշտպանության ոլորտին	415,896
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարան	Քաջարան համայնքի աղբահանություն, քաղաքի նորոգում, անահատույց տեխնիկայի տրամադրում, մշակութային միջոցառումներ	309,007
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարան, Կապան	Համայնքի բնակիչների ուղևորափոխադրումներ	80,153
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Կապանի մշակույթի պալատի նորոգում	76,781
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	Կապան	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության հուշագիր (CHK 11-1-031)	72,000
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	Կապան	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության հուշագիր (CHK 11-1-065)	72,000
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարան	Սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորում	61,758
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Ալավերդի	Սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարում	60,000
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Ասֆալտապատում, Շիկահող և Տանձուլենջ	51,275
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Սիսիան	Նվիրաբերության պայմանագրի շրջանակում սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով	50,410
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Կապանի փողոցների բարեկարգում և հասարակական նշ. շինությունների նորոգում	30,865
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Արարատ	Նվիրատվություն	30,000
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Կապան քաղաքի փողոցային լուսավորության ապահովման ֆինանսավորում	30,000

Ընկերություն	Համայնք	Նպատակ	Նվիրատվության չափը, հազ. ՀՀ դրամ
«Թեղուտ» ՓԲԸ	Շնող	Շնող համայնքի համայնքային ենթածրագրերի իրականացման համար ֆին.աջակցություն, պայմ.180814	30,000
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Արարատ	Էքսկավատոր ամբարձիչ	28,638
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Կապանի մարզադաշտի նորոգում	26,891
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերին օգնություն	24,000
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Ճանապարհաշինություն, Կարճևան	21,365
«Լիճքվազ» ՓԲԸ	Մեղրի	Նյութական օգնություն	19,109
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Քաջարան հանայնքին գույքի տրամադրում	18,847
«Ասսաթ» ՍՊԸ	Փամբակ	Նվիրատվություն Փամբակ համայնքին	15,000
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Կապանի Բժշկական Կենտրոնի կոմունալ ծախսեր	14,092
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Մեղրի	Ասֆալտապատում, Կարճևան	10,456
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Ալավերդի	Համայնքի կարիքների համար	10,000
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարան	Քաջարանի Բժշկական Կենտրոնի կոմունալ ծախսեր	7,959
«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Կապան	Կապանի համայնքին երաժշտական գործիքներ և գույք	5,362
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ալավերդի	Մանկապարտեզի պահպանության գումար	4,950
«Լիճքվազ» ՓԲԸ	Մեղրի	Նյութական /ֆին./ օգնություն	4,948
«Թեղուտ» ՓԲԸ	Շնող	Օգնություն համայնքին	4,820
«Ագարակի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Մեղրի	Մեղրի համայնքին կատարված բարեգործական հատկացումներ	3,217
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	Կապան	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության հուշագիր (CHK 11-1-064)	2,780
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան»)	Կապան	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության հուշագիր (CHK 11-1-031)	1,500


Ընկերություն	Համայնք	Նպատակ	Նվիրատվության չափը, հազ. ՀՀ դրամ
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Արարատ	Աղետների ռիսկերի կառավարման կարողության զարգացումն Արևելյան գործընկերության երկրների քաղաքների համար ծրագիր	1,350
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Արարատ	Հուշարձանի կառուցում	1000
«Գեդի Գոլդ» ՍՊԸ	Քաջարան	Քաջարան համայնքի Սոցիալապեսանապահով ընտանիքների նպաստի տրամադրում	200
<b>Ընդամենը</b>			<b>2,822,361</b>

Աղբյուրը. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար տրամադրված տեղեկատվություն՝ համադրման արդյունքում ճշգրտված

2022թ. կատարված կամավոր վճարները կազմում են 2.8 մլրդ ՀՀ դրամ: Առաջատար են հանդիսանում Քաջարան և Կապան համայնքները՝ որոնց յուրաքանչյուրին բաժին է հասել ընդհանուր վճարների 36%-ը: Կատարված նվիրատվություններով առաջատար ընկերությունը «Ձանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն է՝ 2.5 մլրդ ՀՀ դրամ կամ 87%: Հատկանշական է, որ կամավոր վճարումներ կատարած ընկերություններից մի քանիսը չեն կատարել կամ ոչ լրիվ են կատարել ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված տարեկան պարտավորությունները:

**Գծապատկեր 6.2.2.1**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից նվիրատվություններից, նվիրաբերություններից կամ այլ ձևով կատարած անհատույց օտարումներից համայնքների բյուջեների եկամուտները՝ դասակարգված ըստ առաջատար համայնքների, միլիոն ՀՀ դրամ<sup>15</sup>



Աղբյուրը. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար տրամադրված տեղեկատվություն՝ համադրման արդյունքում ճշգրտված

<sup>15</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

### Աղյուսակ 6.2.2.2

2022թ. ընթացքում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ընդերքօգտագործման պայմանագրով չկատարված տարեկան պարտավորությունների փոխարեն համայնքներին նվիրատվություններ, նվիրաբերություններ, հազ. ՀՀ դրամ

Ընկերության անվանումը	Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորության չափ	Ընդերքօգտագործման պայմանագրով չկատարված պարտավորություն	Նվիրատվություն համայնքին
«Ագարակի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	40,640	2,720	3,217
«Ասսաթ» ՍՊԸ	800	800	15,000
«Գեղի Գօլդ» ՍՊԸ	650	50	200
<b>Ընդամենը</b>	<b>42,090</b>	<b>3,570</b>	<b>18,417</b>

Աղբյուրը. . Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար տրամադրված տեղեկատվություն՝ համադրման արդյունքում ճշգրտված

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունները մեծ նշանակություն են տվել ազդակիր համայնքների զարգացմանը, իրականացնելով բազմազան ծրագրեր, որոնք ընդգրկում են սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարում, կրթական, առողջապահական և ենթակառուցվածքային բարելավումներ, ինչպես նաև համայնքային աջակցություն:

**Սուբվենցիոն ծրագրեր:** «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն Կապան և Քաջարան համայնքներում մեծ ներդրում է կատարել՝ 640 մլն ՀՀ դրամ՝ ուղղված համայնքների կարիքներին:

**Սոցիալ-տնտեսական նվիրատվություն:** Բացի ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված պարտադիր վճարների՝ ընկերությունների կողմից համայնքներին նաև կատարվել են նվիրատվություններ՝ ուղղված սոցիալ-տնտեսական կարիքներին, որը կազմել է 906.7 մլն ՀՀ դրամ: Կատարված նվիրատվություններով առաջատար ընկերությունը «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն է՝ 698 մլն ՀՀ դրամ կամ 77%: Երկրորդ խոշոր նվիրատվությունը կատարվել է «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի (նախկին «Չաարատ Կապան») կողմից՝ 148.3 մլն ՀՀ դրամ կամ 16%:

**Ենթակառուցվածքային բարելավումներ:** Ընկերությունները մեծ ուշադրություն են դարձրել նաև ենթակառուցվածքների բարելավմանը: «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն Կապան և Քաջարան համայնքներում իրականացրել է զգալի ներդրումներ՝ ճանապարհաշինության, փողոցային լուսավորության, հասարակական շինությունների նորոգման և այլ ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ: Օրինակ, Քաջարանում՝ 309 մլն ՀՀ դրամ հատկացվել է աղբահանությանը՝ քաղաքի նորոգման անահատույց տեխնիկայի տրամադրման համար: Կապանում՝ 76.8 մլն ՀՀ դրամ հատկացվել է մշակույթի պալատի նորոգման համար, իսկ 61.7 մլն ՀՀ դրամ՝ ճանապարհների ասֆալտապատման համար:

**Համայնքային աջակցություն:** «Թեղուտ» ՓԲԸ-ն Շնող համայնքում նաև տրամադրել է ֆինանսական աջակցություն տրանսպորտային ծառայությունների, համայնքային ենթածրագրերի իրականացման և այլ կարևոր ոլորտներում՝ ընդհանուր 34.8 մլն ՀՀ դրամ:


Ընդհանուր առմամբ, 2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրականացված ծրագրերը համալիր կերպով ազդել են համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վրա, նպաստելով ինչպես կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների բարելավմանը, այնպես էլ սոցիալական և մշակութային կյանքի դաշտում գործնական աջակցությանը:

**6.2.3. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ**

2022թ. ընթացքում ընդերքօգտագործող ընկերություններից 11-ը կատարել է նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց: 2022թ. ընդհանուր նվիրատվությունները հիմնադրամներին, իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց կազմել են 4.326 մլրդ ՀՀ դրամ, որից՝ 4.011 մլրդ ՀՀ դրամն իրավաբանական անձանց, իսկ 315 մլն ՀՀ դրամը՝ ֆիզիկական անձանց: Նվիրատվություն ստացող կազմակերպությունների կազմաիրավական տեսակի բաժանման համար հիմք է ծառայել ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվություններում առկա տեղեկատվությունը:

**Գծապատկեր 6.2.3.1**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրականացված նվիրատվություններն ըստ ուղղությունների, հազ. ՀՀ դրամ<sup>16</sup>



Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


**Հիմնադրամներին իրականացված նվիրատվություններ**

<sup>16</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

2022թ. ընթացքում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հիմնադրամներին իրականացված նվիրատվությունների ընդհանուր գումարը կազմել է 3.248 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր նվիրատվությունների շուրջ 75%-ը): Հիմնադրամներին նվիրատվություն կատարել է 3 ընդերքօգտագործող ընկերություն: Ստորև ներկայացված գծապատկերում դիտարկված են ընդերքօգտագործող այն ընկերությունների նվիրատվությունները հիմնադրամներին, որոնց ընդհանուր նվիրատվությունների արժեքը 1 մլն դրամից ավել է:

**Գծապատկեր 6.2.3.2**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հիմնադրամներին իրականացված նվիրատվությունները, հազ. ՀՀ դրամ<sup>17</sup>



Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

<sup>17</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ



### Աղյուսակ 6.2.3.1

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հիմնադրամներին տրամադրված նվիրատվությունը, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները<sup>118</sup>, հազ. ՀՀ դրամ

Կազմակերպություն	Հիմնադրամ	Նվիրատվության չափը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Նվիրատվության չափը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության	Հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության հղում	Մեկնաբանություններ աուդիտի վերաբերյալ
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ					
	Գարի Քեսայան Մշակութային հիմնադրամ	5,000	Արտացոլված չէ	Առկա չէ	Առկա չէ
	Սիթի օֆ սմայլ բարեգործական հիմնադրամ	6,000	6,000	<a href="https://cityofsmile.org/reports/">https://cityofsmile.org/reports/</a>	Առկա չէ
«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ					
	Զանգեզուրի ՊՄԿ բարեգ. հիմնադրամ	3,143,942	Արտացոլված չէ	<a href="https://src.am/am/getMenusContents/252">https://src.am/am/getMenusContents/252</a>	Առկա չէ
	Կապան բարեգործական հիմնադրամ	60,000	Արտացոլված չէ	<a href="https://src.am/am/getMenusContents/252">https://src.am/am/getMenusContents/252</a>	Առկա չէ

<sup>118</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Կազմակերպություն	Հիմնադրամ	Նվիրատվության չափը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Նվիրատվության չափը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության	Հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության հղում	Մեկնաբանություններ աուդիտի վերաբերյալ
	Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամ	3,550	Արտացոլված չէ	<a href="https://hfc.am/reports/">https://hfc.am/reports/</a>	Առկա չէ
	Սիթի օֆ սմայլ բարեգործական հիմնադրամ	2,098	2,098	<a href="https://cityofsmile.org/reports/">https://cityofsmile.org/reports/</a>	Առկա չէ
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)					
	ՀՀ Սյունիք մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ	5,000	Արտացոլված չէ	<a href="https://src.am/am/getMenusContents/252">https://src.am/am/getMenusContents/252</a>	Առկա չէ
	Սահմանամերձ համայնքների զբաղվածության ապահովման հիմնադրամ	500	Արտացոլված չէ	<a href="https://src.am/am/getMenusContents/252">https://src.am/am/getMenusContents/252</a>	Առկա չէ

Կազմակերպություն	Հիմնադրամ	Նվիրատվության չափը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Նվիրատվության չափը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության	Հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության հղում	Մեկնաբանություններ աուդիտի վերաբերյալ
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Գազիկ Ծառուկյան Բարեգործական հիմնադրամ	21,480	Արտացոլված չէ	<a href="https://tsarukyanfound.am/arm/">https://tsarukyanfound.am/arm/</a>	Առկա չէ


Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

**Հասարակական կազմակերպություններին իրականացված նվիրատվություններ**

2022թ. ընթացքում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հասարակական կազմակերպություններին իրականացված նվիրատվությունները կազմել են 247 միլիոն ՀՀ դրամ (ընդհանուր նվիրատվությունների շուրջ 6%-ը): Նվիրատվությունն իրականացրել է 3 ընկերություն: Ստորև ներկայացված են այդ հասարակական կազմակերպություններին իրականացված նվիրատվությունները:

**Գծապատկեր 6.2.3.3**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հասարակական կազմակերպությունների օգտին իրականացված ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվությունները, հազ. ՀՀ դրամ <sup>119,120</sup>



Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

- 1 Արվեստ23 ՀԿ
- 2 Արարատի մարզի բոնցքամարտի ֆեդերացիա
- 3 Հայոց արժիվներ հայրենասիրական ՀԿ
- 4 ՀՀ բոնցքամարտի ֆեդերացիա
- 5 Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիա
- 6 Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա
- 7 Պառնաս մշակ. հասարակակ.կազմակ.
- 8 Հույսի և հավատի օջախ բարեգործական ՀԿ
- 9 Հույսի և հավատի օջախ բարեգործական ՀԿ
- 10 Հայաստանի կուլոյի ֆեդերացիա մարզական
- 11 Հաշմանդամների աջակցության Սյունիքի մարզի ՈՂՋԻ ՀԿ

<sup>119</sup> Գծապատկերում դիտարկված են միայն այն հասարակական կազմակերպությունները, որոնց իրականացված ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվության արժեքը գերազանցում է 1 մլն ՀՀ դրամը

<sup>120</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

- 12 Հայաստանի սամբոյի ֆեդերացիա
- 13 Անդոկ Սյունի զարգացման ՀԿ
- 14 Անդոկ Սյունի զարգացման ՀԿ
- 15 Կապանի վետերանների խորհուրդ
- 16 Ազատամարտ կոմիտե

**Աղյուսակ 6.2.3.2**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ՀԿ-ներին տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները, հազ. ՀՀ դրամ<sup>21</sup>

Կազմակերպություն	ՀԿ	Սոցիալ տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ տնտեսական ներդրումը՝ ըստ ՀԿ կողմից ներկայացված հաշվետվության	Տարբերություն	ՀԿ կողմից ներկայացված հաշվետվության հղում	Մեկնաբանություններ աուդիտի վերաբերյալ
«Գեոպրոմայ նինգ գոլդ» ՍՊԸ						
	Արարատի մարզի բոնցքամարտի ֆեդերացիա	1,500	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Արվեստ23 ՀԿ	2,000	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Հայոց արծիվներ հայրենասիրական ՀԿ	2,850	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ						
	ՀՀ բոնցքամարտի ֆեդերացիա	138,000	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիա	12,000	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա	2,701	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Պառնաս մշակ. հասարակակ. կազմակ.	70,403	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ

<sup>21</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Կազմակերպություն	ՀԿ	Սոցիալ տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ տնտեսական ներդրումը՝ ըստ ՀԿ կողմից ներկայացված հաշվետվության	Տարբերություն	ՀԿ կողմից ներկայացված հաշվետվության հղում	Մեկնաբանություններ աուդիտի վերաբերյալ
	Հուլիսի և հավատի օջախ բարեգործական ՀԿ	442	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Հուլիսի և հավատի օջախ բարեգործական ՀԿ	3,600	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Հայաստանի կուրդյի ֆեդերացիա մարզական	4,556	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Հաշմանդամների աջակցության Սյունիքի մարզի ՈՂՋԻ ՀԿ	1,150	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Հայաստանի սամբոյի ֆեդերացիա	4,000	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Անդոկ Սյունի զարգացման ՀԿ	65	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Անդոկ Սյունի զարգացման ՀԿ	150	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ* (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)						
	Կապանի վետերանների խորհուրդ	148	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ
	Ազատամարտ կոմիտե	3,250	Արտացոլված չէ	-	Առկա չէ	Առկա չէ


Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

**Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների օգտին իրականացված նվիրատվություններ**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին իրականացված նվիրատվությունների չափը կազմում է 26.5 մլն ՀՀ դրամ (ընդհանուր նվիրատվությունների շուրջ 1%): Ստորև ներկայացված են պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին իրականացված նվիրատվությունները:

**Գծապատկեր 6.2.3.4**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների օգտին իրականացված ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվությունները, հազ. ՀՀ դրամ<sup>122</sup>



Աղբյուրը. Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


**Այլ կազմակերպությունների օգտին իրականացված նվիրատվություններ**

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2022թ. իրականացվել են նաև նվիրատվություններ այլ կազմակերպարարական տեսակ ունեցող անձանց՝ պետական կառավարչական հիմնարկներ, արհեստակցական կազմակերպություններ, առևտրային կազմակերպություններ և այլն, ընդհանուր առմամբ նվիրատվությունների արժեքը կազմել է 490 միլիոն ՀՀ դրամ (ընդհանուր նվիրատվությունների շուրջ 11%): Ստորև ներկայացված գծապատկերը ներառում է այն կազմակերպությունների նվիրատվությունները, որոնց արժեքը 1 միլիոն ՀՀ դրամից ավելի է:

**Գծապատկեր 6.2.3.5**

<sup>122</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

2022թ. ընդերքագրած ընկերությունների կողմից այլ ոչ առևտրային կազմակերպություններին հրականացված ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվությունները, հազ. ՀՀ դրամ<sup>23</sup>



Աղբյուրը. ընդերքագրած ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

- 1 Ազարակի ՊՄԿ ՓԲԸ արհեստակցական կազմակերպություն
- 2 Ստանիսլավսկու անվան Ռուսական թատրոն
- 3 Արարատի ԲԿ
- 4 Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն
- 5 Ֆիզիկական Կուլտուրայի և Սամբո Սպորտաձեվի Զարգացման
- 6 ԶՊՄԿ ՓԲԸ արհեստակցական կազմակերպություն
- 7 Կապանի Զոհված և Վիրավոր Ազատամարտիկների Ընտանիքներ
- 8 Թի էմ էմ ուսուցման և զարգացման կենտրոն
- 9 ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի մշակույթի կենտրոն
- 10 Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն
- 11 Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն
- 12 Առաքելություն Հայաստան ԲՀԿ
- 13 Հայ առաքելական սուրբ եկեղեցի Սյունյաց թեմ
- 14 Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
- 15 Այլ
- 16 ՀՀ նախագծերի պետական արտադերատեսչական փորձաքննություն ՓԲԸ
- 17 Հալբի ՔոնսալթՍՊԸ
- 18 Հրանտ Քալաշյան Ա/Զ
- 19 Ռազ-Բիլլինգ ՍՊԸ
- 20 Կոնստանտա բիլդ ՍՊԸ
- 21 Կապանի Նորոզչին ՍՊԸ
- 22 ՀՀ Զինված ուժեր
- 23 Կապանի բժշկական կենտրոն

<sup>123</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ




24 Հայ Առաքելական եկեղեցու Սյունյաց Թեմ  
25 Կապանի Բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային ՓԲԸ

**Ֆիզիկական անձանց օգտին իրականացված նվիրատվություններ**

2022թ. ընդերքօգտագործող ընկերություններն իրականացրել են նվիրատվություններ 315 մլն ՀՀ դրամ արժեքով (ընդհանուր նվիրատվությունների շուրջ 7%) 990 ֆիզիկական անձանց: Ստորև ներկայացված է 2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրականացված ֆիզիկական անձանց նվիրատվությունների ընդհանուր չափը և ֆիզիկական անձանց քանակը:

**Գծապատկեր 6.2.3.6**

2022թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ֆիզիկական անձանց օգտին իրականացված նվիրատվությունները և նրանց թիվը, հազ. ՀՀ դրամ<sup>24</sup>



Աղբյուրը. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

**6.3. Մետաղական արդյունահանման գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա(պահանջ 6.4)**

ԱՃԹՆ-ի Ստանդարտի 6.4-րդ պահանջի համաձայն՝ իրականացնող երկրներին խրախուսվում է տեղեկություններ բացահայտել արդյունահանող ճյուղերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության կառավարման և մոնիթորինգի վերաբերյալ:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համաձայն՝ ընդերքօգտագործողը պարտավոր է իրականացնել «ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկում»: Ի կատարումն այս պահանջի, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, մետաղական օգտակար հանածոների դեպքում ընդերքի օգտագործման հետ կապված՝ ընդերքօգտագործողը պարտավոր է ՇՄՆ ներկայացնել ընդերքօգտագործման հետևանքով

<sup>24</sup> Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ եռամսյակային կտրվածքով հաղորդումը, իսկ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը՝ ամփոփ տարեկան հաշվետվությունը:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման<sup>125</sup> համաձայն՝ մշտադիտարկումների ցուցիչները մշակվում են ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա: Մշտադիտարկումների ծրագրի կազմման համար որպես ելակետային տվյալներ դիտարկվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտով և հիմնական հաշվետվությամբ ներկայացված տվյալները՝ շրջակա միջավայրի փաստացի աղտոտվածության վերաբերյալ: Վերը նշված փաստաթղթերում ամրագրված ցուցանիշներից բացասական շեղումների դեպքում հարկավոր է նախաձեռնել անհրաժեշտ քայլեր՝ հետևանքները վերացնելու համար:

Մշտադիտարկումների ծրագիրը կազմվում է ըստ շրջակա միջավայրի բոլոր բնական բաղադրիչների՝ հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ: Աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունն իրականացվում է հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ ընդերքօգտագործողները պարտավոր են վերանայել և լիազոր մարմնի հետ համաձայնեցնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագիրը և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները:

Լիազոր մարմինը (ՇՄՆ) եռամսյակային հաղորդումներն ու ամփոփ տարեկան հաշվետվությունները ստանալուց հետո ամփոփում է դրանք և 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում լիազոր մարմնի պաշտոնական կայքում: Ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքի առկայության դեպքում մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ ամփոփ տարեկան հաշվետվությունը տեղադրվում է այդ կայքում: Շրջակա միջավայրի աղտոտվածության մշտադիտարկումն ավտոմատ տրամաչափարկված չափման սարքերով իրականացնող ընդերքօգտագործողները չափման

<sup>125</sup> «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120135>

արդյունքներն իրենց էլեկտրոնային կայքում տեղադրում են անմիջապես չափման ավտոմատ համակարգերից տվյալների փոխանցման միջոցով:

Այսպիսով՝ մշտադիտարկումների այս տեսակը սահմանված կարգով իրականացնելու և տվյալների մատչելիությունն ապահովելու պարտավորությունն ամբողջությամբ ընկած է ընդերքօգտագործողի վրա, որի համար նա չի իրականացնում մշտադիտարկումների համար վճարում: Ստորև՝ 6.6.1 աղյուսակում ներկայացված են այն ընկերությունները, որոնք հաշվետու տարվա ընթացքում նշված մշտադիտարկումների իրականացման հաշվետվություններ են ներկայացրել:

Ըստ նոր 2023թ. ԱՃԹՆ ստանդարտի՝ ընկերությունները պարտավորվում են 2025թ. ի վեր ներկայացնել ESG հաշվետվություններ: 2022թ. դրությամբ միայն «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն է ներկայացրել TCFD (կլիմայի հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խումբ) հաշվետվություն<sup>126</sup> բացահայտելու ածխածնի արտանետումների նվազեցման գործընթացը: Ակնկալվում է, որ ընդերքօգտագործող ընկերությունները կսկսեն քայլեր ձեռնարկել, որպեսզի 2025թ. դրությամբ բավարարեն ԱՃԹՆ ստանդարտի պահանջները:

2022թ. ընթացքում ԱՃԹՆ հաշվետու 24 ընկերությունից միայն 8-ն է ներկայացրել բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն:

**Աղյուսակ 6.3.1**

*2022թ. ընդերքօգտագործողների կողմից բնապահպանական մշտադիտարկումների հաշվետվություններ*

Ընկերություն	Առաջին եռամսյակ	Երկրորդ եռամսյակ	Երրորդ եռամսյակ	Չորրորդ եռամսյակ	Տարեկան հաշվետվություն
«Ագարակի Պղնձ-մոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ					Ներկայացված է
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ					Ներկայացված է
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ					Ներկայացված է
«Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է
«Թեղուտ» ՓԲԸ	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է
«Լիճքվազ» ՓԲԸ	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է
«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է		Ներկայացված է
«Սագամար» ՓԲԸ					Ներկայացված է

<sup>126</sup><http://www.zcmc.am/files/TCFD%20D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%20D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>

Աղբյուրը: [ԸՆԴԵՐՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎ – Շրջակա միջավայրի նախարարություն \(env.am\)](http://env.am)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Փորձաքննական եզրակացությունը 7 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում»: Օրենքի դրույթի ձևակերպումից հետևում է, որ բոլոր փորձաքննական եզրակացությունները պարտադիր պետք է հրապարակվեն՝ դրանք տեղադրելով ՇՄՆ-ի կայքում: Այնուհանդերձ, ՇՄՆ-ի կայքի ուսումնասիրությունից հետևում է, որ ընդերքօգտագործման նախագծերի ՇՄԱԳ-ի հաշվետվությունների ոչ բոլոր փորձաքննական եզրակացություններն են հրապարակված նշված կայքում:

Ավելին՝ նույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «ծանուցումը, հիմնադրույթային և նախագծային փաստաթղթերը տեղադրվում են նաև լիազոր մարմնի պաշտոնական կայքում՝ լրումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ»: ՇՄՆ-ի կայքի ուսումնասիրությունից հետևում է, որ ոչ բոլոր նախագծային փաստաթղթերն են կայքում տեղադրված: Ստորև ներկայացված են այն նախագծային փաստաթղթերն ու ՇՄԱԳ-ի փորձաքննական եզրակացությունները, որոնք հրապարակված են ՇՄՆ-ի կայքում:

**Աղյուսակ 6.3.2**

*ՇՄԱԳ-ի փորձաքննական եզրակացությունների և նախագծային փաստաթղթերի հասանելիությունը ՇՄՆ-ի կայքում<sup>127</sup>, 2024թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ*

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ-ի փորձաքննության եզրակացություն	Հրապարակման ամսաթիվ
1	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/311 թույլտվությամբ տրամադրված տեղամասի ընդլայնման և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն	24.06.2020
2	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման հաշվետվություն	14.11.2017
		Դրական եզրակացություն «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	22.07.2021
3	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
4	«Ասսաթ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
5	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Մեղրասարի ոսկու հանքավայրի արդյունահանման աշխատանքային նախագծի վերաբերյալ	18.11.2014

<sup>127</sup> <https://armmonitoring.am/#home>

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ-ի փորձաքննության եզրակացություն	Հրապարակման ամսաթիվ
		Դրական եզրակացություն Թաղամիրի ոսկու երևակման տարածքում 2020-2023թթ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ	15.03.2021
		Դրական եզրակացություն Տաշտունի ոսկու կորզման գործարանի վերազինման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ	22.07.2021
		Դրական եզրակացություն Սյունիքի մարզի Մեղրասարի ոսկու հանքավայրի արդյունահանման /արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում/ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	08.09.2022
6	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման աշխատանքային նախագծի հաշվետվություն	06.08.2014
		Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի հաշվետվություն	19.09.2015
7	«Գեղի Գօլդ» ՍՊԸ	Գեղի գետի ավազանի հանքային դաշտում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ժամկետի երկարաձգման նախնական գնահատման հայտ	28.12.2015
8	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տարածքում 2017-2019թթ. երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախնական գնահատման հայտ	04.10.2017
		Դրական եզրակացություն Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի արտադրողականության բարձրացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	02.02.2022
		Դրական եզրակացություն Գեղարքունիքի մարզի Սոթքի ոսկու հանքավայրի բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	26.09.2022
		Բացասական եզրակացություն Գեղարքունիքի մարզի Ծովակի պեմզային ավազների հանքավայրում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ	27.03.2024

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ-ի փորձաքննության եզրակացություն	Հրապարակման ամսաթիվ
9	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխության հաշվետվություն	16.12.2016
		Դրական եզրակացություն Կապան համայնքում նախատեսվող անտառապատման և անտառավերականգնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:	04.05.2021
		Դրական եզրակացություն «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման հախագծի փոփոխության (դիզեյնին ավտոհավաքակայանի կառուցում, դիզեյնին ավտոպարկի կազմի նորացում, պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում, թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	11.05.2023
		Դրական եզրակացություն «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման հախագծի փոփոխության (Սորուն լեռնային զանգվածի տեղափոխման ավտոմատացված երկաթուղային համակարգի (SARD-1200) կառուցում և բացահանքի վերջնական եզրագծի փոփոխություն) նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ	11.09.2023
		Դրական եզրակացություն «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի 110 կՎ "Ագարակ" օդային գծի տեղափոխում «ՉՊՄԿ» ՓԲԸ-ի տարածքից և 220 ԿՎ օդային գծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	19.07.2024
10	«Թեղուտ» ՓԲԸ	Դրական եզրակացություն սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող թափոնների պահման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	15.06.2021
		Դրական եզրակացություն «Թեղուտ» ՓԲԸ լեռնահարստացման կոմբինատում առաջացող թափոնների պահման/տեղադրման շրջակա	21.01.2022

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ-ի փորձաքննության եզրակացություն	Հրապարակման ամսաթիվ
		միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	
		Դրական եզրակացություն «Թեղուտ» ՓԲԸ-ի Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի ժամկետի երկարաձգման և ընդլայնման օգտակար հանածոների արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	11.05.2023
11	«Լեռ-Էքս» ՍՊԸ	Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրում 2015-2017թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների նախնական գնահատման հայտ	15.12.2015
12	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Դրական եզրակացություն Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	29.04.2016
13	«Լիճքվազ» ՓԲԸ	Դրական եզրակացություն «Լիճքվազ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մեղրի համայնքում լեռնահարստացման ֆաբրիկայի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	16.08.2023
14	«Ուրագոլյաններ» ՓԲԸ	Հրապարակված չէ	-
15	«Մարջան Մայնինգ Բոնֆանի» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
16	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թուվանուկի ոսկու (կենտրոնական տեղամաս) հանքավայրի շահագործման փոփոխված աշխատանքային նախագծի վերաբերյալ	11.12.2014
17	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Մեղրաձորի ոսկու կորզման ֆաբրիկայի աշխատանքային նախագծի վերաբերյալ	22.04.2014
		Բացասական եզրակացություն Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ:	27.07.2022
18	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Էրթիչի քվարցիտների հանքավայրի արդյունահանման հաշվետվություն	13.04.2018

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ-ի փորձաքննության եզրակացություն	Հրապարակման ամսաթիվ
		Դրական եզրակացություն Երևան քաղաքի Աբովյան փողոց 5/1, 5/2, և 5/5 հասցեներում նախատեսվող հյուրանոցային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ	18.04.2018
		Դրական եզրակացություն «Մուլտի Գրուպ-Սթոուն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատի տրավերտինի և կավերի հանքավայրի «Մուլտի գրուպ սթոուն» տրավերտիններ տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը	13.03.2023
		Դրական եզրակացություն «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան համայնքի Զորավար Անդրանիկի փ. 10 և 13 հասցեներում կառուցվող 5 բազմաբնակարան բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ	16.05.2023
		Դրական եզրակացություն «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան համայնքի Զորավար Անդրանիկի 11, 17, 18, 19, 20, 23, 24 հասցեներում կառուցվող 5 բազմաբնակարան բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ	16.05.2023
19	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» ՓԲԸ)	Շահումյանի ոսկու-բազմամետաղային հանքավայրի տարածքում պաշտպանիչ բնամասի փլուզման հետևանքի վերացման հաշվետվություն	22.01.2019
		Շահումյանի ոսկու-բազմամետաղային հանքավայրի ստորերկրյա մշակման տեխնիկական նախագծի (փոփոխության) հաշվետվություն	18.11.2019
		Դրական եզրակացություն Թիվ ԼՎ-183 լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք, նախկին Շահումյան բնակավայր) 2020 թվականին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (Ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	03.09.2024



N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ-ի փորձաքննության եզրակացություն	Հրապարակման ամսաթիվ
		Դրական եզրակացություն «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Սյունիքի մարզի Գեղանուշի պոչամբարի փոփոխված նախագծով նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ	03.09.2024
20	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Հրապարակված չէ	-
21	«Սագամար» ՓԲԸ	Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդլայնման աշխատանքային նախագիծ	22.05.2015
		Դեղին և Սև գետերի ավազանում երկրաբանահետախուզական աշխատանքների վերաբերյալ	26.03.2018
		Բացասական եզրակացություն Լոռու մարզի Ստեփանավանի հանքային դաշտի «Չքնաղ-Արմանիս» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ	06.02.2024
22	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
23	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Հրապարակված չէ	-
24	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Հրապարակված չէ	-

Աղբյուրը. Եզրակացություններ – Շրջակա միջավայրի նախարարություն (env.am)

Համաձայն ԱՃԹՆ 2023թ. Ստանդարտի 6.4 պահանջի՝ իրականացնող երկրներից պահանջվում է ապահովել, որ շրջակա միջավայրի, սոցիալական և գենդերային ազդեցության գնահատումները, ինչպես նաև մոնիտորինգի հաշվետվությունները հանրությանը հասանելի լինեն: Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պահանջը կատարվում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացի միջոցով, որն իրականացվում է Շրջակա միջավայրի նախարարության կողմից, և այդ գնահատումների հետ կապված տվյալները հասանելի են հանրությանը:

Սոցիալական և գենդերային ազդեցության գնահատման պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն կարող է քննարկել ընդերքօգտագործող ընկերություններում ESG (Բնապահպանական, սոցիալական և կառավարում) պրակտիկաների ներդրման և կիրառման հարցը, որը կարող է իրականացվել նաև օրենսդրական փոփոխությունների միջոցով: Հայաստանում ESG պրակտիկայի ներդրումն իրականացրել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որի տարեկան հաշվետվությունները հրապարակվում են և հասանելի են հանրությանը<sup>128</sup>:

<sup>128</sup> <http://www.zcmc.am/arm/sustainability/>

## 7. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ



## 7. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

### 7.1. Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և շրջանակները (պահանջ 4.1, 4.8)

Հիմք ընդունելով ԱՃԹՆ Ստանդարտի 4-րդ պահանջը՝ Պետական եկամուտների կոմիտեն, Շրջակա միջավայրի նախարարությունը, համայնքները (տվյալները ներկայացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով), ինչպես նաև օրենքով սահմանված մետաղական հանքաքարի արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները պետք է ներկայացնեն հրապարակային հաշվետվություններ՝ ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ սահմանված հաշվետվությունների ձևաչափով և ժամկետներով<sup>129</sup>: ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները ներկայացվում են ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների հարթակի միջոցով<sup>130</sup>: 2022 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը եղել է մինչև 2023թ. օգոստոսի 1-ը:

Ներկայացված հաշվետվությունները տրամադրվում են Անկախ Ադմինիստրատորին, այնուհետև վերջինս համադրում է ընկերությունների և պետական մարմինների տվյալները և ներկայացնում է համադրման արդյունքները, որը ներառում է եկամուտների հոսքերի վերլուծություն, գումարների համեմատություն, բացահայտված անհամապատասխանություններ և չհամաձայնեցված գումարներ, եթե այդպիսիք կան: Անկախ Ադմինիստրատորի կողմից տրվում է առաջարկություններ՝ համադրման բարելավման և տվյալների հավաքագրման համար:

Տվյալների համադրման նպատակով ԲՇԽ-ի կողմից սահմանվում է էականություն շեմ՝ ընկերությունների և եկամտային հոսքերի վերաբերյալ: ԲՇԽ-ի՝ 2024թ. մարտի 28-ի որոշմամբ<sup>131</sup> սահմանվել են նշված էականության շեմերը:

Համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշման՝ ներկայացված տվյալների հավաստիությունը հաստատելու նպատակով պետական մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունները պարտավոր են ստորագրվել պետական մարմնի ղեկավարի կողմից, իսկ ընկերությունների դեպքում՝ ընկերության տնօրենի կամ գլխավոր հաշվապահի կողմից: Անկախ Ադմինիստրատորի կողմից որոշ եկամտային հոսքերի վերաբերյալ պետական մարմիններին և ընկերություններին կատարվել է գրավոր հարցումներ և ստացվել գրավոր հաստատումներ՝ տրամադրված տեղեկատվության հավաստիության վերաբերյալ: Ինչպես նաև կապ է հաստատվել հաշվետու ընկերությունների և պետական մարմինների հետ՝ հավելյալ տեղեկություն ստանալու և առկայության դեպքում անհամապատասխանությունները ճշտելու նպատակով: Անկախ Ադմինիստրատորի կողմից նաև ներկայացվել են առաջարկություններ՝ տվյալների համադրման և հավաքագրման գործընթացի բարելավման ուղղությամբ:

<sup>129</sup> [arlis.am/DocumentView.aspx?DocID=132674](https://arlis.am/DocumentView.aspx?DocID=132674)

<sup>130</sup> <https://reports.eiti.am/hy/>

<sup>131</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

Համադրման շրջանակներում ֆինանսական տվյալները ներկայացված են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ ԱՄՆ դոլարով: ԱՄՆ դոլարի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված 2022թ. տասներկու ամիսների փոխարժեքների միջինացմամբ<sup>132</sup>:

### 7.1.1. Համադրվող ընկերությունների ցանկի որոշում

ԲՀԽ-ի՝ 2024թ. մարտի 28-ի որոշմամբ<sup>133</sup> սահմանվել է, որ 2023թ. օգոստոսի 1-ի դրությամբ դադարեցված ընդերքօգտագործման թույլտվությամբ ընկերությունների համար հրապարակային հաշվետվությունները ներկայացվեն միակողմանի՝ միայն հաշվետու պետական մարմինների կողմից, քանի որ օրենքի համաձայն այդ ընկերություններն այլևս չեն համարվել ընդերքօգտագործող, հետևաբար հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն չեն ունեցել:

Մետաղական օգտակար հանածո արդյունահանող բոլոր ընդերքօգտագործողները հաշվետու են ԱՃԹՆ տվյալներ ներկայացնելու համար, բացառությամբ սնանկ ճանաչված ընկերությունների: Բազմաշահառու խմբի որոշմամբ 2022 ֆինանսական տարվա համար համադրվող են համարվում այն ընկերությունները, որոնք հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե են վճարել 150 միլիոն դրամին համարժեք կամ այն գերազանցող գումարի հարկեր և վճարումներ: Համադրման սույն շեմը կիրառվել է նաև 2016-2021թթ. համար:

2022թ. հրապարակային հաշվետվությունները կազմելիս՝ հիմք է ընդունվել 2023թ. մայիսի 31-ի դրությամբ հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (ճշգրտված հաշվարկով), հայտարարագրով (ճշգրտված հայտարարագրով) հաշվարկված, ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված (ներառյալ տույժերը և տուգանքները) տվյալները:

Անկախ Ադմինիստրատորի կողմից համադրման շրջանակներում վերլուծվել է 24 ընկերությունների վերաբերյալ հրապարակային հաշվետվություններով ներկայացված տվյալները: Անկախ Ադմինիստրատորի կողմից ընկերություններից և պետական մարմիններից պահանջվել է լրացուցիչ տեղեկատվություն և պարզաբանումներ համադրվող ընկերությունների և եկամտային հոսքերի<sup>134</sup> վերաբերյալ:

<sup>132</sup> 2022թ.-ին մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը կազմել է 435.8 ՀՀ դրամ: <https://www.cba.am/EN/>

<sup>133</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

<sup>134</sup> 2022թ. ընթացքում պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի և մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանման յուրաքանչյուր մեկ տոննայի համար լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի վերաբերյալ Անկախ Ադմինիստրատորը ՊԵԿ-ից և Ընկերություններից պահանջել և ստացել է նշված տուրքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ընկերությունների տնօրենների և ՊԵԿ բարձրաստիճան պաշտոնյաի ստորագրություններով:

Ստորև ներկայացված է 2022թ. հաշվետու ընկերությունների գծով պետական բյուջեի եկամտային հոսքերը՝ ըստ ընկերությունների և պետական մարմինների (ՊԵԿ, ՇՄՆ)<sup>135</sup> կողմից ներկայացված տվյալների, ինչպես նաև էականության շեմի որոշումն ընկերությունների համար:

---

<sup>135</sup> Ընկերությունների էականության շեմի որոշման նպատակով եկամտային հոսքերի մեջ ներառվել են ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի տվյալները, քանի որ ըստ ԲՇԽ որոշման՝ հաշվի է առնվել միայն պետական բյուջեի եկամտային հոսքերը: ՏԿԵՆ-ի եկամտային հոսքերը վերաբերվում են համայնքային բյուջեներին:

### Աղյուսակ 7.1.1

Եկամտային հոսքեր՝ ըստ ընկերությունների, 2022թ.

Հ/Հ	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ՀՀ դրամ		Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ԱՄՆ դոլար		Մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում %	Էականության շեմ. 150 մլն դրամ և ավել
		Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների	Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների		
1	«Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	99,377,546	99,267,156	228,035	227,781	76.17%	էական
2	«Ագարակի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	10,194,612	10,224,571	23,393	23,462	7.85%	էական
3	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	7,400,040	7,346,217	16,980	16,857	5.64%	էական
4	«Թեղուտ» ՓԲԸ	4,929,323	4,028,102	11,311	9,243	3.09%	էական
5	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ (նախկին «Չաարատ Կապան» )	3,973,236	3,973,236	9,117	9,117	3.05%	էական
6	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	2,366,393	2,275,081	5,430	5,220	1.75%	էական
7	«Լիճքվազ» ՓԲԸ	2,305,790	1,891,826	5,291	4,341	1.45%	էական
8	«Լեռ-Էքս» ՍՊԸ	422,749	407,760	970	936	0.31%	էական
9	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	258,537	301,835	593	693	0.23%	էական
10	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	286,742	291,401	658	669	0.22%	էական
	<b>Ընդամենը էականության շեմը գերազանցող ընկերություններ</b>	<b>131,514,967</b>	<b>130,007,185</b>	<b>301,778</b>	<b>298,318</b>	<b>99.76%</b>	
11	«Սազամար» ՓԲԸ	72,697	83,302	167	191	0.06%	Ոչ էական

Հ/Հ	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ՀՀ դրամ		Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ԱՄՆ դոլար		Մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում %	Էականության շեմ. 150 մլն դրամ և ավել
		Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների	Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների		
12	«Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ	74,425	76,341	171	175	0.06%	Ոչ էական
13	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	69,925	39,676	160	91	0.03%	Ոչ էական
14	«Ատ-Մետալս» ՍՊԸ	2,891	28,698	7	66	0.02%	Ոչ էական
15	«Ասսաթ» ՍՊԸ	25,160	25,116	58	58	0.02%	Ոչ էական
16	«Գեդի Գոլդ» ՍՊԸ	15,986	16,068	37	37	0.01%	Ոչ էական
17	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	12,771	12,873	29	30	0.01%	Ոչ էական
18	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	1,408	11,843	3	27	0.01%	Ոչ էական
19	«Ղարազույաններ» ՓԲԸ	10,356	10,356	24	24	0.01%	Ոչ էական
20	«Ֆորչն Ռիզորսիս ՍՊԸ	4,557	4,633	10	11	0.00%	Ոչ էական
21	«Վայք Գոլդ» ՍՊԸ	2,031	2,273	5	5	0.00%	Ոչ էական
22	«Վարդանի Հարթոնքը» ՍՊԸ	10,171	203	23	0	0.00%	Ոչ էական
23	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	-	-	-	-	0.00%	Ոչ էական
24	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	12,823	2,930	29	7	0.00%	Ոչ էական
<b>Ընդամենը էականության շեմը չգերազանցած ընկերություններ</b>		<b>315,201</b>	<b>314,312</b>	<b>219</b>	<b>198</b>	<b>0.24%</b>	
<b>Ընդամենը եկամտային հոսքեր</b>		<b>131,830,168</b>	<b>130,321,497</b>	<b>301,997</b>	<b>298,516</b>	<b>100.00%</b>	

Աղբյուրը. ՀՀ ՊԵԿ-ի, ՇՄՆ-ի և ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից տրամադրված հրապարակային հաշվետվություններ


Պետական մարմինների կողմից ներկայացված նախնական տվյալների համաձայն՝ 24 հաշվետու ընկերության գծով պետական բյուջեի եկամուտները 2022թ. կազմել են 130.3 մլրդ ՀՀ դրամ: Էականության շեմի կիրառման արդյունքում 150 մլն ՀՀ դրամ և ավել եկամուտներ է գրանցել 10 ընկերություն: Նշված ընկերությունների գծով եկամտային հոսքերը կազմել են 130 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 99.76%-ը:

Հաշվետու ընկերությունների ցանկում առաջատարը «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն է, որի մասնաբաժինը կազմում է 99.3 մլրդ ՀՀ դրամ կամ 76%:

Հարկ է նշել, որ համադրվող ընկերություններից երկուսը՝ «Լեռ-Էքս» ՍՊԸ-ն և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն, չնայած այն հանգամանքին, որ հաշվետու տարվա ընթացքում չեն իրականացրել հանքաքարի արդյունահանում, սակայն վերջիններիս գծով հաշվարկված հարկերը գերազանցել են էականության շեմը: Էականության շեմի գերազանցումը հիմնականում պայմանավորված է հաշվարկված եկամտային հարկով և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրմամբ: Նշված հանգամանքը պայմանավորված է ընկերություններում աշխատատեղերի պահպանմանը, ինչը նպաստել է հարկային պարտավորությունների առաջացմանը:

**Գծապակեր 7.1.1**

Էականության շեմը գերազանցող ընկերությունների գծով եկամուտները, 2022թ.



Աղբյուրը. ՀՀ ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվություններ

Այսպիսով, համաձայն ԱՃԹՆ Ստանդարտի 4-րդ պահանջի՝ 24 հաշվետու ընկերություններից 10-ը ներառվել են համադրման գործընթացում:

**7.1.2. Համադրվող եկամտային հոսքերի որոշում**

Եկամտային հոսքերի էականության շեմի կիրառման շրջանակներում վերլուծվել են Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի, համայնքների (տեղեկությունը տրամադրվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից) և Շրջակա միջավայրի նախարարությունների կողմից պետական և համայնքային եկամուտների հոսքերի վերաբերյալ տվյալները:



ԲՇԽ-ն համաձայնության է եկել 2022թ. ֆինանսական տարվա համար համադրվող եկամտային հոսքերի էականության շեմի որոշման շուրջ՝ հիմք ընդունելով Ստանդարտի 4.1, 4.2 և 4.6 պահանջները և մի շարք կարևոր գործոններ: Դրանք ներառում են տվյալների տարբերությունների նվազման դրական միտումը, պետական մարմինների և ընկերությունների հաշվետվություն կազմելու հմտությունների բարելավումը, ինչպես նաև մեխանիկական սխալների նվազման ռիսկը: Ավելին, նպատակ ունենալով ապահովել զեկույցների ֆինանսական արդյունավետությունը և հետևելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության խորհուրդներին՝ որոշվել է 2022թ. համադրել արդյունահանման գործունեության հետ կապված եկամտային 5 հոսք, որոնք առավել ռիսկային են մեխանիկական սխալների տեսանկյունից:

1. Ռոյալթի
2. Ավելացված արժեքի հարկ
3. Մաքսատուրք, մաքսավճար
4. Վարձավճարներ
5. Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ (ընդ որում՝ համաձայն ԲՇԽ-ի որոշման՝ այդ պարտավորությունները կհամադրվեն առանց էականության շեմ կիրառելու):

ԲՇԽ-ի՝ 2024թ. մարտի 28-ի որոշման<sup>136</sup> համաձայն՝ երկկողմանի ներկայացված համադրվող ֆինանսական հոսքերում անհամապատասխանությունների բացահայտման դեպքում Անկախ Ադմինիստրատորը հետաքննել է այն անհամապատասխանությունները, որոնց չափը կազմել է 4 տոկոս և ավելի, սակայն ոչ պակաս քան 1 միլիոն ՀՀ դրամը (էական շեղում): Տվյալ հաշվարկի հիմք է հանդիսանում այն կողմի ներկայացված տվյալը, որն ավելի փոքր է: Էական շեղումների դեպքում Անկախ Ադմինիստրատորն ուղղակիորեն կապ է հաստատել տվյալը ներկայացրած պետական մարմինների կամ ընկերությունների հետ՝ շեղումների վերաբերյալ բացատրություններ ստանալու նպատակով:

Ստորև ներկայացված է 2022թ. պետական բյուջեի եկամտային հոսքերը՝ համաձայն ընկերությունների և պետական մարմինների(ՊԵԿ, ՇՄՆ, ՏԿԵՆ) կողմից ներկայացված տվյալների:

<sup>136</sup> <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

### Աղյուսակ 7.1.2

Պետական և համայնքային բյուջեների եկամտային հոսքեր, 2022թ.

Բյուջեի եկամտի կոդ 2001	Բյուջեի եկամտի հոդված	Պետական և համայնքային բյուջեներ ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ՀՀ դրամ		Պետական և համայնքային բյուջեներ ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ԱՄՆ դոլար		Մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում %	Պետական մարմին
		Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների	Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների		
1146 714612	Ռոյալթի	42,604,174	42,435,589	97,761	97,374	31.86%	ՊԵԿ
1141 714110	Ավելացված արժեքի հարկ	7,383,048	6,216,244	16,941	14,264	4.67%	ՊԵԿ
	Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ	1,423,733	1,612,647	3,267	3,700	1.21%	ՏԿԵՆ (ՏԻՄ)
1415 741520	Վարձակալության վճարներ	1,305,562	1,218,260	2,996	2,795	0.91%	ՏԿԵՆ (ՏԻՄ)
1151 715100, 1422 742212, 1145 714511	Մաքսատուրք, մաքսավճար	1,155,015	1,211,198	2,650	2,779	0.91%	ՊԵԿ
	<b>Ընդամենը համադրվող եկամտային հոսքեր</b>	<b>53,871,532</b>	<b>52,693,938</b>	<b>123,615</b>	<b>120,913</b>	<b>39.56%</b>	
	2022թ. ընթացքում պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի և մոլիբդենի արտահանման յուրաքանչյուր մեկ տոննայի համար պետական տուրք	43,208,160	43,208,160	99,147	99,147	32.44%	ՊԵԿ
1112 711200	Շահութահարկ	19,583,037	19,533,747	44,936	44,823	14.67%	ՊԵԿ
1111 711100	Եկամտային հարկ	16,592,322	16,355,509	38,073	37,530	12.28%	ՊԵԿ
1145 714523	Բնապահպանական հարկեր՝ ըստ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների	515,558	493,769	1,183	1,133	0.37%	ՊԵԿ
	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համայրում	279,419	255,415	641	586	0.19%	ՇՄՆ

Բյուջեի եկամտի կոդ 2001	Բյուջեի եկամտի հոդված	Պետական և համայնքային բյուջեներ ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ՀՀ դրամ		Պետական և համայնքային բյուջեներ ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ., հազ. ԱՄՆ դոլար		Մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում %	Պետական մարմին
		Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների	Ըստ ընկերությունների	Ըստ պետական մարմինների		
1145 714522	Հանքավայրի օգտագործման և Զրոգտագործման թույլտվության համար պետական տուրք	190,070	190,000	436	436	0.14%	ՊԵԿ
1142 714200	Ալցիզային հարկ	146,017	143,874	335	330	0.11%	ՊԵԿ
1431 743120, 1161 716122	Բնապահպանական տույժեր ու տուգանքներ	69,251	161,849	159	371	0.12%	ՇՄՆ
1146 714612	Բնօգտագործման վճարներ	44,507	57,496	102	132	0.04%	ՊԵԿ
1131 713121 / 1136 713611	Գույքահարկ	43,226	18,783	99	43	0.01%	ՏԿԵՆ (ՏԻՍ)
1145 714523	Ներմուծման բնապահպանական հարկեր	30,994	29,828	71	68	0.02%	ՊԵԿ
1131 713122	Հողի հարկ	26,521	12,609	61	29	0.01%	ՏԿԵՆ (ՏԻՍ)
	Մշտադիտարկումների իրականացման վճար	24,984	26,818	57	62	0.02%	ՇՄՆ
	Հողի ձեռքբերում	15,551	-	36	-	0.00%	ՏԿԵՆ (ՏԻՍ)
	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման վճար	3,381	2,000	8	5	0.00%	ՇՄՆ
	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը	233	-	1	-	0.00%	ՇՄՆ
	Հողի օտարում	-	-	-	-		ՏԿԵՆ (ՏԻՍ)
	<b>Ընդամենը չհամադրվող եկամտային հոսքեր</b>	<b>80,773,230</b>	<b>80,489,857</b>	<b>185,345</b>	<b>184,694</b>	<b>60.44%</b>	
	<b>Ընդամենը եկամտային հոսքեր</b>	<b>134,644,762</b>	<b>133,183,796</b>	<b>308,960</b>	<b>305,608</b>	<b>100.00%</b>	


Աղբյուրը. ՀՀ ՊԵԿ-ի, ՇՄՆ-ի, ՏԿԵՆ-ի և ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից տրամադրված հրապարակային հաշվետվություններ

Պետական մարմինների կողմից ներկայացված նախնական տվյալների համաձայն՝ հաշվետու ընկերությունների գծով պետական և համայնքային բյուջեների եկամուտները 2022թ. կազմել են 133.2 մլրդ ՀՀ դրամ: Համադրվող եկամտային 5 հոսքերի մեծությունը կազմել է 52.6 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 40%-ը: Չհամադրվող եկամտային հոսքերի մասնաբաժին ընդհանուր եկամտային հոսքերում կազմում են 80.5 մլրդ ՀՀ դրամ կամ 60%:

Համադրվող եկամտային հոսքերում ամենամեծ մասնաբաժինն ունի ռոյալթին, որը կազմում է 42.4 մլրդ ՀՀ դրամ կամ 81%, իսկ ընդհանուր եկամտային հոսքերի մեջ վերջինիս մասնաբաժինը կազմում է 32%:

**Գծապատկեր 7.2.1**

Համադրվող եկամտային հոսքերի մասնաբաժինն ընդհանուր եկամուտների մեջ, 2022թ.



Աղբյուրը. ՀՀ ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի և ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվություններ

Համաձայն Անկախ Ադմինիստրատորի կողմից իրականացված նախնական համադրման՝ 24 հաշվետու ընկերության գծով ընդհանուր եկամտային հոսքերի նախնական անհամապատասխանությունը կազմել էր 1.46 մլրդ ՀՀ դրամ կամ 1.1%: Չնայած համադրվող եկամտային հոսքերի մեծությունը փոքր է չհամադրվողներից, համադրվող եկամտային հոսքերի անհամապատասխանությունը կազմում է 1.18 մլրդ դրամ կամ ընդհանուր անհամապատասխանությունների 80%-ը: Նշված հանգամանքը ենթադրում է, որ ԲՇԽ-ի կողմից համադրվող եկամտային հոսքերի ընտրությունն արդարացված է և թույլ կտա Անկախ Ադմինիստրատորի կողմից իրականացվող համադրման աշխատանքների արդյունքում վերացնել էական անհամապատասխանությունները:

Ստորև ներկայացված է համադրվող ընկերություններից ՀՀ պետական և համայնքային բյուջեների եկամուտները՝ ըստ համադրվող եկամտային հոսքերի.

### Աղյուսակ 7.2.2

Համադրվող ընկերություններից եկամտային հոսքեր<sup>1</sup> ըստ համադրվող եկամտային հոսքերի, 2022թ

Բյուջեի եկամտի կոդ 2001	Բյուջեի եկամտի հոդված	Պետական և համայնքային բյուջեներ ընդհանուր եկամտային հոսքեր 2022թ.		Մասնաբաժին %
		հազ. ՀՀ դրամ	հազ. ԱՄՆ դոլար	
1146 714612	Ռոյալթի	42,435,444	97,374	81%
1141 714110	Ավելացված արժեքի հարկ	6,204,271	14,237	12%
	Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ	1,599,147	3,669	3%
1151 715100, 1422 742212, 1145 714511	Մաքսատուրք, մաքսավճար	1,205,514	2,766	2%
1415 741520	Վարձակալության վճարներ	1,204,670	2,764	2%
	<b>Ընդամենը համադրվող եկամտային հոսքեր</b>	<b>52,649,046</b>	<b>120,810</b>	<b>100%</b>

Աղբյուրը. ՀՀ ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի և ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվություններ

#### 7.1.3. Այլ ոչ հարկային վճարներ

ԱՃԹՆ 5-րդ զեկույցի շրջանակներում համադրվող եկամտային 5 հոսքերում առկա են ոչ հարկային 2 վճարներ.

1. Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված վճարներ
2. Վարձակալության վճարներ

Սույն վճարներից առաջինը՝ սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները, առաջանում են պետության և ընդերքօգտագործող ընկերությունների միջև կնքվող պայմանագրերում, որոնց ձևը սահմանված է ՀՀ Կառավարության 2012թ. մարտի 22-ի N 437-Ն որոշմամբ<sup>137</sup>: Նշված պայմանագրի հավելված 3-ով՝ ընդերքօգտագործողը պարտավորվում է իրականացնել հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական կարիքների մեղմացման համար նախատեսվող միջոցառումներ: Համաձայն ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված տվյալների՝ հաշվետու ընկերությունների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված վճարները կազմում են 1.6 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 1.2%-ը:

Վարձակալության վճարները վերաբերում են համայնքների կողմից ընդերքօգտագործող ընկերություններին որպես վարձակալություն տրամադրված անշարժ գույք, տրանսպորտային միջոց կամ հողամաս, որոնք սեփականության իրավունքով պատկանում են համայնքին: Համաձայն ՏԿԵՆ-

<sup>137</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194567>

ի կողմից ներկայացված տվյալների՝ հաշվետու ընկերությունների վարձակալության վճարները կազմում են 1.2 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 0.9%-ը:

#### 7.1.4. Տվյալների հավաքագրում

ԲՇԽ 2017թ. դեկտեմբերի 6-ի նիստի արձանագրությամբ<sup>138</sup> ՀՀ ԱՃԹՆ-ն Ստանդարտի 7.2 պահանջի համաձայն՝ ընդունել է «բաց տվյալների» հայեցակարգը: Համաձայն հայեցակարգի՝ սահմանվել է Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակում բաց տվյալների հայեցակարգի իրականացման սկզբունքները: Սկզբունքի կիրառումը դիտարկվում է ԱՃԹՆ-ի տարեկան զեկույցների հրապարակման համատեքստում, ինչը նպաստում է հաշվետու ընկերությունների և պետական մարմինների կողմից տվյալների հրապարակման գործընթացի խթանմանը:

Հաշվետու ընկերությունները և պետական մարմիններն ԱՃԹՆ հրապարակային հաշվետվությունների ներկայացման համար լիազոր անձի միջոցով գրանցվում են առցանց հաշվետվությունների համակարգում<sup>139</sup> լրացնելով ձևաթուղթ, որից հետո ստանում հաստատման նամակ և ակտիվացման հղում: Գրանցման այս նամակն ուղարկվում է նաև համակարգի Ադմինիստրատորին, որը ստուգում է տեղեկությունը, հաստատում գրանցումը և թույլ է տալիս մուտք գործել: Գրանցումից հետո հաշվետու ընկերությունները և պետական մարմինները պարտավոր են յուրաքանչյուր տարվա համար մինչև հաջորդող տարվա օգոստոսի 1-ը ներկայացնել հրապարակային հաշվետվություններ՝ ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-N որոշմամբ<sup>140</sup> սահմանված ձևանմուշների հիման վրա: Լրացված հաշվետվությունները ստորագրվում են էլեկտրոնային եղանակով և ներկայացնելուց հետո հասանելի են համակարգում:

Զեկույցի պատրաստման շրջանակներում հրապարակային հաշվետվություններն Անկախ Ադմինիստրատորին հասանելի են դառնում վերջինիս համակարգի մուտքային տվյալներ տրամադրելու միջոցով, ինչից հետո Անկախ Ադմինիստրատորը ստուգում է հրապարակային հաշվետվությունների առկայությունը, իսկ դրանց բացակայության կամ առկա հաշվետվությունների մեջ տեղ գտած թերությունների դեպքում համակարգի միջոցով կամ իր էլեկտրոնային փոստի հասցեից հարցումներ են ուղարկվում օգտվողի (ընկերության կամ պետական մարմնի կողմից լիազոր անձի) էլեկտրոնային փոստի հասցեին: Օգտվողը պատասխանում է անկախ ադմինիստրատորի հարցումներին՝ հարցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հրապարակային հաշվետվություններում ներառված ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալներից զատ՝ զեկույցի պատրաստման շրջանակներում անհրաժեշտ այլ տեղեկություն ստանալու, ինչպես նաև համադրման գործընթացում հայտնաբերված անհամապատասխանությունների պարզաբանման համար Անկախ Ադմինիստրատորի կողմից իրականացվել է գրավոր հարցումներ ընկերություններին և պետական մարմիններին՝ ստանալով վերջիններիս ղեկավար կամ լիազոր անձի ստորագրությամբ հաստատված տեղեկատվություն: Համադրման գործընթացում հայտնաբերված անհամապատասխանությունների պարզաբանման համար Անկախ Ադմինիստրատորի կողմից հեռախոսի միջոցով կապ է հաստատվել միայն ընկերությունների հետ:

Սույն զեկույցի պատրաստման շրջանակներում տվյալների հավաքագրման գործընթացում առկա են եղել որոշակի խնդիրներ՝ մասնավորապես, որոշ ընկերությունների և պետական մարմինների կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրապարակային հաշվետվություններ<sup>141</sup>, Անկախ Ադմինիստրատորը չի կարողացել կապ հաստատել ընկերության հետ և համադրման շրջանակներում

<sup>138</sup> [MSG\\_meeting\\_minute\\_12\\_06\\_2017.pdf \(eiti.am\)](#)

<sup>139</sup> <https://reports.eiti.am/hy/>

<sup>140</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=132674>

<sup>141</sup> Պետական մարմինների կողմից նշվել է, որ «Մարջան Մայնինգ Քոնֆանի» ՍՊԸ-ի և «Պարամունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի վերաբերյալ հրապարակային հաշվետվությունների ներկայացման պաշտոնական հարցում չի կատարվել ԱՃԹՆ-ի կողմից:

ընկերություններից տեղեկատվության ստացման ժամկետն անցել է 5 օրվա ժամկետից: Չնայած նշված խնդիրներին՝ զեկույցի պատրաստման համար անհրաժեշտ տեղեկությունը հնարավոր է եղել ստանալ ԱՃԹՆ քարտուղարության հետ համագործակցելով՝ վերջինիս կողմից պատշաճ կազմակերպված աշխատանքների շնորհիվ:

### 7.1.5. Տվյալների ապագրեգացման մակարդակը (պահանջ 4.7)

#### «Ծրագիր» եզրույթի սահմանումը

Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.7 պահանջի դրույթների՝ անհրաժեշտ է, որ ԱՃԹՆ-ի տվյալներն ապագրեգացվեն՝ ըստ առանձին նախագծի, ընկերության, պետական կազմակերպության և եկամտային հոսքի:

Ծրագիրը սահմանվում է որպես գործառնական գործողություններ, որոնք ղեկավարվում են մեկ պայմանագրով, լիցենզիայով, վարձակալության, կոնցեսիոն կամ նույնպիսի իրավական համաձայնագրով և հիմք են հանդիսանում կառավարության հանդեպ վճարման պարտավորությունների համար: Այդուհանդերձ, եթե նման մեկից ավելի պայմանագրեր էապես փոխկապակցված են, ապա բազմաշահառու խումբը պետք է հստակորեն որոշի և փաստաթղթավորի, թե որ դեպքերն են համարվում մեկ ծրագիր:

ԲՇԽ-ի 2024թ. մարտի 28-ի որոշման<sup>142</sup> համաձայն՝ 2022թ. ազգային զեկույցի շրջանակներում որպես ծրագիր պետք է դիտարկվի մեկ ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը: 2022թ. համար կազմվող զեկույցում այն բոլոր ֆինանսական հոսքերը, որոնք հնարավոր է ներկայացնել արդյունահանման թույլտվությունների մակարդակով, պետք է ներկայացվեն հենց այդ մակարդակում՝ հստակ նշում կատարելով այդ մասին:

Ներկայումս ՀՀ-ում գործող հաշվետվողականության համակարգը, մասնավորապես հարկային հաշվարկների լրացման պահանջները, չեն կարող ապահովել ծրագրային մակարդակով հաշվետվողականության ապահովումը:

Այսպիսով՝ Հայաստանում գործող հաշվետվողականության մակարդակը փաստացի թույլ չի տալիս իրականացնել առանձնացված հաշվետվողականության ապահովում ծրագրային մակարդակում այն պարագայում, երբ ընկերությունն իրականացնում է հանքարդյունահանման գործունեությունից բացի այլ գործունեություն: 2022թ. համար հաշվետու 24 ընկերություններից 23-ն իրականացնում են միայն մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման գործունեություն:

Բացառություն է «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն, որը հանքարդյունահանման գործունեությունից բացի ներգրավված է նաև այլ ձեռնարկատիրական գործունեության մեջ: Այնուամենայնիվ, ընկերությունը հաշվետու տարվա ընթացքում չունի հաշվարկված ոռոյալթի, ինչը նշանակում է, որ ակտիվ արդյունահանում չի իրականացրել, հետևաբար ծրագրային մակարդակի ապագրեգացման անհնարինությունն էական խոչընդոտ չի կարող հանդիսանալ հետագա աշխատանքների համար:

### 7.2. Տվյալների որակը և որակի ապահովումը (պահանջ 4.9)

Սույն զեկույցի 1.3 կետով մանրամասն ներկայացված են ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացվող տվյալների արժանահավատությունն ապահովող գործընթացները:

Ընդգծելով, որ Անկախ Ադմինիստրատորի կողմից Հայաստանի 2022 թվականի համար ԱՃԹՆ առկա տվյալների վերլուծությունը և համադրումը իրենից չի ներկայացնում այդ տվյալների աուդիտ, միաժամանակ Անկախ Ադմինիստրատորը հաշվի է առել, որ Հայաստանի ԲՇԽ-ն իր 28.03.2023թ.

<sup>142</sup> [eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents](http://eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents)

ընդունված որոշման մեջ ամրագրվել է, որ հաշվետվություններում ներկայացվող տվյալների հուսալիությունն ու ճշգրտությունը հավաստիացնելու նպատակով հրապարակային հաշվետվությունները պետք է վավերացվեն ընկերության ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի և պետական մարմնի բարձրաստիճան պաշտոնյայի կամ իր տեղակալի էլեկտրոնային ստորագրությամբ:

Հաշվետվությունները ստորագրողներ են հանդիսանում՝

